


ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ»

ՄԱՏԵՆԱՇԱՐ

*Handwritten signature*



ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԱՆ

ԱՐՁԱԿ ԷԶԵՐ  
ԵՒ  
ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ



Փ Ա Ր Ի Զ

1937



1929ի աշնան էր, որ խումբ մը մտաւորականներ հիւմը դրին *Նահատակ Գրադէտներու Բարեկամներ* հրատարակչական ընկերութեան, նպատակ ունենալով հաւաքել եւ հրատարակութեան տալ արեւմտահայ նահատակ կամ մեռած գրագէտներուն երկերը:

Արդէն կը քեւակոխեմք մեր գոյութեան եօթներորդ տարին, եւ հակառակ տնտեսական տագնապին, ուրախ ենք յայտարարելու, որ կրցեր ենք հրատարակել արդէն ՏԱՍԸ գեղեցիկ եւ ընտրուած հատորներ, իրականացնելով մեր մատենաշարին առաջին շարքը:

Պատրաստ դրամագլուխով մը չէր, որ գործի ձեռնարկեցինք: Շնորհիւ հիմնադիրներու աննահանջ եւ անձնուէր գործունէութեան, ինչպէս նաև քանի մը նուիրատուներու եւ հաւատարիմ ընթերցողներու համակրութեան, հրատարակչական այս գործը գաղութահայ կեանքին մէջ անհրաժեշտ ձեռնարկ մը դարձուցինք: Պէտք ունինք սակայն նոր օժանդակողներու եւ համակիր ընթերցողներու, այս գեղեցիկ մատենաշարը շարունակելու համար:

Կը հաւատամք որ այս կերպով մեր նահատակ գրագէտներուն յիշատակը յարգած ու յակերժացուցած պիտի ըլլանք, իբրեւ նուիրական պարտականութիւն:

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ս. Վրացեան, Մկրտիչ Պարսամեան,


ԲԺ. Լ. Գրիգորեան, Շ. Նարդունի, Կ. Սասունի

---

*Այս հատորը նուէր ստացող թերթերէն կը խնդրենք արտասպէլ այս կոչը:*

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ  
ԵՒ  
ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ





ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Handwritten text in an oval stamp, likely a library or archival mark, containing illegible characters.

« ՆԱՀԱՅԱԿ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ »

ՄԱՏԵՆԱՇԱՐ - ԹԻԻ 10

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

ԱՐՁԱԿ ԷԶԵՐ  
ԵՒ  
ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

A II  
53744



PRINTED IN FRANCE

Փ Ա Ր Ի Զ

1937



Այս գիրքին տպագրուած է 100 օրինակ  
մասնաւոր վէլէն թուղթի վրայ,  
թուագրուած 1 — 100:



PRINTED IN FRANCE

Փ Լ Է Բ Յ

1 9 3 7

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ	9
1.- ԳԵՐԹՈՒԱԾՆԵՐ	26
Հարցուկը, Գերբողը ( <i>«Լըուած Քնար»</i> )	26
Գարնանային երազանք	27
Տրամուրեան Անդրին	29
Միանձնուհին	30
Յուպոպ թռչուն (Աւանդակէպ)	32
Ընթերցողին ( <i>«Նրկունք»</i> )	34
Նուէր	35
Առաջին սէր	36
Գերագոյն տօնը	37
Ամառ գիշեր ( <i>«Նոր Քնար»</i> )	38
Քայքայում	39
Իմ այգիս	40
Կարօտներս	41
Ա. Բասիաին ներքեւ	42
Այսպէս, կեանքին ...	43
Զմեռուան հովուերգութիւն	44
Երկրախո	45
Խանութպան մը	46

2.- ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ	49
Եղիա Տէմիրնիպաշեան	49
Գալուստ Կոստանդեան	66
Մկրտիչ Անէմեան	75
Յովհաննէս Գազանեան	86
3.- ԳԻՐՔԵՐ ՈՒ ԴԷՄՔԵՐ	94
Ինտրա եւ իր «Ներաշխարհ»ը	94
«Վերածննդ Հայրենիքը եւ մեր դերը»	101
«Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը»	111
4.- ՎԱՂՈՒԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ	119
«Մասիս»ի հարցարանին շուրջ	122
«Մասիս»ի հարցարանին շուրջ	124
Գրական խնդիրը եւ Ռէթէոս Էֆ. Պէրպէրեան	128
Եզրակացութիւն	138
5.- ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ (Անտիպ էջեր)	143
Գրականութիւն եւ Գեղարուեստ	159
Մոլիեր եւ Մալսր	171
Թատրուումներ	186



## ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ծնած է Մալխարա 3/15 Հոկտ. 1873ին: Մալխարան Ռոտոսթոյի հիւսիսարեւմտակողմը, բլուրի մը կողին վրայ, շատ մաքուր օդով եւ ջուրով, գեղեցիկ ու բերրի դաշտերով եւ տպաւորիչ տեսարաններով գիւղաքաղաք մըն էր: Հայերը հոն հաստատուած էին աւելի քան երկու հարիւր տարիէ ի վեր եւ տիրացած տնտեսական շատ լաւ դիրքերու: Արհեստները եւ վաճառականութիւնը իրենց ձեռքն էին մեծ մասով: Արտաշէս Յարութիւնեանի նախահայրերէն Սերովբէ Յարութիւնեան 1825 թուականներուն նշանակելի դիրք մը գրաւած էր Մալխարայի մէջ շնորհիւ իր նրբամտութեան եւ խոհեմութեան: Անոր մէկ որդին Արտաշէսի մեծ հայրը, Պօղոս աղա Սերովբեան, աւելի նշանաւոր եղած է: Օժտուած էր իմացական արտակարգ կարողութիւններով եւ Քիլիքական ու բարոյական բարձր յատկութիւններով: Անոր դաւակը, Յարութիւն Պօղոսեան, ինքն եւս նահատակ իր զաւկին Արտաշէսի պէս, օժտուած էր ազնիւ յատկութիւններով, եւ յարգուած էր ամէնուն կողմէ: Իր մտաւորական կարողութիւններով եւ բացառիկ ձիրքերով առաջինը կ'ըլլայ Արտաշէսի վրայ ներգործող եւ անոր ուղղութիւն տուող:

Արտաշէսի աւագանի անունն էր Պօղոս, մեծ հօրը անունով: Արտաշէս անունը ստացած է վարժարանին մէջ՝ ուր սովորութիւն կար տղոց անունները փոխելու հայ պատմական անուններու: Ծնած ատեն խիստ փոքր եղած է: Քիչ ատենէն սակայն ստացած է Ֆիլիքական շատ առօրէ վիճակ մը եւ դարձած շատ անհանդարտ մանուկ մը: Ինը ամսու եղած ատեն արդէն սկսած է քալել ու խօսիլ: Այս կանխահասութիւնը ո՛չ մէկ կերպով վնասած է իր առողջութեան՝ որ եղած է խիստ կանոնաւոր: Ամբողջ մանկութիւնը անցուցած է արտակարգօրէն անառակ տղու մը համբաւը թողլով: Իր չյազեցող հետաքրքրութիւնը շուրջինները ամէն վայրկեան նեղելու աստիճան հարցասէր ըրած է զինքը: Բայց հայրը, իր գիտակից հօր ծանօթ համբերատարութեամբ ջանացած է օգտակար դարձնել իրեն այդ բանը եւ ուղղութիւն տուած է անոր հետաքրքրութեան: Արտաշէս եօթը տարեկանին սկսած է յաճախել գիւղին նախակրթարանը՝ որ այն ատեն փայլուն վիճակ չունէր: Աւելի վերջ Պէրպէրեան վարժարանէն կիսաւարտ տեղացի ուսուցիչի մը խնամքին տակ մնացած է մէկ երկու տարի եւ սկսած է իր մէջ ուսման ճաշակը զարգանալ: Բայց ինքը՝ այն ատեն ունենալով տկար յիշողութիւն, նկատուած է իբր միջակ կարողութեամբ աշակերտ մը: Ծոյլ չէ եղած բնաւ, միշտ շատ աշխատած է իր դասերուն, բայց երբեք չէ յաջողած դասարանին առաջինը ըլլալու: Իր դժբախտութենէն համայնքին հակամարտութիւնները թոյլ տուած չեն որ վարժարանը միեւնոյն ուղղութեան վրայ մնայ. յաճախ փոխուած են ուսուցիչները, այնպէս որ Արտաշէս չէ կրցած նախակրթարանի կանոնաւոր ընթացքի մը հետեւիլ եւ զայն աւարտել: Նախ քան վարժարանը թողուլը արդէն բանաս-

տեղծութիւն դրելու մարմաջը սկսած է տոչորել զինքը , միայն թէ վստահ չէր ինքն իրեն վրայ եւ յաճախ կ'ըսէր հօրը . «Ինչո՞ւ ես չեմ կրնար գրել , հայրի՛կ» . ու հայրը կը պատասխանէր վստահութեամբ . «Պիտի կըրնա՛ս , տղա՛ս , աշխատէ՛» : Ու Արտաշէս կ'աշխատէր : Տպաւորութիւնները եւ զգացումները կ'եռային իր մէջ , բայց չէր յաջողեր դանոնք ո՛չ արձակ ո՛չ ոտանաւոր գրի առնելու :

Գարնան բանաստեղծական օր մը հայրը , թերեւ մասնաւոր դիտումով , իր հետ կ'առնէ Արտաշէսը եւ հօրեղբօրը փոքրիկները եւ իր մօտակայ այգին կը տանի կեռաս ուտելու համար : Ճամբան առիթը չի փախցնել օգտակար թելադրութիւններ ընելու իր զաւկին : Կը հասնին այգի . կեռասները կարմրած էին եւ ծառերը ղեղեցկօրէն զարդարուած : Տղոց ուրախութիւնն ու կայտանքը չափ չունէին : Արտաշէս ամէնէն երէցը , դեռ տասնըջորս տարեկան , կը մասնակցի հրճուանքին եւ ծառը մագլցելով տղոց հասած կեռասներ կը նետէ որ ուտեն : Երբ ամէնքը կը յագենան , ծառէն վար կ'էջնէ ու կը նստի հօրը քով՝ որ արդէն իրեն կը սպասէր : Հոն Արտաշէս դարձեալ կը կրկնէ իր սեւեռեալ մտածումը թէ ինչո՞ւ ինք չի կրնար գրել : Հայրը որ Բնութենէն ու պահէն ներշնչուած էր արդէն՝ կը քաջալերէ եւ թուղթ ու մատիտ տալով իրեն՝ կ'ըսէ թէ միասին ոտանաւոր մը պիտի գրեն կեռասին վրայ : Առաջին տողը հայրը տուն կուտայ , յաջորդները հօրը թելադրող հարցումներուն շնորհիւ ինք կ'ամբողջացնէ յաջողութեամբ : Գրականութեան այս ինքնատիպ ու տաւորիչ դասը վերիվայր կը շրջէ Արտաշէսի հոգին : Ուրախութիւնը անսահման էր . կրնա՛յ եղեր գրել : Այդիէն վերադարձին հրճուանքով կուգայ եղբայրը գտնել եւ

մասնակից ընել զինքը իր անսահման երջանկութեան: Կեռասին ոտանաւորին յաջորդեցին ինքնազիր շատ ոտանաւորներ: Աւելի վերջ՝ երբ ա՛լ վարժարանը թողեր էր, կը սկսէր իր ոտանաւորները հրատարակել «Բարաստան Մանկանց»ի մէջ: Իր առաջին ծածկանունը եղած է «Մանիչակ» զոր շատ քիչ ատեն գործածած է:

Բայց Արտաշէս ոտանաւոր դրելով չէր բաւականանար, կը կարդար, անվերջ կը կարդար, վասնզի զարգանալու իր ներքին մղումը անզուսպ էր ու կը մղէր զինքը մոռնալու ամէն ինչ եւ անձնատուր ըլլալու ընթերցումի: Վարժարանին մէջ Ֆրանսերէն լեզուի հազիւ թէ տարերքը ուսած էր, բայց յամառած էր զայն բաւ սորվելու, ինքնօգնութեամբ, զգալով թէ անիկա մեծագոյն միջոցը պիտի ըլլար իր զարգացման օգնելու: Հայրը հաճոյքով կը տեսնէր իր զաւկին յառաջընթացութիւնը եւ թոյլ տուած էր անոր որ դէն այն բոլոր գիրքերը՝ զորս ան կը փափաքէր ունենալ: Երբ դեռ քսան տարու չկար՝ արդէն իսկ բարձր ձգտումները մեծապէս զօրացած էին իր մէջ:

Արտաշէսին արդէն իսկ անհանգիստ միտքը նոր հորիզոններու կը բաղձար: Այդ հորիզոնները փնտռելու համար չէր կրնար ան Պոլիս երթալ կամ ուրիշ որ եւ է զարգացած կեդրոն, վասնզի իրեն նմաններուն արգելուած էր նահանգին սահմանէն դուրս ելլել:

\*\*

Արտաշէսի բանաստեղծական խառնուածքին համար փոքր գրգիռ մը չէր նաեւ իր առաջին սէրը: Իրօք իր առաջին երկու հատորներուն մէջ բնութենապաշտ յուզումը խառնուած է սիրուած էակի մը առթած գորովալի զգացման այնպիսի վերացական եւ մաքուր արտայայտութեամբ մը, որ իր քննադատները իր Լեռնած

Քնարին առիթով Վճռեցին թէ արտայայտուած ու քնն-  
շօրէն երդուած այդ դորովը ուղղուած էր երեւակայա-  
կան էակի մը: Այդ քննադատները թէեւ բոլորովին կը  
սխալէին, բայց ինքը բնաւ չհերքեց այդ սխալը: Եւ սա-  
կայն այդ էակը գոյութիւն ունեցած է յանձին Տիկնանց  
Վարժարանէն վկայուած օրիորդի մը՝ որ ուսուցչուհի  
էր Մալկարայի աղջկանց վարժարանին մէջ: «Այդ մա-  
քուր սիրոյն մասին ան ոչ մէկ բան ըսած է ինծի, կը  
դրէ իր եղբայրը, Վահան Յարութիւնեան, բայց այն  
ատեն ես դեռ պատանի, պատահաբար կարդացած եմ  
իր մէկ նամակը ուղղուած այդ օրիորդին՝ որ կը փո-  
խադարձէր այդ սէրը, դժբախտ սէր մը՝ որ մեր ծնող-  
քին ընդդիմութեամբ խորտակուեցաւ շուտով: Մոռցա՞ւ  
դայն: Հակառակ իր մոռնալու ակնյայտնի կամքին՝ ես  
չեմ հաւատար որ այդ առաջին սէրը առանց հետքի ան-  
ցած ըլլայ երբեք անոր հողիին վրայէն եւ կը կարծեմ  
թէ այն լքումները եւ տխրութիւնները՝ որոնք կ'արտա-  
յայտուին դէթ իր առաջին երկու հատորներուն մէջ,  
արդիւնքն են այն մաքառումներուն՝ զորս դործ կը դը-  
նէր ան կորսուած սիրոյն իրեն թողած ցաւերուն դէմ:  
Ու արգարեւ սէրը կորսուած էր անյոյս, վասն զի  
օրիորդը շուտով հեռացաւ Մալկարայէն եւ ա'լ մեր տան  
մէջ ոչ ոք խօսեցաւ իր մասին: Ես չեմ գիտեր թէ այդ  
օրիորդը ի'նչ եղաւ, այսօր կ'ապրի՞ թէ ոչ: Ատոր հա-  
մար կը զգուշանամ անունը տալէ, ինչ որ արդէն մեծ  
չահեկանութիւն մը պիտի չաւելցնէր այս կենսադր-  
կանին վրայ: Միայն թէ եթէ ողջ է ու պահած այն  
նամակները՝ զորս ընդունած է Արտաշէսէն, կ'արժէ որ  
զանոնք ինծի կամ իր ընտրած մէկ ուրիշին վստահի,  
վասն զի կը յուսամ թէ դրական գեղեցիկ հատուածներ  
պարունակեն անոնք»:



Արտաշէս «Բուրաստան Մանկանց»էն յետոյ աշխատակցած է նաեւ ուրիշ թերթերու : Բայց առաջին անգամ ան աչքի զարկած է Արփիարի «Հայրենիք»ին մէջ իր հրատարակած գաւառական պատկերներով : Առաջին յօդուածին տակ՝ փոխանակ իր անունին՝ ան զարմացումով տեսաւ թէ «Կարօ» ծածկանունը գրուած էր : Արփիարի կնքահայրութեամբ իրեն նուիրուած այս ծածկանունը հաճելի թուեցաւ իրեն եւ երկար ատեն գործածեց զայն, մինչեւ որ բոլոր հասնող, գրիչ գործածելու կարող Կարապետները սկսան Կարօ ստորագրել, գուցէ իրաւամբ եւ այսպէսով շփոթութիւն առաջ բերել : Այդ ատենէն ի վեր ան միշտ գործածեց իր բուն անունը : «Հայրենիք»ի մէջ էր որ Արփիար այդ օրերուն զնահատական ջերմ խօսքերով Մարկարացի Կարոյին եւ Թլկատինցիին անունները կը յիշատակէր իբր գաւառացի ինքնատիպ գրողներ՝ որոնք տոհմային հարազատ դիմագիծ ունեցող եւ իրապաշտ գրականութիւն մը կը մշակէին : Այդ յիշատակութենէն յետոյ էր, որ Թլկատինցին, այդ խիստ ինքնատիպ ու մեծ գրագէտը, կապուեցաւ Արտաշէսի հետ՝ զոր իր «լուսադբար»ը կը կոչէր : Արդարեւ լոյսի, գրականութեան նոր ու լուսազիծ ուղիի մը երկու ռահօյրաներն էին անոնք, ուղիի մը որուն պաշտպանն ու ձեւաբանողը պիտի ըլլար աւելի ուշ Արտաշէսը իր Վաղուան Գրականութեան մասին հրատարակած յօդուածներով : Անոնց երեւցած ատեն՝ արդէն իսկ երեւան եկած էին Մշոյ Գեղամը, Զարգարեանը, Գաղանձեանը եւ ուրիշներ :

Այլ եւս մեծ չափով սկսած էր արտադրել ան եւ

իր մտքի արտադրութիւնները հրատարակել պոլսական գրեթէ բոլոր թերթերուն եւ պարբերականներուն, ինչպէս նաեւ Զմիւռնիայի «Արեւելեան Մամուլ»ին մէջ : Միւս կողմէ ընկրուզուած էր Փրանսական գրականութեան մէջ՝ զոր կը ճանչնար խորապէս : Պոլսոյ ջարդէն յետոյ մեր երիտասարդ գրողներէն շատեր անցած էին Եւրոպա, իսկ Արտաշէսին եւ նմաններուն արգելուած էր նահանգի սահմաններէն դուրս ելլել : Այս սեղմումը արգելք չէր եղած սակայն, որ ան դադրեցնէր արտասահմանի հետ իր յարաբերութիւնները : Կը շարունակէր ստանալ «Մերֆիւր տը Ֆրանս» գրական լուրջ հանդէսը, երիտասարդ սէնպոլիստներու ժամադրաւայր «Լա Փիլում» պարբերականը եւ Լէոն Պազալօթէթի Լը Մակագին Էնթերնասիոնալը : Այս վեջինին եւ սակելի վերջ Լ'Անֆլօի մէջ ան հրատարակեց հայ գրականութեան վրայ քանի մը յօդուածներ : Այսպէսով ան հիացիկ համակրութիւնն ու բարեկամութիւնը շահեցաւ Պազալօթէթի, այդ հայասէր հեղինակին :

Անոր արտասահմանի հետ այս յարաբերութիւնները՝ որոնցմէ ոմանք տեղի կ'ունենային Ռոտոսթոյի օտար հիւպատոսներէն մէկին բարեացակամ միջնորդութեամբ, համիտեան շրջանին՝ խիստ վտանգաւոր էին : Բայց Մալկարայի մէջ կար ծերունի գայմագամ մը, Սալիհ Միւնիւր պէյ, որ Արտաշէսի հօրը մտերիմ բարեկամը ցոյց տուած էր ինքզինքը եւ բարեացակամ վերաբերում ունէր անոնց հանդէպ : Այդ բարեացակամութեան ապացոյցը տուաւ գէթ անգամ մը : Սիսակ (Սուրէն Պարթեւեան) Մանչէսթըրի մէջ կը հրատարակէր «Վազուման Չայնը» խորագրով հանդէս մը : Արտաշէս դադարաբար կ'աշխատակցէր անոր : Սիսակ թէ՛ թերթ գրկեր էր եւ թէ՛ գիրք-նամակ մը եւ իր լուսա-

նկարը՝ որոնք իշխանութեանց ուշադրութիւնը գրաւած  
ըլլալով վար դրուեր էին: Անոնք կրնային Արտաշէսին  
կորստեան պատճառ դառնալ, բայց գայմագաւրը գա-  
նոնք իր քով վար դրեր էր եւ Մալկարայէն վերջնակա-  
նապէս հեռանալէ առաջ հօրը յանձներ էր: Այսպէս՝  
հալածանքէ աւելի կամ նուազ հեռու մնաց ան, թէեւ  
քիչ չէին այն թուրքերը՝ որոնք զինքը կը նկատէին իբր  
վտանգաւոր մարդ:

Ինք շատ փոյթ չէր ըներ այս բոլորը եւ կը շարու-  
նակէր իր անզուսպ գրասէրի փափաքներուն գոհացում  
տալ բոլոր հնարաւոր միջոցներով: Կը թղթակցէր  
Վերհարքնի հետ՝ որուն վրայ կը հիանար, եւ որմէ  
ազգուելով Պոլսահայոց մէջ առաջին անգամ ըլլալով  
կը փորձէր ազատ ոտանաւորը արտակարգ յաջողու-  
թեամբ: Կը գրէր նաեւ Ռէմի տը Կուրմոնի, որուն հե-  
տեւելու ճգտումներ ունէր: Կը շարունակէր նաեւ զաղտ-  
նարար ստանալ ընկերվարական թերթեր եւ գրքոյկներ:  
Այդ միջոցներուն ան դեռ ճշգրտ չէր իր ընկերային դա-  
ւանանքը, ուսումնասիրելու եւ փնտռելու վրայ էր:  
Կիւսթափ Լը Պոնի բազմաթիւ հեղինակութիւններուն  
ընթերցումը եւ Ռէմի տը Կուրմոնի միտքերը աւելի  
պայծառացուցին իր դատումները, այնպէս որ ան ճըշ-  
դեց իր հակումը որ էր դէպի անհատապաշտութիւն  
(էնտիվիտիւալիզմ) եւ որ կը յանդէր իր մտքին մէջ  
անիշխանական թէոռիին: Ասոր համար, գուցէ, ինքը  
ըլլալով հանդերձ հայրենասէր հայ մը, Սահմանադրու-  
թեան հռչակումէն առաջ թէ վերջը մնաց անկախ ամէն  
հայ քաղաքական կուսակցութենէ, չծածկելով սակայն  
իր համակրութիւնը Դաշնակցութեան, որուն մէջ էին  
բոլոր իր ընտրեալ եւ շատ սիրած բարեկամները, Զար-  
դարեան, Գեղամ Բարսեղեան, Շ. Միսաքեան եւն.:



A 11  
53744

Ժիւլ Լըմէթրի եւ մանաւանդ Ռէմի տը Կուրմոնի  
ընթերցումները իր մէջ երեւան հանեցին գրական քըն-  
նադատի իր հակումները: Ինք արդէն կանուխէն մեծա-  
պէս կը շահագրգռուէր գրական ամէն երեւոյթով եւ  
կը գծէր դէմքեր, բայց իր դատելու ինքնատիպ եղա-  
նակը ճշգուած է աւելի վերջ: Իր գրական քննադատի  
հանրածանօթ համբաւը նուիրագործուեցաւ աւելի վերջ  
երբ Բիւզանդիոնի, Ագատամարտի, Շանթի եւ ուրիշ  
թերթերու մէջ կոչուեցաւ հրատարակելու իր հեղինա-  
կաւոր քննադատական յօդուածները ժամանակակից  
բոլոր հրատարակութիւններու մասին: Անիկա երբեմն  
միայն անողորքէն հեղնող էր անտանելի միջակութիւն-  
ներու հանդէպ՝ հոգ չէ թէ անոնք անիրաւօրէն համ-  
բաւի տիրացած ըլլային, սակայն մեծ եռանդ եւ  
գիտակցութիւն կը դնէր իրական արժէքներ վեր հանե-  
լու համար, ինչպէս օրինակ այն խանդավառութիւնը՝  
գոր ցոյց տուաւ Միսաք Մեծարենցի յայտնութեան ա-  
ռիթով: Գ. Բարսեղեան՝ որ միշտ մնաց իր հիացիկ  
բարեկամը, իրեն զրկած էր Մեծարենցի ձեռագիրնե-  
րէն՝ նախ քան անոր առաջին հատորին հրատարակու-  
թիւնը: Արտաչէս յայտնեց իր անվերապահ հիացումը  
եւ, եթէ չեմ սխալիր, գրեց նաեւ հիւանդ բանաստեղ-  
ծին: Անոր առաջին հատորին հրատարակութենէն վերջ  
հրապարակով ալ արտայայտեց իր գնահատանքը, ինչ  
որ ազդեցութիւն ունեցաւ Մեծարենցի բանաստեղծա-  
կան բարձր արժանիքի ծանօթացման տեսակէտէն:

Սահմանադրութեան հռչակման տարին ան ի յայտ  
բերաւ նաեւ իր հօրմէն ժառանգած բեմբասացի կարո-  
ղութիւն մը: Իր ձայնը յտակ եւ հաճելի էր, արտայայ-  
տութիւնը հանդարտ եւ ինքնավստահ՝ առանց ցրտու-  
թեան, շարժումները ժուժկալ, բայց տեղին ու առանց



ուռուցիկութեան, իսկ պարբերութիւնները քերականական մեծ ճշգրութեամբ կը յաջորդէին իրարու այնպէս՝ ինչպէս եթէ գրուած ըլլային խնամքով: Ունեղընդէրը այս փոքրահասակ այլ զօրաւոր, համեստ այլ ինքնավստահ, պարզ այլ ազդեցիկ մարդուն շրթունքէն կը կախուէր հմայուելով անոր բարձր բայց ժողովրդականացած միտքերէն ու նաեւ նայուածքէն՝ որուն կայծկլտող փայլը կը գերէր, կը հպատակեցնէր:

Արտաշէս 1903էն ի վեր հետեւած էր նաեւ հոգեկան գիտութիւններու եւ մասնաւորաբար քննածութեան: Յովհաննէս Գազանճեան՝ որ դաւառական գրականութեան ջատագովներէն ըլլալով շատոնց կը թղթակցէր Արտաշէսի հետ, իրեն կը զրէր նաեւ իր քննածական կիսատ յաջողութիւններուն մասին: Արտաշէսն էր որ դայն դրաւ գործնական ուղղութեան մէջ: Աւելի վերջ՝ Արտաշէս Փրանսերէնի թարգմանեց ofիլիթիզմի մասին անոր մէկ գործը՝ որ չենք դիտեր թէ հրատարակուեցա՞ւ թէ ոչ: Այս մարդին մէջ Արտաշէսի ձեռք բերած արտակարգ կարողութիւնները՝ առաւելապէս կը դործածէր ինքնաթեւադրութեամբ իր անձին կատարելագործումին: Եւ փորձը ցոյց կուտար թէ ան օրէ օր աւելի տէր կը դառնար ինքզինքին՝ որքան հոգեկան՝ նոյնքան նաեւ Փիլիքական հաւասարալիզութեան տեսակէտով: Անիկա կարող էր իր կամքին ուժով նոյնիսկ անզգայութիւն առաջ բերել իր մարմինին որ եւ է մէկ կէտին վրայ եւ հոն միսել ասեղ մը՝ առանց ցաւ զգալու: Յիշելու համար միայն մէկ պարագայ, ինչպէս կը պատմեն Նիկոմիդիոյ եկեղեցիին մէջ իրեն հետ բանտարկուողները, ան վերջին օրերուն ուզած է մոռնալ թէ ունի մայր, քոյր, եղբայր՝ զորս այնքան շատ կը սիրէր, ուզած է հեռու պահել ինքզինքը ամէն զգայա-

վառութենէ, որպէսզի իր տառապանքը նուազեցնէ եւ դադարէ է դահիճներուն հետ առանց յուզումի:

Արտաշէս Յարութիւնեան կը հետաքրքրուէր նաեւ շատ բարդ ու հոգեբանական խոր հմտութիւն պահանջող գիտութեամբ մը, գրալուծութեան (կրաֆօլոմփի) ուսումնասիրութեամբ: Գրալուծութիւնը հիմնուած ըլլալով հոգեկան վիճակներու մարդկային շարժումներու վրայ ունեցած անդրադարձումին եւ հետեւաբար անոնց նաեւ գիրերու վրայ պատկերացումին իրողութեան վրայ, գրական գիտութիւն մըն է որ կը պահանջէ միանգամայն հոգեբանական հմտութիւն եւ մեծ թափանցողութիւն: Երկար ուսումնասիրութիւններէ, փորձերէ եւ գրալուծութեան հիմնադիրին՝ Քրէփիէօ Ժամէնի հետ հրահանգիչ թղթակցութիւններէ յետոյ՝ Արտաշէս կատարելապէս իւրացուց այդ գիտութիւնը՝ որ իրեն առիթը կուտար հոգեբանական իր խոր հմտութիւնը մարդելու շարունակ: Ան գիրերու վրայէն նկարագիրներ կը վերլուծէր մեծ ու անակնկալ ճշդութեամբ:

Ազդային շրջանակի մէջ Արտաշէսի գործունէութիւնը եղած է քանի անգամներ թաղականութեան կամ հողարարձութեան մասնակցիլ: Այդ պաշտօններուն մէջ ան ջանացած է օգտակար ըլլալ, բայց յայտնապէս ախորժ չէր զգար հանրային պաշտօններէ եւ շուտով կը հեռանար անոնցմէ: Ինք կը սիրէր ապրիլ մեկուսի, որպէսզի կարենար ընկղմիլ իր գրական եւ իմաստասիրական ընթերցումներուն եւ գործունէութեան մէջ: Բայց եւ այնպէս կը զբաղէր վարժարանական հարցերով, կը գնէր ու կը կարդար մանկավարժական գիրքեր եւն. եւ մօտէն կը յարաբերուէր վարժարանի ուսուցիչներէն արժանաւորագոյններուն հետ: Մալկարան հինէն ի վեր նախանձախնդիր էր ուսուցիչներու ընտ-

րութեան մէջ եւ շատ լաւ ուսուցիչներ ունեցած էր .  
Վ. Թորոսեանը, Ս. Սրենցը, Տ. Չրաքեանը եւ ամէնէն  
վերջ Քիւֆէճեանը (Օշական)՝ որ 1911ին տնօրէն կար-  
գուեցաւ Մալկարայի վարժարանին : Այն ատեն Արտա-  
շէս իր գրական համբաւի լրումին մէջ էր : Քիւֆէճեան  
գեռ հազիւ ըրած էր իր նախափորձերը : Ինք արդէն օժ-  
տուած նուրբ դիտողութեամբ եւ գրական ինքնատպու-  
թեամբ՝ կը փնտռէր իր ճամբան՝ զոր գեռ չէր գտած :  
Իր ամենօրեայ երկարատեւ շփումները Արտաշէսի ա-  
ռաջնորդող գաղափարներուն հետ, միացած այն գրա-  
կան, քննադատական եւ իմաստասիրական ընթերցում-  
ներուն՝ որոնց Արտաշէս կը մղէր զինքը, հետզհետէ  
կազմեցին իր մէջ դրագէտը՝ որ քիչ յետոյ երեւան  
պիտի դար իր բովանդակ ինքնատպութեան մէջ : Անոր  
հռնարհները որ դրուած են մեծ մասամբ այդ թուա-  
կաններուն՝ այդ խորագիրը ստացած են Արտաշէսի  
թերադրութեամբ :

Պալքանեան պատերազմէն յետոյ 1912 - 1913 շատ  
գժուարութիւններ կրելով, Արտաշէս իր ընտանիքին  
հետ կը հաստատուի Սկիւտար, կը դառնայ Իւնիօն  
տը Բառի ապահովագրական ընկերութեան քննիչը ու  
կը մեկնի գաւառները, Էսկիշէհիւր, Էրէյլի, Պօր, Կե-  
սարիա եւ աւելի վերջը Էնկիւրի :

Մեծ պատերազմի յայտարարութենէն վերջ՝ անկա-  
րելի դարձաւ Արտաշէսին իր ապահովագրական քըն-  
նիչի պաշտօնը շարունակել, վասնզի ներքին գաւառներ  
ճամբորդելու մեծ գժուարութիւն կար եւ ընկերութիւ-  
նը որուն մօտ կ'աշխատէր, իր դործերը կը սահմանա-  
փակէր : Այն ատեն Արտաշէս ձեռնարկեց ուսուցչու-  
թեան : Անիկա այցելու ուսուցիչ եղաւ եւ դասեր ստանձ-  
նեց չորս օր Գատը-գիւղի Արամեան վարժարանին մէջ՝

որուն անօրէնն էր Հայկ Խօճասարեան, եւ ուր կը պաշտօնավարէր նաեւ Յ. Օշական: Արտաշէս դասեր ստանձնեց նաեւ Սկիւտարի Ս. Խաչ եւ Կաթողիկ Հայրերու վարժարաններուն մէջ: Ուսուցչութեամբ աւելի կը շահէր թէեւ, բայց սկիզբները գոհ չէր: Հետզհետէ սիրեց մանուկները՝ որոնք սկսած էին պաշտել զինքը: Կիրակի օրեր յաճախ Գատը-գիւղէն Սկիւտար տղոց խումբեր կուգային ծաղկեփունջերով Արտաշէսին այցելելու՝ տեսակ մը ուխտատեղի դարձնելով անոր տունը:

Թուրքիոյ զօրաշարժէն ու պատերազմի մասնակցութենէն յետոյ՝ ինչպէս բոլորին, մանաւանդ գրական ծանօթ անձերուն մտահոգութիւնը աւելցած էր:

1915 Ապրիլ 24ի առաջին ձերբակալութիւններէն դերձ մնաց Արտաշէս Յարութիւնեան: Շատ չանցած սակայն, իմացուեցաւ թէ ոստիկանութիւնը հասցէներ կը հաւաքէ: Գատը-գիւղի ուսուցիչներու կարգին Արտաշէսին ալ հասցէն առնուած էր: Կացութիւնը օրէ օր տագնապալի դառնալ կը սկսէր: Արտաշէս, իրեններուն պնդումներուն վրայ Սամաթիա տան մը մէջ կը պահուի մէկ ամիս: Օգոստոս 26/8ի կիրակի օրը, Սկիւտար կը մեկնի: Ճաշէն վերջ դուրս կ'ելլէ: Իր բացակայութեան հասցէին ապահովագրուած նամակ մը կը բերէ ցրուիչը, բայց չի յանձներ: Երկրորդ անգամ ցրուիչը նորէն կը բերէ նամակը, ընկերակցութեամբ զաղտնի ոստիկանի մը, որ ձերբակալելով Արտաշէսը, կը տանի նաւամատոյց եւ անկէ Պոլսոյ ոստիկանատունը: Յաջորդ օրը կը ձերբակալուի նաեւ հայրը:

Հայր եւ որդի կը փոխադրուին Իզմիր ու կը բանտարկուին եկեղեցիին մէջ, ահաւոր շարժարաններու ենթարկուելով, ինչպէս կը վկայեն ականատեսները:

Օգոստոս 19/1 Սեպտ.ի օրը, Իզմիտի եւ Տէրափնտի կայսրանին մէջ տեղի կ'ունենայ անոնց սպանութիւնը: Արտաշէս Յարութիւնեան 42 տարեկան էր դեռ եւ կը գտնուէր մտաւորական հասունութեան իր լրումին մէջ:

\*  
\*\*

Ա. Յարութիւնեան հրատարակած է բանաստեղծական երեք հատորներ. Լեռւած Քնար՝ որ խումբ մը երիտասարդ գրողներու նախաձեռնութեամբ եւ ծախքով հրատարակ ելաւ 1902ին, Երկուց՝ որ հրատարակուած է Արծիւ գրատան կողմէ 1906ին եւ Նոր Քնար որ հրատարակուած է իր կողմէն՝ «Շանթ» տպարանի խնամուած տպագրութեամբ 1912ին: Այս վերջին գործը՝ զոր ինք այնքան դուրդուրանքով պատրաստած է, թերեւս մեր նոր սերունդին կողմէ հազիւ ճանչցուած է: Անոր հրատարակ հանուիրը զուգադիպած է Պալքանեան պատերազմին՝ որուն յաջորդած է համաշխարհային պատերազմը: Այդ գիրքին օրինակները հազուադիւս են այսօր, վասնզի անոնք պատերազմի ու գաղթականութեան թոհուրոհերուն մէջ կորսուեցան: Նոր սերունդը բանաստեղծ Ա. Յարութիւնեանը պէտք է ճանչնայ՝ այս հատորին ընթերցումով, քանի որ նոյն իսկ հեղինակին խոստովանութեամբ եւ գիրքին խորագրին իմաստով՝ ան իր տաղանդին նորագոյն ձեւաւորումին արդիւնքն է, պատանեկան Լեռւած Քնարէն եւ երիտասարդութեան Երկուցէն յետոյ՝ ծնած միտքի եւ զգացումներու հասունութեան շրջանի մը:

Արտաշէս գրած է իր ոտանաւորները կրօնական նախանձայուզութիւն մը գործ դնելով անոնց իմաստին, լեզուին, ներդաշնակութեան եւ տաղաչափութեան մէջ: Ինչպէս եղած է, յարատեւօրէն իր անձը կատարելագործելու հետամուտ՝ նոյնպէս ջանացած է կատարե-

լազործել իր արձակն ու ոտանաւորը: Այս ձգտումն է որ զինքը ըրած է անխնայ սրբագրող մը:

Ա. Յարութիւնեան կը պաշտէր Ոսայեամը՝ որուն քառնակներէն մէկուն վերջին տողը կը կրկնէր յաճախ. «Եթէ տունը մարդ կայ, մէկ բառ բաւ է»: Ասիկա տեսակ մը նշանաբան էր իրեն համար՝ որ գրական (եւ լեզուական) շատախօսութենէ չէր ախորժեր:

Կը սիրէր մեր հին բանաստեղծութիւնները՝ շարականները՝ որոնցմէ գեղեցիկ էջերու ընդօրինակութիւններ կան իր ձեռագիրներուն մէջ: Կը սիրէր Քուչակը՝ զոր զմայլանքով կը կարդար յաճախ:

Օտար բանաստեղծներէն կը սիրէր Պոտլէուը՝ որմէ թարգմանութիւններ հրատարակած է: Բայց կը սիրէր նաև Վէրլէնը, զոր հիացիկ յափշտակութեամբ կը կարդար ու կը բացատրէր, Մալարմէն՝ հակառակ անոր խրթնութեան, Բիէր Լուիսը, Մէթէրլինկը, Վերհաունը:

Իսկ Սիւլլի Բրիւտոմը՝ զուսպ եւ խաղաղ, իմաստասէր միանգամայն յուզումով թրթռուն, իր սիրելագոյն բանաստեղծը կը թուէր ըլլալ: Կը սիրէր զայն անոր ժուժկալութեան եւ քերթուածին կատարելութեան համար՝ որուն կը ձգտէր ինք ալ յայտնապէս:

Կը սիրէր Վալթ Ուիթմէնը իր մեծվայելուչ եւ համայն մարդկութեան վրայ տարածուող սիրոյն համար:

Արձակագիրներէն՝ բացի այս նոթերու կարգին յիշուածներէն պաշտամունք մը ունէր Անաթօլ Փրանսի վրայ՝ որուն փիլիսոփայութեան վրայ կը հիանար եւ որուն անխոցելի հեզնական ժպիտը՝ իր նկարագրին շատ յարմար՝ դիւրաւ կարողացած էր իւրացնել: Վերջին տարիներուն շատ մեծ ըմբոշխնումով կը կարդար նաև Ժիւլ Ռընարը:

Արտաչէս Յարութիւնեան կատարած է նաև թարգ-

մանական աշխատութիւններ կորչին, Թուրքիոյն՝ որմէ գեղեցիկ էջերու հաւաքածոյ մը կաղմելու վրայ էր: Առաջինը «Ձայն Հայրենեաց»ի մէջ հրատարակուած՝ պատերազմէն յետոյ գրքոյկի վերածուած է Պոլիս: Երկրորդին ձեռագիրները կորսուած են: Ան թարգմանած է նաեւ «Լէ կրանտ լէժանտ տը լ'իւմանիթէ» խորագրով հատոր մը: Այդ թարգմանութեան առաջին երկու ականգավէպերը կորսուած են. կը մնան մօտաւորապէս 100 էջ: Իսկ վերջինը՝ Ֆաուստի Աւանդավէպը՝ կը մնայ կիսատ:

Վերջին տարիներուն Արտաշէս կ'ուզէր հրատարիլ գրելէ եւ յաճախ կ'ըսէր իր բարեկամներուն թէ գրականութիւն ընելն ալ ունայն է: Բայց ատիկա իր բացարձակ համոզումը ըլլալէ հետո էր: Այնպէս որ երբ Գ. Բարսեղեան, Կ. Չարեան եւ Քիւֆէճեան Մեհեանը հրատարակեցին՝ աշխատակցեցաւ այդ թերթին:

Արտաշէս իր գրածները մեծ գուրգուրանքի առարկայ կը դարձնէր ու կ'ապրէր զանոնք մինչեւ անոնց հրատարակուիլը. իսկ երբ անոնք հրատարակուէին՝ հմայաթափ կ'ըլլար ու հասարակ տեղիք կը թուէին անոնք իրեն:

Բացի քերթուածներու երեք հատորներէն, Արտաշէս Յարութիւնեան կը ճանչցուի արեւմտահայ գրականութեան մէջ իբրեւ լաւագոյն արձակագիրներէն մէկը: Ստորագրեր է Մոխիր ու Մախր, Թափառումներ ու Հակասութիւններ վերնագրով արձակ էջեր: Գրական Դիմաստուերներ՝ ժամանակակից գրական դէմքերու վերլուծման նուիրուած, Գիրքեր ու Դէմքեր եւ Գրական Քրոնիկներ՝ օրուան դէմքերուն եւ գիրքերուն շուրջ: Աշխատակցած է ժամանակակից բոլոր հանդէսներուն ու օրաթերթերուն, գործածելով նաեւ

հետեւեալ ծածկանունները . Կարօ , Մանիչակ , Ուրուա-  
կան եւ Շահէն-Կարօ :

Այս հատորին մէջ մեր ընթերցողները պիտի զը-  
նեն Գրական Դիմատուերներ, անտիպ նամակներ՝  
ուղղուած ծանօթ դրագիտուհի տիկին Չապէլ Շասյեա-  
նի , իմաստասիրական անտիպ էջեր , քննադատական է-  
ջեր ինչպէս նաեւ Վաղուան գրականութեան մասին մը-  
շակած Հարցարանը եւ այդ առթիւ դրի առած իր պա-  
տասխանն ու եզրակացութիւնը :

Կենսագրական տողերուն մէկ մասը ինչպէս  
նաեւ անտիպ էջերն ու նամակները կը պարտինք հոգա-  
ծութեանը իր եղբօրը , Պ . Վահան Յարութիւնեանի ,  
որ պատրաստակամութեամբ մեր տրամադրութեան  
տակ դրաւ այս հատորը կազմելու համար :

Իր նահատակութենէն քսանէ աւելի տարիներ յե-  
տոյ , անտիպ ու տպուած էջերու ընտրուած այս փուն-  
ջը գուրգուրանքով ամփոփելով ներկայ հատորին մէջ ,  
նահատակ Գրագէտներու Բարեկամները խղճի եւ ար-  
դարութեան մեծ պարտք մը կատարած ըլլալու թեթե-  
ւութիւնն ու գոհունակութիւնը կը զգան , արեւմտահայ  
դրականութեան արժանաւոր ներկայացուցիչին ընդար-  
ձակ գործէն նմոյշ մը յանձնելով սերունդներու երախ-  
տագիտութեան :

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԵՏՆԵՐՈՒ  
ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

## ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

### ՀԱՐՑՈՒԿԸ

Քերթո՛ղ, ինչո՞ւ կը մոլորիս ցընդական  
Այդ ապերախտ արհեստին մէջ դժուարին .  
Բա՞նչ է քեզ որ յուզմունքները՝ եսական  
Լուռի մը մէջ լոկ բռնկիին ու մարի՛ն :

### ՔԵՐԹՈՂԸ

Յուզուիլ՝ ու մեծ անուրջներովն իր անել՝  
— Ո՛վ միամիտ ու եսամոլ դու հարցուկ ,  
Ինկած մարդոց լուռ կարաւանն հրդեհել . . . :  
Գու գիտէի՞ր փառքի տենչանքն այս ծածուկ :

Ա՛, բոլոր բիւր գիներբուքներն աշխարհին  
Հոգուս մէջէն անցան ու հետք չը թողին .  
Մեծ կիրքերու ուխտաւորն եմ ես վերջին .  
— Այս է փառքի հուսկ երազը քերթողին :

1902 Մոստֆը

«ԼՔՈՒԱԾ ՔՆԱՐ»

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՐԱԶԱՆՔ

Վարդ, շուշան ու այծտերեւի...  
Շուշան ներմակ ու վարդ կարմիր...  
Այծտերեւի շառագոյն...  
Հոտաւէտում, բոյր անուշ...  
Բոլորն ստոնց՝ գարնան հովէն հեւ ի հեւ,  
Կուգան լեցուիլ իմ հոգուն մէջ առած թել:

Պըլպուլ, սըմբուլ,  
Երգ ու բուրեան,  
Դաշնակաւոր տաղեր անդուլ,  
Ու տերեւներ բիրաթռչր,  
Ու առուակներ օճապըտոյտ,  
Լընակ, ալեակ եւ կապոյտ,  
Ուր կ'աստաստեն կայծ, բոյլ ու շոյ,  
Ու կը լցուի աւօտին ցօղ,  
Ամէնքն ալ գարնան  
Շուրջ պար կը դառնան:

Ու կուսական լանջներու տակ  
Ուր կեանքն առատ յորդան կուտայ,  
Նիրհած յուզմունքներ, նըւազուն յուշեր  
Կը վերընձիւղին բարախտուն ու տաք,  
Նուաղուն սէրեր, տժգոյն սարսուռներ  
Երագի տարտամ երանգներով լի :  
Մինչ շրթանց կարմիր թաւիշին վըրան  
Յորդ կիրքեր կ'այրին ու կը թրթրուն :  
Կ'ուռնանան ուռ,

Ընձիւղ , տերեւ ու սարսուռ ,  
Ու կը ծաղկի եղբւանին .  
Յիշատակներն ալ կը ծաղկին սըրտիս մէջ ,  
Յիշատակներն իմ յոյժ սիրոյ անցեալին ,  
Դեռ թարմ ու անշէջ :

Երկինքին խորն , ու ամպերուն ,  
Շա՛տ հեռուն ,  
Հոն են անոնք , յիշատակներն իմ սիրուն ,  
Հոն են անոնք , շուրջս են անոնք :

Վարդ , շուշան ու այծտերեւիկ ,  
Շուշան ներմակ ու վարդ կարմիր ,  
Այծտերեւի շառագոյն ,  
Հոտաւէտում , բոյր անուշ ,  
Պղպուլ սմբուլ ,  
Երգ ու բոյր ,  
Դաշնակաւոր տաղեր անդուլ ,  
Ու թիթեռներ բազմաթոյր ,  
Ու առուակներ օճապըտոյտ ,  
Լընակ , ալեակ եւ կապոյտ ,  
Բոլորն ահա կը բողբոջին  
Բանաստեղծին սրտին վըրան ,  
Իր շրթներն ալ կը սարսըռան  
Յուզմամբն անոնց ներբողին :

1902

«ԼՔՈՒԱՄ ԳՆԱՐ»

## ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԻՆ

Խմաստասերի լռութիւն մը լուռ  
Կը ցոյայ անփայլ իր դէմքին վըրայ,  
Եւ ներքին վիշտի լերդ ծիծաղ մը սուր՝  
Շրթունքներուն շուրջն հոն կը թրթրոայ :

Զըկայ աչքերուն անդրադարձ փայլին,  
Ցուրտ բիւրեղին մէջ՝ լըճումն յուսահատ.  
Եւ այդ սեւ, պղտոր, ալեծուփ հայլին  
Զի ցոյացըներ մահուան դէմքը վատ :

Պահծու կիրքերու եւ կամփի ուժեղ՝  
Հով մը կը սահի իր վեհ նակատէն,  
Ու բըռնաբարուած տենչի յարդագեղ  
Յառտ պրկումներ գանի կը պատեն :

Այդ նայուածքին մէջ կեանքի լայն սիրոյն  
Զը փոխարինուած իդճը կայ լըռին.  
Ու մագնիսացած ասեղի հանգոյն  
Իր տրտում աչքերն անոր կը յառին :

Անոր կը յառին, կեանքին կը յառին,  
Այս խեղ՝ այլ սիրուած անգութ աղջկան,  
Ու մի՛ գարմանաք թէ իր մուսային  
Երգն ըլլայ կրփոտ ողբ մը տրտմական :

## ՄԻԱՆՁՆՈՒՀԻՆ

Տանարին խաղաղ առանձնութեան մէջ  
Ուր լուռ խորհուրդներ կ'առնեն ելեւէջ,  
Հանդարտ իրիկուան թոյլ ստուերներէն  
Յրտին սարսուռ մը կ'իյնայ մեղմօրէն.  
Գոթական հսկայ կամարներուն տակ  
Կը տիրապետէ մեծ լուռը համակ :  
Խունկի, կնդրուկի բոյրեր կը թռչին  
Իբր աստուածաշունչ հոգին տանարին :  
Ամէն բան խաղաղ, հանդարտ, սուրբ է հոգ  
Ու մեռաստանի կեանքովն՝ ըստուերոտ :

Տիրամօր անուշ պատկերի մ'առջեւ,  
— Ամենամաքուր կին խնդրապարգեւ,  
Դալկադէմ բոյրը կ'աղօթէ խոհուն,  
Աչքերն՝ արցունքի գոհարով փայլուն,  
Հոգին՝ հաւատքի սարսուռով լեցուն,  
Եւ Յոյսի անուշ բուրմունքովն անհուն :  
Ազուր սրբուհին՝ ձեռքերն իրարու,  
Կ'ըսէ՛ք՝ այս կեանքէն հոգեւին հեռու,  
Տեսիլքէն արբշիտ, վերամբարձ աչքով,  
Կ'ամբառնայ սրտով մեծ փեսային քով :  
Նրբին շրթներէն, ուր վարդի տժգոյն  
Կարմիրն է ցնդեր երազի հանգոյն,  
Յիսուսի սիրուն աղօթքն փոքեշունչ  
Վեր կը խնկանայ յամբ ու անմրմունջ :  
Ու պատկառելի այս վեհ պատկերին՝  
Վերէն հրեշտակներն ալ կը խոնարհին,  
Մինչ Տիրամայրն ալ գոզցես հրնուանքէն

Անուշ կը ժպտի շղարշին տակէն :  
Կ'աղօթէ հանդարտ, կ'աղօթէ լռին,  
Սգաւոր լաչակն աղւոր երեսին,  
Ճերմակ երեսին՝ խոժոռ լաթը սեւ,  
Սուրբ Աստուածամօր պատկերին առջեւ,  
Բայց ինչո՞ւ դէմքին տրամուրթեան վրայ՝  
Անցեալ մ'ալեկոծ դեռ կը թրթռայ :

Մատաղ է դեռ շատ աղջիկն երագուն՝  
Ու քարս է քաւիշն իր աչուկներուն,  
Եւ ներանձնացման այս սուգէն անդարձ  
Օ՛հ, ի՞նչ կ'ըսսայսէ սիրտն իր բոցարծարծ .  
Ու ինչ որ աշխարհ չը տուաւ իրեն,  
Կը խնդրէ արդեօք Յիսուսէ՞ն, վերէ՞ն :  
Աղջի՛կ, այդ նայուածքն իդձով երկնաւոր  
Յուզո՞ւած, կը գգուէ դէմքը Տիրամօր .  
Ըսէ՛, Մարիամին ջինջ նայուածքը հեգ  
Իր գաւկէն բան մը կը խոստանա՞ր քեզ :

Դէմքին նըւաղկոտ մաքրութեան վրայ  
Կը յորդի յուզմունքն ու կը սարսըռայ,  
Եւ ներանձնացման մոռացումին մէջ  
Հոգին՝ կեանքի հուսկ հրթիռով մ'անշէջ,  
Տալտակի փոխուած չոր լանջքին վըրայ  
Հեւքի մը շունչով յուշիկ կը թրթռայ :

Ի՞նչ, մոռնա՛լ կեանքը, ու մոռնալ յաւէտ  
Ինչ որ իր լանջքին ու իր հոգուն տակ  
Ունի կիներն անշէջ, թանձր ու կեանաւէտ,  
Ու մոռնալ Եսի՛ն ուժգնութիւնը տաք :  
Օ՛հ, ի՞նչպէս քանդել գգուտ աչքերուն  
Բիւր ըզձանգներու ցանցը վառվըռուն,

Ուրանա՛լ ինչ որ բնութիւնն յաւերժ  
Ունի պարգեւած բուռն, անտարամերժ,  
Ինչ որ գիւթական ու գերադրապէս  
Ունի իգական սիրտն հպարտ ու հեգ . . . :

Տանարին խաղաղ առանձնութեան մէջ,  
Ուր սեւ սարսուռներ կ'առնեն ելեւէջ,  
Հէգ միանձնուհին, ձեռքերն իրարու,  
Կարծես այս կեանքէն հոգեւին հեռու,  
Պատկերին առջեւ Սուրբ Աստուածածնին՝  
Անուշ ու առատ կ'արտասուէ լըռին :

1902

«ԼՔՈՒԱԾ ՔՆԱՐ»

ՅՈՊՈՊ ԹՌՉՈՒՆ  
( Ա լ ա ն դ ա վ է պ )

Զբփնաղ առտու մը գարնան  
Յօղոտ, կիսալոյս,  
Աղուոր աղջիկ մ'աննըման,  
Հարսնցու մի կոյս :

Լոգարանին մէջ միևակ,  
Անփոյթ պչրանքով,  
Կը լուացուի ու ներմակ  
Շուշան մ'է տեսքով :

Մագերն ըսփիւռ ոսկեգօծ՝  
Կը սանտրէ անի,

Ու կը սարսուան լանջքը հոծ  
Ու պորտն հոլանի :

Ու վարսերը կը ցրուին,  
Վիժակ՝ սոնապան՝  
Ծըվապով շուրջն իր մարմնին ,  
— հորան մաքրութեան :

Այլ քաղնիքին կիսաբաց  
Դունէն՝ աղջըկան  
Եղբօր աչքն է հանդիպած՝  
Բըրրոջ մերկութեան ... :

Օ՛հ, ի՛նչ ամօք, Աստուած իմ,  
Փըրկէ՛, փըրկէ՛ գինի,  
«Թըռչուն մ'ըլլամ ու քոչի՛մ  
Երկինի՛ք երկինի՛ք ... :»

Եւ աղուորը սարսուագին  
Յանկարծ կ'առնէ թեւ ,  
Մոռցած սանտրը դեռ գլխին,  
Մագեբուն վերեւ :

\*  
\*\*

Յոպոպ քոչունն է այսօր  
Սիրուն աղջիկն այն,  
Բըբուկն ալ՝ սանտրը անոր,  
Ըստ աւանդութեան :

## ԸՆԹԵՐՑՈՂԻՆ (1)

Բանաստեղծութեանց այս պղտիկ հատորը՝ մասնաւոր ծրագրի մը համաձայն պատրաստուած երկասիրութիւն մը չէ: Ասիկա փունջ մըն է, կազմուած մեծադոյն մասով այն քերթուածներու՝ որ Լեւոնի Գրատարակութենէն առաջ եւ ետքը լոյս տեսած են զանազան պարբերաթերթերու մէջ: Ընդհանրապէս դեռ երէկ միայն դրուած բանաստեղծութիւններ չեն անոնք: Անոնց մէջ կան որ տասնեակ մը տարիէ ի վեր կեանք ունին արդէն: Չանոնք այսօր հատորի մը վերածելու համար վերստին ձեռք առած պահուս, կարգ մը պղտիկ վերհպումներ անհրաժեշտ տեսնուած են, ո՛չ այնքան խորքին մտահոգութեամբ, որքան ձեւին խղճմտութիւնով: Հարկ չկար անոնց բնատիպ երանգը եղծանելու կամ խճողելու: Այդ բանաստեղծութիւնները՝ հողեկան բացառիկ վայրկեաններու անկեղծ արձանագրութիւններ են, ու նուիրական անոր համար՝ որ ծնունդ տուաւ անոնց: Թերեւս հիմա շատ ինչ փոխուած է մէջս, անոնցմէ բաւական ինչ օտար կը թուի հողուոյս: Բայց այսօր առաւել քան երբեք խանդաղատանքս դիտակցութեամբ ու տրամագին պաշտամունքով օժուած է երազաւէտ արբեցութեանց այդ երջանիկ՝ այլ անդարձ խորհուրդներու յիշատակին: Ամէնէն ցուրտ մարդը կը սիրէ իր հոգիին պատմութիւնը թղթատել, կրօնքով խնկուած ու պատկառանքով քաղցրացած հետաքրքրութեամբ մը, ու չկայ թերեւս աւելի եղբրականօրէն շա-

1) Այս տողերը, իբրեւ յառաջաբան երկունք փերուածներու հատորին, Ա. Յարութիւնեան գրի առած է 1904 Յունիս 13ին, Մալկարայի մէջ: Ն.Գ.Բ.

Հազրդիւ բան՝ քան միսթիկ պատմութիւնը հոգիի մը  
ճամբորդութեան, այս ունայն աշխարհին տխուր հո-  
րիզոնին վրայէն:

Երկունքը տրամարանական կապ մըն է Լփուած  
Քնարին ու Նոր Քնարին միջեւ: Հոգիիս շրջանառու-  
թիւններուն հանգրուաններէն մին կը յատկանշէ անիկա:

Այս ծիփուն անհաստատութեան առերեւոյթ հակա-  
սութիւններուն մէջ՝ երբեք չեմ փնտեր ընթերցող  
հասարակութեան մը դթոտ ներողամտութիւններուն  
ապաստանիլ: Այդ մտահոգութիւնը կը թողուի դպրո-  
ցական դասադրքեր պատրաստող խոժոռադէմ պատ-  
ուելիներու: Բանաստեղծութեանց հատորի մը հրատա-  
րակումը՝ հասարակ ձեւով ըմբռնուած օգտակարու-  
թեան մը տխուր ու նուաստացուցիչ կոչումէն հետո է:  
Միայն թէ, մարդ իր հոգիին հաղորդականութիւնը կը  
փորձէ: Երջանիկ է, եթէ սիրոյ ժապաւէններ, համակ-  
րութեան երիզներ լծորդած են ղինքը իր շուրջը գըտ-  
նուող հոգիներուն հետ: Ապա թէ ո՛չ՝ կուլայ իր աննը-  
շանութեան վրայ: Ահա՛ միակ փառքը, — ունա՛յն  
փառք, — երազամոլ աշուղին:

## Ն Ո Ւ Է Ր

Նուիրեց ինձի շուշանը անբմակ  
Ձար ակոսաներով խածած էր հուրին,  
Ներշնչելով շունչն իր մարմնի բայրին  
Այդ ծաղիկին մէջ՝ ցօղաւէտ համակ :

Ու փնտրուեցի անկուրթեամբ մը տաք,  
Ձլատիչ յոյզովն հոգւոյ սարսուռին,

Բուրմունքներն ամէն՝ որ հոն կը թառին,  
Փափուկ թերթերուն ազուցուածքին տակ :

Ու փեթըռտելով թերթերը բոլոր՝  
Ես հոն չը գըտայ երագ մ'իրական .  
Շուշանէն մընաց՝ լոկ ծըղօտը չոր ... :

Քմահան բաղդն էր հուրին այդ գարնան,  
Շուշանն ալ ներմակ ու բարումնաւէտ՝  
Մեր սին յոյսերուն ծաղիկը քամէտ :

1896

«ԵՐԿՈՒՆՔ»

### ԱՌԱՋԻՆ ՍԷՐ

Անքիծ, մաքուր ձիւնին վըրայ  
Եթէ կայլակ մ'արիւն կաթի,  
Ձիւնն անբասիր կը սարսըռայ  
Ճերմակութեան մէջ իր կաթի :

Ու ծաղիկ մը, աստըղ կարմիր,  
Կը ծըլի հոն, ներմակին մէջ .  
Վիրաւոր է ձիւնն անբասիր  
Տաք ու խորունկ վերքով մ'անշէջ :

1902

«ԵՐԿՈՒՆՔ»

## ԳԵՐԱԳՈՅՆ ՏՕՆԸ

Երագաւէտ խնկոտ առտուն սպափէն  
Զըւարթ, կայտառ, կարմիր հարսի մը նման  
Հորիզոնին կաթ ամպերուն բացուածքէն  
Կը ցրցֆնէ ժպիտ մ'անձիբ հիացման :

Ու կը թռչին ժպտին կայծերն անհամար,  
— Կենդանութեան բազմաբողբոջ մասնիկներ,  
Պտղաբերել թափուն սերմերն անսպառ  
Մայր բընութեան գգուտ գրկին մէջ անմեռ :

Ու գարունը՝ ոսկեցընցուղ աւօտին  
Տարփանքներուն մէջ կ'արթնայ ցնծութեամբ .  
Լուռ գիշերուան երագները կը ցնդին  
Այգուն շֆեղ վառ հանդէսին մէջ անամպ :

Ու տօնն անհուն երգի, բոյրի, հիացման,  
Տօն բնութեան, շրֆեղ տօնը Արեւին,  
Փթթումներու լայն գրկին մէջ անսահման  
Կը թրթրոյ կեանքով յոյզով ցնծագին :

1902

«ԵՐԿՈՒՆՔ»

## ԱՄՍՈՒ ԳԻՇԵՐ

### Քրոջս՝ Վերգինէին

Անեռնօրէն խաղաղ գիշերն ամառուան  
կը բարախէ խորեուրդի մը մէջ վսեմ .  
հորն այն լագուարթ միայնութեանց՝ կը հեւան  
Ոսկի աչքեր, ծիր-կաթինը ճիւնեղէն :

Մայրագործով բընութիւնը յոգնարեկ  
Հանգիստ կ'առնէ գիշերուան մէջ փառաւոր,  
Եւ լուսընկան իր քաղցրափայլ ժըպտով շէկ  
կ'ոսկեգոծէ վայրանըկարն հեռաւոր :

Պարտէզին մէջ՝ շուշանները ճիւնալանջ  
Իրենց նըրբին կը մըլսան բոյրն ըզգըլտիչ .  
Հոն՝ ըսփոփել իր վէս հոգին նըրբատանջ  
Թռչլատրեցէ՛ք երագողին դատնախիղն :

Կայծռոյկ մը կ'ուրուագըծէ մութին մէջ  
Ըստուգութեան նըրբողի մը լուսեղէն,  
— Իտէալի համբան՝ յանդուզն ելուէջ,  
Ձոր գիշերուան ալիքները կը թաղեն:

Դեռ մըրմունջներ, հեւքեր կ'երգեն քըրմանման  
Ծառերուն տակ, ծաղկանց մէջէն ցընծալիր,  
Եւ բընութիւնն իր գործով մայրական՝  
կ'ապրեցընէ ամէն մասնիկ, ամէն իր :

Ընկողմանած յունապիին խընկառու  
Ճիւղերուն տակ, բանաստեղծը յուլարար  
կը թերթատէ իր խոհերը վարանուտ,  
Ճարակ՝ յուզմանց իր քընարին բազմալսար :

Եւ կ'օրհներգէ յուզումնավառ շրթներով  
Անասելի գեղեցկուքիւնը կեանքին,  
Մինչ ոսկերիք աչքեր՝ վերէն՝ անվըրդով՝  
Բանաստեղծին կը բարեւեն ժրպտագին :

1912

«ՆՈՐ ՔՆԱՐ»

### ՔԱՅՔԱՅՈՒՄ

Ա՛յ կը դեղնի սաղարթախիտ սարփինան,  
Պատըշգամիս դալարագեղ հովանին .  
Զոր տերևներ, դողդոջ, տըրտում վար կ'իյնան,  
Ու մահագոյժ սեւ օրուան մը սուգն ունին :

Հոն կը խամրի յետին ողկոյզն ազագուն,  
Կը հեռանայ անկից՝ մեղուն յուսահատ,  
Ու ցըրտագին կապոյտին մէջ՝ շըւարուն՝  
Կ'երթայ թոցնել պատրանքներուն իր ջոկատ :

Քանի՛ անգամ այս երդին տակ խընկաւէտ  
Ես երկնեցի ջինջ երագնեք վեհաշուք,  
Եւ կամ առտուն՝ թըռչուններուն գուգահետ  
Մատուցի հոն իմ պաշտամունքս անշըշուկ :

Հոբիգոնին հանդէպ, անշարժ, ինքնամփոփ,  
Իրկիւռններն, հոն, երկիւղած տրտութեամբ,  
Քանի՛ անգամ ես հըսկած եմ սըրտատրոփ,  
Հոգւոյս վերեւ՝ կասկածներուն իմ սեւ ամպ :

Խորան դալար՝ խոկումներուս մեմամով,  
Կը քայքայուի պատըշգամիս սարփինան .  
Զոր տերևներ, իբրեւ յոյսերն իմ ամուլ,  
Դողդըղալէն եւ ուժաթափ վար կ'իյնան :

1912

«ՆՈՐ ՔՆԱՐ»

## ԻՄ ԱՅԳԻՍ

### Գեղամ Բարսեղեանին

Այգիս դալար՝ կը սարսըռայ ցընծագին,  
Ողկոյզներու մարգարտաշար յորդման մէջ .  
Կ'ուռի կայլակը մեղրալից հատիկին՝  
Օծուած այգուն արծաթափայլ ցօղով գէջ :

Համայնասփիւռ կարմիր համբոյրն արեւին  
կը կայծկըլտի ծիրաներփնեան ցոլֆերով,  
Ու կը խայտայ մեհարանիս փոքր այգին՝  
Առտււան մէջ, օրուան սեմին վըրայ գով :

Կը մըխըրճին մատներս յուզմամբ երջանիկ,  
Տերեւներուն ագուցուածֆին մէջ տամուկ,  
Ու կը նըսփեմ ատո՛ք ողկոյզն անդրանիկ,  
Իբրեւ մարգրիտ, իբրեւ մաքուր դեղին խունկ :

Կը խորտակուի ակռաներուս տակ՝ լեցուն  
Հատիկներուն մեղրածորան սաքն անփայլ,  
Ու կ'ըմբոշխնեմ հեշտապարգեւ ջինջ ֆաղցուն՝  
Որ կ'ամո՛ֆէ բերնիս պասակը մըռայլ :

Ու կը մըղուի երակներուս մէջ՝ շինիչ  
Թափանցանց հոյզն անմառելի նեկտարին,  
Եւ կը մոռնամ ես ամէն բան քիչ առ քիչ,  
Վայելիֆին մէջ արբեցուքեան այս խորին :

1912

«ՆՈՐ ԳՆԱՐ»

## ԿԱՐՕՏՆԵՐՍ

Հոգւոյս խորը կարօտներ կան  
Որ կը քանդեն զիս օրէ օր,  
Ինչպէս թոցիմ կարմիր լեզուն  
Մումին ներմակ մարմինն աղուոր :

Կարօտներ կան խորը մըտփիս,  
Որ անդադար գայն կը փորեն.  
Լա՛ւ, ի՞նչ է վերջն այս ցաւերուն.  
Լու՛ւ՝ կը խորհիմ ես ինքնիրեն:

Ու կը լայննայ վերքը տակաւ  
Զը դարմանուած կարօտներուն.  
Ոչ ո՛ք գիտէ զանոնք, ի՞նչ փոյթ,  
Ես դագաղն եմ այդ ցաւերուն :

Զընչի՞ն ցաւեր, է՛, ո՞վ գիտէ.  
Խորհուրդներն են անոնք հոգւոյս.  
Մեծ երազներ եւ իղձեր վառ  
Կը մարին խորն այդ ցաւերուս :

Ու կարօտներն իմ մեծամոյ  
Կ'ըսպատեն զիս մինչեւ ցըմահ,  
Ինչպէս թոցի կարմիր լեզուն  
Մումին մահուր մարմինն աղուոր :

## ԱՔԱՍԻԱԻՆ ՆԵՐՔԵԻ

Ա. Բասիախին ներքեւ ըստուերն է փափուկ,  
Ժամադրավայր անուրջներու խուսափուկ :

Նուրբ հեշտութեան անկըշուելի մթնոլորտ,  
Որուն՝ հոգիս է երկիւղած յաճախորդ :

Կ'ընկողմանիմ կանանչ քաւշին խորն անդոյր,  
Այն ոսկեգօծ ըստուերին մէջ խընկարոյր,

Եւ ընդ երկա՛ր աչքերս անթարթ կը դիտեն  
Երկինքը ջինջ՝ սաղարթներու ընդմէջէն :

Ճակտիս վըրայ, մագերուս մէջ՝ անհամար  
Ձանակներու կը դեգերի խօլ մէկ պար,

Կ'իյնայ այտիս վըրայ տերեւ մը վերէն,  
Եւ մեղու մը մեղրով արբշիտ՝ յամբօրէն

Կուգայ քառիլ անձկատ շըրթանցս իմ վըրայ,  
Ուր ցանկութեան խըտղըտում մը կը սարսուայ :

Ու կը մընամ արբեցութեան խորն այս լուռ .  
Ի՞նչ եմ ես ինքս, անեւ երա՞զ մ'ոսկեհուռ,

Լըֆուած յո՞յս մը մոռացութեան աշխարհին,  
Թէ՛ գահագուրկ աստուծոյ մը ձայլ անդրին :

Ու կ'երագեմ . . . ես ինքս՝ տարտամ ուրուական,  
Փայլ մը ոչինչ, կայծ մը, պարասլ մէկ

վայրկեա՛ն :

1912

«ՆՈՐ ՔՆԱՐ»

ԱՅՍՊԷՍ, ԿԵԱՆՔԻՆ ...

Այսպէս, կեանքին դեռ կը փարիմ երբ, աւա՛ղ,  
Պատրանքներուն մասնատուին է ա՛լ Քափուր,  
Երբ յոյսերը կը խորտակուին գերդ փըրփուր,  
Ու կը փըչէ ոչընչութեան քամին պաղ:

Զի՛ կը մոգէ զիս դառն հեշտանքն ունայնին.  
Անդորրն ունիմ ա՛լ չը խարուող սըրտերուն,  
Եւ զի բոլոր տեսիլներըն անկայուն՝  
Աննատելի թովքի մը մէջ կ'անհետին:

Վայրավատին գեղեցկութեանց վեհ տանար,  
Ես կը պաշտեմ բընութիւնը մայրական.  
Բա՛ց է հոգիս իր խորհուրդին մոգական.  
Դիւթանքն անոր զիս կ'առինքնէ չարաչար:

Դեռ կը սիրեմ... փախչող ցովքերը թրթռուն,  
Օծուած՝ տըրտում գեղովն անդարձ կորուստին,  
Եւ խորհուրդի խորշն՝ ուրկէ ինծի կը ժըպտին  
Բիւր տեսիլներն անմեկնելի իրերուն:

Ու կը փարիմ կեանքին, - պայմանն իսկ ըստոյզ  
Այս նըրբահամ ու հեշտաւէտ խնջոյքին,  
Միշտ ջերմեռանդ, մի՛շտ աւելի սըրտագին,  
Հոգիս՝ կայծ ու հեգնանք, ու սիրտս ալ խարոյկ:  
1912 «ՆՈՐ ՔՆԱՐ»

## ՁՄԵՌՈՒԱՆ ՀՈՎՈՒՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Իրիկունը կը ծառայի ձորին մէջ,  
Ցուրտ գիշերուան բերանաբաց դռներէն.  
Բլրին թաշտոտ կողին վըրայ, մեղմօրէն,  
Հովի քընփուշ հեւք մը կ'առնէ ելեւէջ:

Կը թըրթոսայ յուշիկ՝ գեփիւռը թեթեւ,  
Ու դեռածիլ դալարիքը ձըմեռուան  
Իր համբոյրին փայփայանփէն՝ ցուրտ մահուան  
Կարծես կ'ըզգայ նախազգացումն ակներես:

Իրիկուն է, լուռ է գիւղակն ամայի.  
Վերադարձող կովերը մերթ, սրտագի՛ն,  
Կը բտաչեն կարօտն իրենց հորթուկին,  
Փողոցներուն մէջ գիւղակին ամայի:

Ետ կը դառնան մարդիկ՝ հեռուի դաշտերէն,  
Մինչ յոգնութեան տոպրակը դեռ կըռնակին,  
Հողագործը, դուրսը նըստած իր հիւղին,  
Տըրեխներուն կը թոքուէ հողն յամբօրէն:

Ու երկինքի թաւշին խորէն կապտանուշ,  
Կըռունկներու կարաւան մը կը հոսի,  
Եւ չի կենար, դեռ շա՛տ ցուրտ է, եւ քանգի  
Գարունն աւա՛ղ, գուցէ մընայ դեռ շատ ուշ:

1912

«ՆՈՐ ԳՆԱՐ»

## ԵՐԿՐԱԽՏ

Ծովէն անդին , ու լեռներէն ալ անդին ,  
Մահախնդին խորն երագի մ'ոսկեփայլ ,  
Աշխարհ մը կայ , որուն պատկերն հոգեգմայլ  
Կը կորսըւի ծոցն անըստոյգ անդունդին :

Զբֆնա՛ղ աշխարհ , ուր խոկումներս կը փրթփին ,  
Անըրջահիւս տեսերեւոյթդ անայլայլ  
Կը լեցընէ պարապն հոգւոյս իմ մըռայլ  
Որ՝ թաղծաբեկ՝ գֆեգ կը տենչայ վերբասին :

Կը խուսափի՛ս տարտամին խորն օրէ օր ,  
Ի գուր նայուածֆս երեւոյթին դիւքաւոր  
Կը նըկըրտի նըշդել վայրկեանն հոսանուտ :

Ու գիւղիցած անկարելի երագէն ,  
Ուտերըս դեռ յամաւօրէն կը վագեն  
Անվերջ նամբուն երկայնֆին վրայ բագմախոր :

## ԽԱՆՈՒԹՊԱՆ ՄԸ

Գաւառի մը խորը երկրի մ'աննըշան,  
Աւանի մը հին փողոցին անկեան մօտ,  
Խանութ մ'ունի փերեգակը մըտաշփոք,  
Կըրպակ մը՝ գար իր պապէն է ժառանգած:

Այդ կըրպակը՝ սահմանն է իր գոյութեան,  
Շըրջագիծը անյեղի՝  
Իր աննըշան ու անշըշուկ կենցաղին,  
Այդ կըրպակը՝ իր խոհերուն քանկագին  
Նըւիրական սուրբ բագին:

Հոն՝ աշխարհի հանոյփին,  
Հոն՝ աշխարհի պէտփին համար,  
Փերեգակը՝ մունջ ու խոնարհ,  
Կը վաճառէ կըտաւ, կերպաս, տըպածոյ,  
Եագմա, գուլպայ, ֆէս, անկուածոյ՝  
Եւ՝ այսեղէն իրեր ջնջին անհամար:

Կըտաները՝ խոշոր ժանգոտ իր կանգունով  
Կը չափէ,  
Ու մըկրատով մ'անսահման՝  
Կը կըտրատէ գանոնֆ երբոր պէտք ըլլան,  
Ու երկուֆն ալ, մըկրատն՝ ինչպէս այդ կանգուն,  
Կըրպակին հետ՝  
Ժառանգութիւն մընացեր է այս մարդուն:

Ամառ օրերն՝ օրն է տարի, օրն՝ անհո՛ւն,  
Ու նեղ փողոցն է ամայի, անշըշուկ,  
Եւ գընորդի մ'իսկ չերեւիր մագին շուֆ:

Այդ ճանճրոյքի եւ ըսպաման  
Եւ մաղաղկուն ըսպաման մութ օրերուն,  
Խանութպանը, կը ծկած անկիւնն իր կըրպակին,  
Տագնապահար ու անձկագին,  
Կը չափչըփէ սեւ սահմաններն համբերութեան,  
Եւ իր ժանգոտ մըկըատով՝  
Կը մըկըատէ, կը յօշոտէ իր յոյսերուն,  
Երագներուն խեռ ու դալար  
Բողբոջներըն անհամար:

Պապենական ժառանգութեան խըստամբեր  
Ծանրատաղտուկ երկնաճարն իր կըռնակին,  
Խանութպանը կը տոկայ, խանութպանը՝  
անտարբեր

Աշխարհի բիրտ հեգնանքին,  
Բոսոր արեան բիծ մ'իր տըժգոյն շըբքունքին:

Ժառանգական երկնաճարն անսահման  
Կը ծանրանա՛յ անկարեկիր, անհընարի՛ն,  
Տառապատանջ՝ այլ անբասիր  
Հոգւոյն վըբայ առանձնամոլ փերեգակին:  
Եւ այս անգութ հարկն՝ իր հոգին կը ջընջէ,  
Կ'ընկնէ գինեք, կը փըշրէ կամֆն իր վիրատը,  
Ուրախութեան վերջին ծիւերն իր սըրտին՝  
Կը փեթըռտի՛ն, կը փեթըռտի՛ն:  
Ու ջըլլային եթէ կանգունն ու մըկըատ,  
Փերեգակը, իր իղձերովն անըսպառ,  
Երագներովն իր առատ,  
Այս աշխարհի լուրջ, հեռատես  
Իմաստութեան խոհեմ աչքին՝  
Կորած, կորա՛ծ էր իսպառ,

Հիմա բիւր փառք արարչին,  
Որ շքնորհեց իմաստութիւնն իր երկիւղին  
Այս անըրշան մարդուն ջրնջին,  
Ու՛ ո՛չ մէկը ոչի՛նչ գիտէ իր ներսէն,  
Ո՛չ ոք ոչի՛նչ պիտի գիտնայ իր ցաւերէն,  
Ու վշտագին պատմութիւնն իր փրնացման՝  
Պիտի անցնի լուռ, անվաւեր, անըրշտար  
Եւ իր անգօր երագները թանկագին՝  
Պիտի չիյնան գոհ՝ այս ռաւիկ աշխարհին  
Պիղծ, շքնական ծաղրամփին :

Ու մինչեւ վերջն իր օրերուն սեւածիր,  
Հոն, կըրպակին կըծկած անկիւնն անըրշտար,  
Փերեգակը մունջ ու խոնարհ,  
Պիտի ծախէ կըտաւ, կերպաս, տրպածոյ .  
Եագմա, գուլպայ, ֆէս, անկուածոյ,  
Եւ սյսեղէն նիւթեր ջրնջին անհամար,  
Իր նինաւորց կանգունով  
Չափչըփելով սև սահմաններն համբերութեան,  
Եւ իր ժանգստ մըկրատով  
Յօշոտելով իր յոյսերուն  
Եւ իր վըսեմ անուրջներուն  
Բողբոջներն անհամար, բողբոջներն անըսպառ  
Իբր աշխարհիս իմաստութեանը համար :

1912

«ՆՈՐ ՔՆԱՐ»

# ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

## ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Եղիա Տէմիրճիպաշեան՝ արտակարգ գրագէտի անվիճելի յատկութիւններ ու միջակ մտքի մը անտանելիութիւնները ունի հաւասարապէս: Ոչ ոք իրեն չափ անհաւասար եղած է իբրեւ արուեստագէտ ու իբրեւ խորհող: Բոլոր ընդդիմակութիւնները անցած են իր ալեկոծ հոգիին մէջէն, ու բոլոր հակառակ հասանքները զիրար խաչաձեւած են հոն չարաչար: Մէկ ակնարկով անկարելի է ընդգրկել այս կնճիռը, եւ մատիտի քանի մը անխոյթ հարուածներով շրջադէլ՝ բացարձակապէս անհնար այս դէմքը, — ստուերի նման տարտամ ու խուսափուկ, այլիքի նման դադիադիուն ու յեղյեղուկ:

Իրմով գրազոյները՝ զինքը կը դատեն, առանց վերապահութեան, այն տարասեռ տպաւորութիւններուն համար՝ զոր գրագէտին երկուութիւնը գերակշռորէն կը ձգէ իր յաճախորդներուն վրայ: Մինչդեռ ամենէն առաջ հարկ էր զինքը հասկնալ ու բացատրել մանաւանդ, արդար դատաստանին իրաւունքին համար:

Եւ ահա՛ ատոր հակառակն է պատահածը, ինչպէս վերը ըսի արդէն: Ապշեցուցիչ ու անախորժ անհեթեթութեան մը տպաւորութիւնը կը ձգէ միամիտ, անկեղծ սիրտերուն վրայ, որոնց մէջ նողկանքը բնական է հակասականին ու կնճուտ նրբութեան նկատմամբ,

մինչդեռ թելադրող ու անպատճառորանեալ հիացումով մը կը համակուի՝ դիւրահաւան անհասկացողութեան մը բաղմութիւնը:

Առաջինները չեն կրնար սիրել զինքը, հակառակ իր բարութեան մեծ համբաւին: Իր հակասութիւնը՝ խորհողի յատկութիւնն է, իր իմաստասիրութիւնը՝ երկիւղալի է ու վտանգաւոր, — թէեւ շատ սխալ պիտի ըլլար իր անխոնջ շեղաբանութիւններուն մէջ ձանձնալ որոշ իմաստասիրութիւն մը, — եւ իր մտաւորական իսկութիւնն ալ՝ խորունկութեան մեծադողորդ պիտակով պատկանելի դատարկութիւն մը: Անոնց համեմատ, Տէմիրճիպաշեան, ախտաւոր միտքը, աղէտք մըն է որ եւ է առողջ գործարանաւորութեան մէջ: Տէմիրճիպաշեանի դրականութիւնը, իր թելադրողի ու հրապուրողի գերազանց յատկութիւններով. — վասն զի ուժ մը, հրապոյր մըն է ան, բայց ախտավարակ ու վնասակար, — մեր մէջ ամբողջ գրական թարմ սերունդ մը գերեզմանական խոնաւ ցանկութիւններով վառեց: Անոր համեմատ չէ՞ր որ ճշմարիտ բանաստեղծները հարկ էր ըլլային տժգոյն ու թռքախտաւոր: Իր անձնական բարոյականը կամ բարոյադիտութիւնը, — որուն ջիղը՝ մութին ու իմացական մենաւոր զիջութեան հրայրքը, անէութեան կիրքն ու մահուան մոլեռանդութիւնն է, — գերազանց անբարոյականութիւնն է, եթէ որ եւ է բարոյական սկզբունքի գնահատութիւնը կրնանք ընել այն հակամիտութեան աստիճանին համեմատ՝ զոր ան կը հրաւիրէ գէպի կեանքին բնական, ներոյժ ու զեղուն բողբոջումը: Եւ, բնագանգական ցաւադարութիւնները միշտ դուրս ձգելով լուսանցքէն, ի՞նչ բարոյական աւելի ուժեղ է ու զեղեցիկ քան այն՝ որ կը ճանդխտանայ իրբեւ կեանքի սկզբունք:

Բնութիւնը, երբ ինքզինքը կը ներկայացնէ մարդուն մէջ կեանքի ձեւին ներքեւ, տեսակ մը ներքին ուժ է, թերեւս Շօքէնհաուէրի կամքը (Wille) որ անդադար կը մղուի զարգանալու, ուռճանալու, յորդան տալու՝ այս թատերաբեմին վրայ: Ինչ որ կը հակառակի զարգացման այս գործին, կը պատճառէ ցաւը ու վերջնականօրէն կը յանգի մահուան, ինչ որ կը նպաստէ ընդհակառակն անոր՝ կը պատճառէ հաճոյքը եւ կեանքի ուրախութիւնը: Մարդս իրեն հետ կը բերէ այս տրամագրութիւնները, եւ մահուան ընդվզումը, մանաւանդ երբ մահը անժամանակ է, ցաւերուն ամենէն ուժգինը կը մնայ, ու, իմացականութիւնն իր բոլոր հնարքներով չի կրնար հակադրել այս ընդվզումին դէմ: Ուրեմն, բարոյականը, այս տեսակէտէն, զուտ օգտակարական դառնալով կեանքի ծաւալման հանդէպ, ինչ որ Մահուան դրդում մը, Մահուան պատրուակ մըն է, կը դառնայ անբարոյական:

Ու դատապարտութիւններուն թուումն մասանցն է որ կը շարունակուի:

Փիլիսոփայական հակասութիւնը՝ հողերանօրէն ի՞նչպէս կարելի է բացատրել Տէմիրճիպաշեանին մէջ: Օկիւսթ Քոնթին ու Լիթոէին ցամաք դրապաշտութիւնը (positivisme), Շօքէնհաուէրի ու Քանդի տեսլապաշտութեան (idéalisme) բարեկամութեանը հրաւիրուելու կատակը որքա՞ն քմահաճ ու թուցիկօրէն կամայական կ'երեւի, — թէեւ ըլլայ այնքան ազմկայարոյց ու ցուցամոլ: Պատճառն այն է որ Տէմիրճիպաշեանին պակասձ է անհատական միութեան գեղեցկութիւնը: Երբեք որոշ ինքնութիւն մը չէ կրցած ստորագրել ինք իր մէջ: Մաշուած առնականութեան մը եւ կեղծ ու սխալոր իրականութեան մը ճաշակները հրապուրած են զինքը:

Ամբողջ իր գրականութիւնը բարեկենդանի երկնեանդ  
ու փոփոխական դիմակաւորումներու տպաւորութիւնը  
կը ձգէ, զաւելտական՝ այլ տխուր տողանցումի մը  
մէջ շուքադրուելով իբրև Գրասէր Ատոմ, Նուրանիա,  
Մելանիա, Թեւանիօ, Մոնազ, Հուր - Հայրան, Ճին -  
Յակոբ, եւն.։ Ասիկա կը նշանակէ թէ բնա՛ւ ինք իր  
անհատականութենէն գոհ չէ կրցած ըլլալ, ու երբե՛ք  
վստահ՝ տիրական այնպիսի յատկանիշներու վրայ,  
որոնք անհատական նկարագիրներու ինքնութիւնը կը  
կազմեն ու կը յաւերժացնեն։ Կրօնական հաւատքին ու  
անաստուած գիտութեան մէջ՝ անդադար ու ջլատիչ  
կոծկոծումը, վստահութեան ու պայծառատեսութեան  
վախը, գերագրգիռ հիւանդագին զգայնութեան մը  
արդիւնքն են թերեւս, բացատրուած՝ վայրկեանին  
թռուցիկ ու վաղանցուկ տարասեռ տպաւորութիւննե-  
րովը, ու բանականութիւնն ու կամքը դադրած են դի-  
տակցօրէն գերակշռել։ Ասոր հետեւանքն է անտարա-  
կոյս որ՝ դադարներուն ցտելով միայն կ'անցնի Տէ-  
միրճիպաշեան, առանց վստահ ու անդրդուելի քայլով  
մը կայ առնելու անոնց մէջ։

Այս իմացական փոփոխամտութիւնը ինքն իսկ ջա-  
նացած է բացատրել անհո՛ւն միամտութեամբ մը, Աւե-  
լին ձառին ցուցամուլ եւ ուռուցիկ յառաջարանին մէջ։  
Այն նորամոյժի (novateur) հրապուրիչ դերը, զոր  
ինք իր վրան առնել կ'ուզէ փիլիսոփայական, գրական  
եւ բարոյական հակառակամարտ դրութիւններու ու  
վարդապետութիւններու ախոյեան հանդիսանալով  
փոխն ի փոխ, չի պարզուիր բնաւ այն պատմութիւնով՝  
զոր յառաջ կը բերէ Սբէնսէրէն, տրուած իբրև բա-  
ցատրութիւն՝ միջակ միտքերու միայն նմանելու տրա-  
մադրութեան եւ նորամոյժներու անկախ յառաջապա-

հուլիան: Այլ երբե՛ք իրական novateur մը չէ ինքը, վասնզի դուրի է տիրական գաղափարի մը, խանդավառու տեսլականի մը գերադրուածութենէն ու կարկառուն գերակշիռ ձգտումի մը ուժէն: Ստրուկ հետեւող մը իր անմեթոտ, անկանոն բազմաթիւ ընթերցումներուն, իւրաքանչիւրին տպաւորութեան եւ ազդեցութեան տակ՝ իր անհատականութեան մէջ խանդարուած ու խճողուած, անյաջող ժողովրդականացնող (vulgarisateur) մըն է միայն, աւելի կամ նուազ անջիղ, աւելի կամ նուազ դրքունակ: Իր կարծեցեալ տարակերպութիւնները ? (paradoxe) պարզ հակասութիւններ են, ու, հոգեբանօրէն, ախտանիշները կեղծ մտքի մը եւ ցուցամոլ ու սնույ նշանակութեան մը: Վասն զի այս բոլորը չենք կրնար նկարագրի եւ իմացականութեան ղիւրաթեքութեամբ բացատրել, եթէ այս վերջինն այն յատկութիւնն է որ, Բուհան հոգեբանին համեմատ, կը կայանայ «տեսակ մը աւելի կամ նուազ ղիւրութեան մէջ՝ փոփոխուելու, ծնելու նոր տարրեր, եւ յարմարելու նոր պարագաներու՝ առանց ձեւազեղծ ըլլալու կամ ձեւալուծուելու:»

Կը յիշէ՞ք իր պուտտայականի ունայնասիրութիւնը՝ որ ամէնուն ծանօթ է:

Բայց զիտէի՞ք նշանակութիւնը այս խորհրդաւոր կատակին :

Մտիկ ըրէք մանաւանդ:

Բոլոր միւս երեւոյթներուն նման՝ կեանքը, որուն ձեւին ներքեւ երեւան կուգանք, համայնական անէութեան մը ծոցէն դուրս շեղումի թշուառական եւ անխելք փորձ մըն է: Կեանքը չէ իսկական իրականութիւնը: Անիկա՝ պատրանք մը, ներկայացում մըն է, ինչպէս բովանդակ առարկան մարդկային ճանաչողու-

թեան: Կեանքը յարատեւ ցաւ մըն է, քանի որ անդադ-  
րում ճիշդ մը կ'ենթադրէ անէութեան, chose en soi- ին  
անդորր ու օրինաւոր շաւիղէն: Անէացումն է միայն  
հանդատաւէտ իրականութիւնը: Մարդուն համար՝ որ  
մատնուած է կեանքի դժբախտութեանց, Նիրվանան  
այն միջոցն է՝ որով, մեր անցաւոր դոյութեան ուրա-  
ցումովը, կը յաջողինք վերադառնալ անէութեան խա-  
ղաղ ծոցը:

Rentre dans le néant que la vie a troublé,  
բանաստեղծ Լըգօնթ տը Լելի դեղեցիկ բացատրութեան  
համեմատ:

Տէմիրճիպաշեան, որ մեր մէջ յոռետեսութեան  
առաքեալը ըլլալու փառքը կը վայելէ, Շօբէնհաուէրի  
աշակերտ մը կը դաւանի ինքզինքը: Տիտղոսը փայլուն  
ու հրապուրիչ է հարկաւ: Դժբախտութիւն է որ, սա-  
կայն, փիլիսոփայութիւնը այնքա՛ն խսկութեամբ ան-  
տարբեր ըլլայ բարոյականին, — ինչպէս դիտութիւնը,  
— եւ, փիլիսոփային անկարեկիր ու չեղօք նայուածքը՝  
ընդմիջուած ըլլայ անհատական խառնուածքներու պէս-  
պիսութեամբը դունաւորուած սեւ կամ պայծառ ակնո-  
ցով մը, երբ փիլիսոփան բարոյագէտի մտադրութիւն-  
ներ կ'ստանձնէ:

Այսպէսով է որ յոռետեսութիւն ու լաւատեսու-  
թիւն, — այդ երկու թելադրող բառերը, — հաւասա-  
րապէս դոյութեան իրաւունք ձեռք բերած են երկին-  
քին տակ:

Անտարակոյս շատ ապուշ ու անխելք պիտի ըլլար  
պնդել թէ՛ աշխարհիս դժբախտները իրաւունք չունին  
տխուր ըլլալու, ինչպէս նաեւ բարեբախտները՝ զը-  
ւարթ: Բայց ո՞վ կրնայ իրաւունք ունենալ վճռելու թէ՛  
կեանքը չարժեք ապրիլ ընդհանրապէս: Այո՛, ես կ'ըն-

դունիմ թէ կայ իրօք առողջ ու անդբարդ յոռետեսութիւն մը՝ որ ժխտական ու կործանարար չէ սակայն: Անիկա աւելի այլասէր դժգոհութիւնն է որ, անձնականութեան նեղ առանձնոցէն դուրս գալով, կը լայննայ, կը տարածուի ամբողջ մարդկութեան վրայ խորունկ գիտակցութեան մը լրջութեամբը, եւ առողջ, կորովի եւ փրկարար նպատակներով: Այս ճշտումը՝ յստկանիչն է արդէն ժամանակակից մեծագոյն գրականութիւններուն:

Տեսակ մը անիմաստ fatalisme ի ճակատագրականութեան արդարացումովը ընդունել կեանքը իր բոլոր դիմայեղումներուն մէջ, — այդ լաւատեսութիւնը քիչ մը շատ միամիտ ու վտանգաւոր պիտի ըլլար: Պէտք էր դժգոհ դադարաբանութիւն մը՝ կեանքի լաւագոյն հեռանկարներուն գիւնովութիւնը տար մեղի, մեր ապրելուն իրբեւ նպատակ: Կեանքին մէջ, ըստ Շօրէնհաուէրի, եթէ նոյն իսկ տառապանքը ըլլար գրական, սիոփանքները կամ անոնց հաւանականութիւնները կան, որ կրնան սրտապնդել: Պէտքերուն ցաւին՝ կրնայ յաջորդել դոհացման հաճոյքը կամ անոր հնարաւորութեան դադարաբապաշտ միսիթարանքը:

Անձուկ իմաստով լաւատեսութիւն ու յոռետեսութիւն՝ իրաւացի են միայն՝ երբ կը սահմանափակուին լսկ անձնական շրջանակի մէջ: Պարզ փորձարութիւն մը՝ աշխարհը ցաւի ու արցունքի հովիտին վերածելու իրաւունք չունի, եւ, հանգիստ մարտողութիւն մը՝ չի կրնար անսխալօրէն վճուել «*Tout va pour le bien dans le meilleur des mondes possibles*», Լայպնիցեան առած՝ զոր այնքա՞ն հիանալիօրէն ծաղրած է *Candide* ի հեղինակը:

Իրերը եւ աշխարհը դատելու համար բարոյական

նշանակութեան տեսակէտէն, կարելի եղածին չափ աշխատելու է դուրս ելնել անձնականութեան նեղլիկ խցիկէն, եւ փոխանակ դուռ ետական օգտապաշտութեան մը ձգտելու, պէտք է հասկնալ բնութեան դործը այնպէս՝ ինչպէս որ է :

Մահն իսկ, որ ցաւերուն մեծագոյնն է, երբ կը հասնի կերպով մը իր ժամանակին, երբ իր պաշտօնը լրացուցած գործարանաւորութիւն մը կը հարուածէ, պէտք է դատուի իմաստասիրական ճշմարտութեան տեսակէտէն: «Պարտինք ընդունիլ ու կրել մահը ո՛չ իբրեւ չարիք մը կամ վիշտ մը, այլ իբրեւ կեանքի վերջին fonction ը, պարտքի մը հատուցումը, եւ դերագոյն պարտականութիւնը: Անիկա իրականացումն է ամէն էակներուն հասարակաց օրէնքի մը օգտակար իրենց համար ու փրկարար մեզի համար իսկ: Քանի որ մեր նախորդները մեռած են իրենց տեղը մեզի տալու համար, մենք ալ պարտինք մեռնիլ՝ տեղ բանալու համար մեր յաջորդներուն:» (1)

Ասկից աւելի վսեմ ու պարզ մտքի հաւասարակըշուութեամբ կարելի չէր դատել աշխարհի դործը:

Այլ եթէ կ'ուզէք, յոռետեսութիւնը բացարձակապէս առաջ մղենք, կեանքը նկատելով Շօքէնհաուէրի համեմատ «Անդադրում որսորդութիւն մը, ուր մերթ որսացող ու մերթ որսացուած, էակները իրարու ձեռքէ կը քաշկուտեն սարսափելի որսամասի մը փերթերը, ամէնով իրարու դէմ մղուած պատերազմ մը, տեսակ մը ցաւին բնական պատմութիւնը՝ որ սապէս կը համա-

---

1) Bourdeau. Causes et origine du Mal (Revue Philosophique, Août 1900), cité par Galante, Précis de sociologie.

ուտուի — ուտել՝ առանց պատճառի, միշտ տառապիլ, միշտ պայքարիլ, յետոյ մեռնիլ, եւ այսպէս յաջորդաբար դարերու դարերուն մէջ, մինչեւ որ մեր մոլորակին կեղեւը փսսորուի ցիրուցան, ամենափոքր մասնիկներով:»

Այս այնքան միակողմանի հաւատքն իսկ ուր սկզբունքով կ'ուրացուի ուրախութեան գոյութիւնը, իրաւունք պիտի տա՞ր իրաւացիօրէն եզրակացնել թէ՛ հելքի ճամբայ մը կայ անէութեան, ո՛չ — լինելութեան, կամքի (Willie) ուրացման մէջ, ելք մը՝ որուն իրագործումը այնքան անհեթեթ է ու անհասկնալի՞ որքան անոր հետեւանքը՝ անստոյգ: Ծիծաղելի չի՞ դառնար մարդկային ճղճիմ իմացականութիւնը, երբ բնութեան անյեղլի օրէնքին, կեանքի սկզբունքին կը յաւակնի ընդդիմադրել իր ողորմելիօրէն լիրբ ու արգահատելիօրէն խեղճուկ մէկ քմահաճոյքը: Կարելի՞՞ բան է արդեօք բնութեան լուսանցքէն դուրս՝ գոյութեան ժամադրավայր մը հաստատել մեր եսին: Կարելի՞՞ բան է արդեօք, — եթէ նոյն իսկ մարդկային տեսակը՝ ամբողջական միահաղոյն ինքնասպանութեան մէջ հնարաւոր ըլլար մէջտեղէն վերցնել, — կարելի՞՞ բան էր արդեօք՝ քայքայել ջնջել բնութեան այն ոյժերը՝ որոնք կրցած են իրարու քով դալ, իրարու հետ համաձայնիլ, գործարանաւոր ու ինքնագիտակ կեանքը տօնելու համար մարդուն մէջ, եւ որոնց այդ համերաշխութեան յատկութիւնը՝ առ այժմ որ եւ է կերպով խանգարուած ըլլալ չի թուիր (??):

Չէ՛, վախճանական պատճառներու սկզբունքին համեմատ չէր, ո՛չ ալ բացարձակ լաւատեսութեան մը միամտութիւններուն մէջէն, որ պիտի ուզէինք մարդկային կեանքին նպատակը եւ ճակատագիրը սահմանել:

Ըստ ինքեան՝ կեանքը ո՛չ աղէկ ըլլալու է՝ ոչ դէշ բարձարձակօրէն: Կարելի է միայն հաստատել ամէն հաւատարակչիւ իմացականութեան համար, թէ՛ կեանքը, մարդուն մէջ հասած ինքնադիտակցութեան բարձրագոյն վիճակին, մեղի կը յայանուի գեղեցիկ երեւոյթ մը, եւ իր սլաշտօնին ու ելեւէջներուն մէջ՝ ունի խանդավառող ու յարատեւ գործունէութեան հրաւիրող պատահումներ՝ որոնց համար անդիտակցօրէն, բնական մղումով, հաճոյք կ'ըզանք յոգնիլ, որոնց համար կը զուարթանանք, եւ կը հետամտինք ասորելու կոտէին: Այս տրամադրութիւններուն մէջ, ա'լ բարոյական նշանակութիւն չեն կրնար ունենալ ո՛չ փիլիսոփայական ճշմարտութիւնը, — նոյն իսկ այնքա՛ն իր իսկութեան մէջ ժխտական, ոչնչական, յուսահատեցուցիչ, — ոչ ալ ակտաւոր հողիի մը յոռետեսութիւնը, այնքա՛ն անձուկ, այնքա՛ն միակողմանի ու եսական:

Եթէ փիլիսոփայութիւնը կը միտի տրամաբանօրէն ունայնութեան, եթէ վախճանական պատճառներու չդոյութիւնը կը յուսահատեցնէ մարդը, թերեւ տրամաբանական ըլլայ եզրակացնել թէ՛ կեանքը չարժեք ասորիլ, քանի որ բացարձակ նպատակի մը գոյութիւնը ցնորք մը կը դառնայ: Ասիկա՝ զուտ մարդկային պահանջիտութիւն մըն է սակայն: Մարդկային իմացականութեան մէկ ընդունակութիւնը, — տրամաբանութիւնը, — պահանջելի չի կրնար ըլլալ որ բնութեան օրէնքները վարէ: Եւ ան, բնութիւնը, որ չի ճանչնար թէ ի՛նչ է տրամաբանութիւն, ճիշդ ատոր ասացոյցը տուած է սուտը, պատրանքը, դէպքերու կոյր շարալարութիւնը գնելով կեանքի սկզբունք: Նախապատմական շրջաններէն մինչեւ մեր օրերը, նկատողութեան առնելով մարդկային բնաշրջման բարոյական ազդակ-

ները, կրօնք, աւանդութիւն, հաւատալիք, եւն․, — կարելի է հաստատել թէ՛ մանաւանդ ստույգութիւնը կըրցած է ըլլալ անկախօրէն բացարձակ ճշմարտութենէն՝ որ ըստ ինքեան ոչնչական է, — կեանքի զարգացման սկզբունք 1) : Նիցչէ իրաւունք ունի ուրեմն ըսելով՝ թէ «Հարկ է ոչ-ճշմարիտը ընդունիլ իբրեւ կեանքի պայման» :

Իրաւցընէ, — եզրակացնելու համար, — տղայական չպիտի՞ ըլլար տիեզերքին կրաւորական դիրք մը հրամայել՝ հանդէպ մարդկային իմացականութեան՝ որ մասն է ամբողջին :

Այս բոլորէն յետոյ՝ Տէմիրճիպաշեանին անկեղծութիւնը չէ որ կասկածելի պիտի ուզէի նկատել : Իր պարկեշտ ու մաքուր մարդու համբաւը՝ անվիճելի է : Գիտմամբ ծանրացայ միայն այս կէտերուն վրայ, անոնց ազդեցութեան հակասութիւնները մատնանշելու համար իր մտադրութիւններուն ու յաւանդութիւններուն հետ, որոնք երբեմն նոյն իսկ անխմաստ լաւատեսութեան մը նշանառութիւն կը փորձեն :

Այլ եթէ առհասարակ իր մահաբաղձ ու ժխտական ոգին սուղտանք մը ըրի իրեն, չեմ կրնար արդարութիւն չընել իր ուրիշ մասնաւորութիւններուն համար՝ որ նշանակելի պիտի մնան մեր արդի դրականութեան մէջ :

Այնքա՞ն նանրասէր, այնքա՞ն միամտօրէն անձնագով ու ոէքլամին համար այնքա՞ն ախտալարակ զգայնութեամբ զգայուն այս մարդը՝ Օտեանէն յետոյ, առաջնակարգ արձակադիր արուեստագէտն է մեր աշխարհիկ գրականութեան առաջին շրջանին : Ոչ ոք իրեն

---

1) « De Kant à Nietzsche », par Jules de Gaultier.

չափ ամենակարող Աստուածն է իր գրչին, այդ մոգական, առաձգական, գերառաձգական փետուրին՝ որուն այնքան արուեստոտ էջեր կը պարտինք: Տէմիրճիպաշեան՝ մեր ամենէն իսկատիպ գրողներէն մէկն է, լեզուի ու ոճի տեսակէտէն: Իր լեզուն ու իր պարբերութիւնը՝ ինքնայատուկ արուեստ ու գեղեցկութիւն ունին: Ես զինքը կը համարիմ անկապաշտ մը, (décadent) ոճի ու լեզուի տեսակէտներէն, եւ այս վերադիրը իրեն համար մեղադրանք մը ըլլալէ շատ հետի է: Ընդհակառակն: Պոտլէռի, — որուն անունը, Հայնէինին հետ առաջին անգամ իրմէն կարդացած եմ, — Յալին Ծաղիկներուն յառաջաբանին մէջ, Թէօֆիլ Կօթիէ բանաստեղծը սապէս կը սահմանէ անկապաշտ լեզուն. «Պիւրին բան չէ սակայն պատուելիօրէն (pédant) արհամարհուած այդ ոճը: Վասն զի անիկա կը բացատրէ նոր գաղափարներ՝ նոր ձեւերով ու բառերով, զոր դեռ նոր կը լսենք:»

«Հանճարե՛ղ, կնճոտ, գիտուն, երանգաճոխ ու խուզարկութիւններով լեցուն է ան, որ կը հեռանայ միշտ լեզուին սահմաններէն, փոխ կ'առնէ բոլոր բառարաններէն, գոյներ քաղելով բոլոր երանգապնակներէն, խաղեր՝ բոլոր ստեղծաշարներէն, ջանալով արտադրել ինչ որ ունի մտածումն՝ ամենէն անճառելի, ու ձեւը իր ամենէն տարտամ, ամենէն խուսափուկ շրջափծերուն մէջ. կ'ունկնդրէ ան, զանոնք թարգմանելու համար, ջլախտին նրբին մտերմութիւններուն, խոստովանութիւններուն՝ հինցող կիրքին որ կ'ապապաշտութեան այս ոճը՝ վերջին բառն է բանին՝ նեղը գրուած՝ արտայայտելու ամէն ինչ, մղուած գերագոյն չափազանցութեան:»

Թէոֆիլ Կօթիէն կարգալէ առաջ անշուշտ՝ Տէմիր-  
 ճիպաշեան իր յատուկ բառարանը ունեցաւ: Բառին  
 կերօքը, բառին մօլութիւնը՝ ոչ ոք իրեն չափ առաջ  
 տարած է: Կը սիրէ, կը պաշտէ դանոնք, — բառերը, —  
 այնչա՛փ մը՝ որովհետեւ անոնց երախտագէտ կ'զգայ  
 ինքզինքը այն հաճոյակատարութեան համար՝ որով  
 անոնք անկարելի ճկունութիւններու յանձնառու կ'ըլ-  
 լան իր ամպոտ ու միսթիկ մտքին կնճռոտ ու հիւան-  
 դագին արարենիները (arabesque) պատկերացնելու  
 համար 1), որքան իրենց սոսկական գեղեցկութեան  
 պատճառով: Դիտելի է թէ իր բառերը՝ միշտ Փրանսե-  
 րէններու թարգմանութիւններ չեն: Իր ստեղծածները  
 կան անոնց մէջ, նորերը, անթարգմանելիները, բոլո-  
 րովին գեղեցիկ ու յանդուգն, բարբարոս կամ նագելա-  
 գեղ, յաւէտ իսկատիպ բառեր՝ որոնք իսկատիպ գրիչ-  
 ներու ծայրը միայն գոյութեան իրաւունք կրնան ունե-  
 նալ, բացատրելով անոնց արտակարգ խառնուածքը եւ  
 իմացականութեան նրբերանդները: Նարեկացին ալ  
 միեւնոյն երեւոյթը չի՞ ներկայացնէր միթէ, ինչպէս  
 շատ իրաւամբ գիտել տուած է Յովհաննէս Գաղան-  
 ճեան: Ասոր համար է որ առաջին հանդիպողին նոր  
 բառեր չինելու մարմաջը՝ այնքան ցաւալի ու ուամիկ  
 հետեւանքներ կրնայ ունենալ:

Տէմիրճիպաշեան՝ մեծ բանաստեղծի ու փիլիսո-  
 փայի համբաւ ունի մեր մէջ: Արմատական բան մը  
 չկրցան ընել անոնք՝ որ այս համբաւը բղքտել ջանա-  
 ցին հանրութեան համոզումին մէջ: Ամենէն վերջը,  
 քննադատութեան անողոք դատաստանին առջեւ, որ  
 իր ունայնութիւնը բացը կը հանէր, Տէմիրճիպաշեա-

1) «Բառերուն նշանակութիւնը անձանց համեմատ  
 կը փոխուի», կը գրէ ինքը տեղ մը:

նին անունը՝ բարի մարդուն ու հիւանդին չքմեղանքովը փաստաբանեցին : Կարելի չէր չկարեկցիլ, ու ընելիք չէր մնար այլեւս : Հասկնալի է թէ հասարակութեան մը համար շատ դժուար ըլլար հին վարժութենէ մը յեղակարծօրէն հրաժարիլ : Նախապաշարուած ի՞նչ անմեղ ու խանդաղատեցնող միջոցներու կրնայ դիմել, ինքզինքը պաշտպանելու համար սրբապիղծ յանդգնութեան դէմ, եթէ այս վերջինը նոյն իսկ ըլլայ օղտակար ու բարերար :

Տեսակ մը խղճի միտք կայ, սակայն, որ դիւ շատ անդամ անհանդիստ ըրած է, զգացման մը տկարութիւններուն մեղադրանքով տագնապելով : Ինչպէ՞ս յանձն առնել Գաղափարին զոհողութիւնը, զգացումին անունով, որ տկար է, որ այնքան երբեմն անզօր է բանաւարութեան առջեւ :

Ատոր համար է որ պիտի համարձակիմ, — թէեւ այնքա՛ն ցաւելով, ինչպէս դիւրահասկանալի է, — ըսել թէ՛ Տէմիրճիպաշեան, աւա՛ղ, չեղած է՛իր համբաւին մարդը :

Ի՞նչ պիտի մնայ իր իմաստասիրութենէն, ըսէ՛րք : Չէ՞ք հաճիր խոստովանիլ թէ՛ բառին պատկանելի փայլին հանդէպ՝ իր ճղճիմ ու հիւանդատ մտածուած պիտի խանձի, ինչպէս յարդի շիւղ մը՝ վառարանի բոցին մէջ : Ու այս դժբախտ փորձէն՝ զինքը չպիտի փրկեն, — աւա՛ղ վերստին, — ո՛չ Սաքիու - Մոնին, ո՛չ Կոմիլիկիոսը, ո՛չ Ծօրէնհատէրը, ո՛չ Սրէնսէրը, ո՛չ Օկիւսթ Քօնթը, ո՛չ իսկ Լիթոէն, որոնց անունները հազարաւոր անգամներ կարդացած է մեր դիւին, առանց անոնցմէ լուրջ ու հասկնալի բան մը պատմելու մեղի, եւ որոնց մտերմութեան մէջ ապրած ըլլալ հաւատացուցած է զանոնք՝ որ քննադատութեան սկեսպ-

տութիւնը չճանչնալու չափ լարեմ'իտ են, — բարե-  
սի՛րտ են մանաւանդ: Այս պայմաններուն տակ, հա-  
մարձակութիւնն ունեցէ՞ք խոստովանելու՝, թէ՛ այս  
փայլը կեղծ է ու այս աղմուկը կատակասէր ու ան-  
տեղի:

Շատ կը հաւատա՞ք թէ բան մը, լուրջ ու յաւեր-  
ժագեղ բան մը պիտի մնայ իր բանաստեղծութենէն:  
Նախ, իր արձակը փոխն ի փոխ հեղասահ առուի մը  
քնքուշ ու նազոտ հեծկլտանքը, արարական նժոյգի մը  
ջլապիրիկ ճկունութիւնը կամ դահավէժ դետի մը շուա-  
րուն ու յորդ զնացքն ունի, իր տաղաչափութիւնը՝  
կազ մուրացկանի մը ողորմելի կոտորտուամերով կը  
յատկանշուի: Տէմիրճիպաշեան այն տաղանդն է՝ որ  
գրած է ժամանակիս ամենէ՛ն դժուարընթեռնելի ոտա-  
նաւորներէն, միշտ աղտոտուած գրաբարի գարշելի  
ցեխացայտերով, 1) ու մի՛շտ աւելի ռամիկ եւ արձա-  
կունակ, — մինչդեռ իր արձակը՝ մերթ կշռական ար-  
ձակ մըն է:

Յետոյ, եթէ իր դրչէն ելած երկայնաշունչ աշխա-  
տութիւն մը այսքան երկար տարիներէ ի վեր տակաւին  
դոյութիւն չունեցաւ, իբրեւ յուշարար իր անունին՝  
սպաղայ սերունդներուն, իր **հատուածեալ տաղանդին**  
երբնեբանդ փետրափոխութիւններն ալ՝ տակաւին  
քիչ մը առենի համար, ծաղկաքաղներու եւ հատըն-  
տիւններու մէջ քաջքշուելէ, զեղազխութեան ուսու-  
ցիչներու կարճ շնչառութիւնը՝ վայրկեանական ընդլայ-  
նումներու ենթարկելէ յետոյ, պիտի մոռցուին, պիտի  
մէկ կողմ նետուին:

---

1) Յօդուածագրին գրաբարի դէմ սայն քշմամանիկ  
յարձակումն անհեթեթ ու անխմատ կը գտնենք:

Ծանօթ. «Արեւ. Մամուլ»ի խմբ.

Երբեմն՝ sentimental էր մեր ամբողջ հասարակութիւնը: Ինքն էր որ Տէմիրճիպաշեանը սնոյց՝ իր անմահութեան միամտօրէն յանդուզն թեկնածութիւններուն մէջ: Ոմանք, երբեմն, իր լալկան եսապաշտութիւնը, իր փորի ցաւերուն անտանելի պատմութիւնները, իր «անձնական գրականութիւն»ը, — այնքա՛ն քիչ Եօթէնհաուէրեան կամ Պուտտայական, նկատելով որ, արուեստին տեսակէտէն, անձը հարկ է քաշուի, իր տեղը փոխ տալու համար դադարեցին, նկատելով որ «արուեստը եւ բանաստեղծութիւնը հարկ է ըլլան անանձնաւոր» — աւարկայական, — ըստ իր սիրած իմաստասէրին, — զոր ինքը կարծած էր ընել Ամիէլլին, Հայնէին կամ Պայրընին հանդիտութեամբ, — տափալ ու տղայական դտան: Այդ բանը զարմանք ու վիշտ պատճառեց իրեն, — այնքա՛ն անակնկալ էր, — եւ, յուզմունքի գերադոյն վայրկեանի մը մէջ, իր միամիտ դիտակցութիւնը սրուած զգաց յայտարարելու թէ՛ այն մեղաններուն համար՝ զոր աննկատ շուայութեամբ վատնած էր այսքա՛ն տարիներէ ի վեր հոս հոն, ինքզինքը «արժանի կ'զգար հայ ժողովրդեան սիրոյն ու յարգանաց»: Կրնայի՞ք ըսել թէ ատիկա անօրինակ դժուարապահանջութիւնն ըլլար:

Այլ բացարձակապէս ոչնչութեան չէ կարելի վերածել այս մարդը՝ որ այնքա՛ն յոգնած է գրականութեան համար: Կէտ մը կայ՝ ուր իր մատուցած ծառայութիւնը անվիճելի է: Բայց այս այնքա՛ն աւելի ցաւալի է՝ որքան այդ կէտը՝ իր յաւակնութիւններուն ամենէն աննշանը պիտի մնայ: — Հո՛ն են այն քառորդ երկոտասանեակ Փրանսահայ ու հայաֆրանս բառարանները, զոր պատրաստելու տաղտուկը յանձն առած է, ո՛չ թէ հայ ուսանողներու օգտին մտադրութեամբն անշուշտ, — վասն զի ատիկա քիչ մը շատ տափալ եւ

ուամիկ պիտի ըլլար, — այլ իր բառաշինական միա-  
մտութիւնը դո՛ւունակօրէն ղբօսցնելու արուեստագի-  
տական քմայքով: Այլ, ըսի՞ արդէն, — աշխարհի  
հեղնութիւններն անողոք կ'ըլլան, — եթէ Տէմիրճի-  
պաշեանին դրադէտի անունը՝ դուռը բաց մոռցուած  
քանարիկի վանդակի մը տպաւորութիւնը ձգել սկսած  
է, անդին, մինչեւ նորագոյններուն ու կատարելագոյն-  
ներուն երեւումը, իր բառարանները պիտի թղթատուին  
հայ աղքատիկ ուսանողին երախտագէտ ձեռներուն  
մէջ, որ, հեղինակին նորակերտ բառերէն հրապուր-  
ուլէ աւելի, — իրաւամբ աւա՛ղ, — Նորայրին կամ  
Նուպարեանին պատկառելի ու անմերձենալի վսեմու-  
թենէն խոյս տուած պիտի ըլլայ, «ի հարկէ ստիպեալ»:

1 Մարտ 1902

«Արեւելեան Մամուլ» էջ 243-253

## ԳԱԼՈՒՍԻ ԿՈՍՏԱՆԴԻՆԱՆ

Տեսակ մը ցնցող շացում կը համակէ զիս, ամէն անգամ որ Գալուստ Կոստանդեանի վրայ կը խորհիմ: Ու, իր մահուանէն ի վեր որ առիթները բազմապատկուած են իր վրայ խորհելու, հետզհետէ կը համոզուիմ թէ այդ մարդը իրօ՛ք եզական ու թանկագին տիպար մըն է եղեր: Եւ անհուն ցաւ մը կը համակէ զիս, վասն զի աստուածները կը մեռնին, ու անոնց տեղերը պարապ կը մնան. հորիզոնին վրայ մեծ դէմքեր կ'անհետանան, եւ հողը, ուր նոր տունկերը կը ծլին, կը սնանկանայ աղնուազգի պողպերութիւններէն, ա՛յ յուսատու չերեւիր ու տատակներու անշահ բուսակաւնութեան մէջ խոպանացած է, աւա՛ղ:

Գալուստ Կոստանդեան գիտուն միտք մըն էր, — թէեւ կը հաւատան մեզ թէ իր աշխատանոցին մէջ գիտունի ձեռքեր ալ կիրառութեան դրած է:

Ասով՝ չեմ ուզեր ըսած ըլլալ թէ՛ գիտուններէն ու գիտուն միտքերէն բացարձակապէս սնանկացած է ալ հայ շրջանակը: Վասն զի Մանուէլեան՝ իր անունը փառաւոր միացման գիծով մը կցած է այսօր Մաթիա Տիւլալի պէս հոյակապ գիտունի մը անունին, եւ Գօլօլեան՝ իր անձնական գիտական խողարկութիւններուն վրայ Փրանսերէն ուսումնասիրութիւններ կը հրատարակէ ու կը դնահատուի: Աւելի մեզի մօտիկ, Տօքթ. Տաղաւարեան, իր ծանօթութիւններուն անըս-

պառելի շտեմարանէն ամէն օր բան մը ունի ներկայացնելիք՝ մեր հասարակութեան հետաքրքրութեան : Եւ դեռ ուրիշ անուններ չեն պակսիր, զոր կարելի չըլլար յիշել, շարքը պատկառելիօրէն երկարելու համար :

Չէ՛, չըսի եւ չուզեցի ըսել թէ հայ գիտական միտքեր ու հայ գիտուններ չունի՛նք ալ : Պիտի ուզէի ըսել, պիտի ուզէի չեչտուած ձայնով մատնանշել, սակայն, թէ՛ Գալուստ Կոստանդեանին պէս գիտական միտքեր ա՛լ չարտադրեր մեր հողը : Խղճմտօրէն ուշադրութիւն ըրէք գիտելու՝ թէ տեսակ մը կեդրոնախոյս զօրութիւն դուրս կը նետէ մեր սահմաններէն սերմերը՝ որ այդ հազուադիւտ բոյսը պիտի արտադրէին, ու հայ մտքին լաւագոյն, ազնուագոյն բողբոջները՝ վտարանդի գետիններու հիւրընկալութիւնը կը փնտռեն :

Կոստանդեան պարզ Ժողովրդականացնող մը չեղաւ միայն : Անիկա միեւնոյն ատեն անկեղծ ու կորովի կռուող մըն էր : Կոստանդեան՝ հայերուն Պիւհնէրը պիտի կրնար համարուիլ :

Professionnel, արհեստով գիտուններ կան, որոնք գիտութիւնը գիտութեան համար կը մշակեն, իրենց աշխատանոցին մենամուտ առանձնութեան մէջ, եթէ գլխինք չառաջնորդեր բարձրօրէն մարդկային փառասիրութիւն մը այն վտանգաւոր ձեռնարկներուն մէջ՝ ուր իրենց կեանքը մահուան սարսափին տակ կը դողայ ամէն վայրկեան : Լավուազիէներուն, Կէյ-Լիւսաքներուն, Նանզէններուն շառաւիղն է աս :

Չէ՞զոք ձեռքով մը՝ գիտութիւնը Ժողովուրդին հրամցնողները, գիտութեան սնունդին կառստնները կան, — ինչպէս մեր Տաղաւարեանը, — անփոյթ՝ իմաստասիրական ընդհանրացումներու եւ եզրակացութիւններու մասին : Կա՛ն նաեւ կռուողները՝ գիտութեան հաւատքին համար : Գիտութեան առաքեալներն

են անոնք, որ ճշմարտութեան խօսքը կը քարոզեն: Վասն զի հո՛ւս ալ կայ այն ներսէն մղում տուող անձողորպրելի ու մաքուր ուժը, որ կ'անուանուի հաւատք, եւ առանց որուն՝ մեծ դործերը պիտի ճոզէին, պիտի ցամքէին՝ դաճած ու վրիպոտ անճրկումներու մէջ: Ու գիտութեան հաւատքը անո՛վ աւելի վսեմ ու փառայեղ է որ, մարդկային իմացականութեան կրօնական - բնազանցական պէտքին՝ ամենէն աւելի տրամաբանական ու բանաւոր պայծառութեամբ կը թուի դոհացում տալ: Ահա՛ այս վերջիններու խումբէն կը համարուին Պէսթըլօները:

Գիտութեան իմաստին, գիտութեան բանին աւետարանող մըն էր նաեւ՝ Գալուստ կոստանդեանը: Իր գրքոյնը, Մեքոսի վրայ, որուն վերլուծումը չպիտի բնաւ փորձեմ ընել, տեսակ մը հանդանակ է, ուր կը տաքնայ ու կը բռնկի իր վճռական մարդու բացարձակ անկեղծութիւնն ու խանդավառութիւնը: Այդ խանդավառութիւնը՝ շինիչ ըլլալէ առաջ պարտաւորուած էր կործանարար ըլլալ: Ատկէ՛ այն հալածանքը, որ առաջնալին կրունկը կը հետապնդէ դարերէ ի վեր: Վասն զի պղտիկ ոճիւր չէ յանդգնութիւնը՝ որ կը միտի մտաւորական ու բարոյական հանդարտ ու երջանկաբեր statu quo- ի մը ամբարիշտ տակնուվրայութեան 1):

1) Աշխարհի չորս կողմ գիրուցան կրօնային հասարակութեան մը միութեան եւ քայքայուն գոյութեան խարխալսը կազմող կրօնի եւ եկեղեցւոյ հիմքերը քանդող փիլիսոփայութիւն մ'էր ձախող եւ յայտնապէս անդէպ ու անժամ: «Մեթոսի վրայ» գիրքը՝ որ ո եւ է կերպով չպատրաստուած հայ անհատը կ'ըմբռնէր, կ'սասանէր վտանգաւոր կերպով ու յայտնի վնասով:

Ծ. Խմբ. «Ա. Մ.»ի

Կոստանդեանինը, Կոստանդեանի ոճիրը, մանա-  
ւանդ, մեծագոյններէն էր այնպիսի ժամանակի մը ու  
այնպիսի հասարակութեան մը մէջ՝ որուն համար ի-  
մաստութեան սկիզբը՝ յաւէտ ճակատագրուած ըլլալ  
կը թուի՝ Աստուծոյ վախը: Իրաւամբ աստուածաշնչա-  
կան շանթ մը պէտք էր հալածէր այդ մահկանացուն՝  
որ իր հէգ ու անբախտ նախահօր հիւանդադին հետա-  
քըքրութեան մէկ հեռաւոր վերապրումին վտանդաւոր  
ախտանիշը ցոյց կուտար, հաւադարձական երեւոյթով:  
Գիտութեան ծա՛ռը: Ո՛հ, ահա՛ սկզբնական ոճիրը, որ  
մարդը դրախտէն վռնտեց, այն դրախտէն՝ ուր Տգի-  
տութիւնը, անդորր ու ապահով, զինքը երջանկութեան  
լուսացանցին մէջ կը սլարուէր: Կը տեսնէ՞ք ինչպէս  
կը պատժուէին աստուածային առաջին պատուէրին  
դէմ խիղախուած ընդվզումները:

Ու Կոստանդեան՝ Գիտութեան ծառին տարաբախտ  
հետաքրքիրն էր: Անոր համար մեր հասարակութիւնը  
զինքը դրախտէն վռնտեց, անոր համար սատանան՝ այդ  
անբարիչտ հայուն եղբայրը կարծուեցաւ: Իր գրքին  
համար, զոր ցուցամատին մէջ կ'անցնէին, զինքը բա-  
նադրեցին, նզովեցին, ամէն ինչ ըրին՝ սատանան,  
Ուէլսի անտեսանելի մարդը մատնացոյց ընելու նպատա-  
կով: Ահագին սպառնալիքի մը սարսափը սաւառնած  
էր՝ փիլոնաւոր խղճմտանքներուն վերեւ: Քահանային  
սեւ գրուանը՝ անկումի ցնցում մը կրած էր: Ու ժամա-  
նակին պատրիարքը իր տոպրակ մը շքեղ մօրուքով, կը  
պատմեն, բողոքական պատուլիի մը աստուածաբա-  
նութեանը պարտաւորուեցաւ ապաւինիլ, հերքելու հա-  
մար դայթակղութեան ու կործանումի խօսքը, ու փրո-  
կելու, պաշտպանելու համար անոր դէմ՝ հնօրեայ  
նուիրականութիւններուն մասնատուիք: Միթէ կրնա՞ր

ներելի ըլլալ՝ խորտակել զայն, եւ իր ախտը ու մթին պարունակութիւնը՝ ճշմարտութեան պայծառ լոյսին յուցադրել:

Մեքօտի վրայ գրքոյկը սակայն, իմաստասիրական անհեթեթութիւններու կամ կրօնական հերձուածներու հանդիսարան մը չէր, տեղի տալու համար այդ իրարանցումին: Մէկ կողմէն, բնական ու բնապատմական գիտութիւններու յայտնած ճշմարտութիւններուն համեմատ, կը պարունակէ անսեթեւեթ ու համառօտ ուրուագիծ մը, այն ճամբորդութեան՝ զոր մարդկութիւնը կատարած է «Ծննդոց» մթին չուկէտէ մը՝ մինչեւ այսօր, «համագլխային ու անկղեր լուսաւորութեան Քանան»ին սահմաններուն մօտիկ: Միւս կողմէն, հաւատական ու տրամաբանական եւ կամ աստուածաբանական ու բնագանցական ըմբռնումներու աւերակներուն վրայ՝ գրական կամ գիտական մտքին յաղթանակը հռչակող ու քաջալերող գործ մը եւ գիտական մեթոտի ամենէն պերճախօս, ամենէն ուժով ու անկեղծ ջատագովութիւն մըն է, զոր երբեք կարդացած ըլլանք:

Կոստանդեանի գործը ըլլալով պարզ ժողովրդականացնողի եւ interprete ի գործ, իր արժանիքը շատ յարաբերական կրնար մնալ, այնպիսի ընկերութեան մը մէջ՝ որուն ա՛րդէն մասամբ օտար չըլլար գիտութեան ամբարշտութիւնը: Բայց, այնպիսի միջավայրի մը մէջ, զոր կենդանացնող շունչը դեռ աստուածաբանական ծակ ու ողորմելի փքոց մը կը հայթայթէ, Կոստանդեանի արժանիքը, ինչպէս արդէն մատնանշեցինք, դաղափարի մարդուն կամքոտ ու անվհեր արիութեան վրայ հիմնուեցաւ: Իր գործը այնքան հատուկեան որքան կոուլի գործ մը եղաւ: Գիտունի համեստութիւնը՝ դաղափարի պաշտամունքովը խանդավառուածի պարագային լծորդուած, ամէն նկատողութիւն

սրբած էր իր առջեւէն, ու ճշմարտութեան սէրը՝ անձնական ճղճիմ հաշիւներուն մոռացումը բերած էր: Ապա թէ ոչ, գիտունը, գիտա՛կ զինքը շրջապատող աշխարհին իմացական ու բարոյական ականդութիւններուն, իր աշխատանոցին մենական պատերուն մէջ առանձնացած, քթին ծայրը արհամարհանքի ու հեղնութեան ժպիտ մը, կրնար իր գործը շարունակել իր անձնական հաճոյքին համար միայն, ինչպէս Պ. Ժօռտանը, Զոլայի Աշխատութեան մէջ: Այլ Կոստանդեան՝ «երկար տարիներու զննութեան ու մտածողութեան» հարուստ պաշար մը՝ իր անձին ու իր եսասէր հաճոյքին վերապահելու, զայն իր մտքին մէջ կղպելու տեսակ մը կծծի ունայնասիրութիւնը չունեցաւ: Այո՛, իրեն պէս լեցուն մարդու մը համար, որ չէր անդիտեր իրեն սպասող ընդունելութիւնը, զինքը շրջապատող թշուառ խաւարին վրայ ճշմարտութեան պայծառ լուսամուտէն ինքնագոհ եւ արհամարհոտ նայուածք մը միայն պտտցնել՝ դիւրին ու հաճելի պիտի կրնար ըլլալ անտարակոյս: Այն ատեն սակայն, իր բոլոր արժանիքը՝ ամուլ հմտութեան մը տժղոյն արժանիքը միայն պիտի ըլլար:

Կոստանդեան՝ չկրցաւ տոկալ սակայն. իր անհատական ներգործութիւնը՝ պարտաւորուեցաւ տեղի տալու հաւաքական հակադրեցութեան, — տգէտ, անխելք, կոյր, — եւ Արեւելեան Գիտական Մատենաշարին Ա. հատորը՝ պարտաւորուեցաւ նաեւ ըլլալու՝ վերջինը:

Կոստանդեան լուց, — վասն զի հնար չէր ուրիշ կերպ ընել, — ու իրեն հետ նա՛եւ այն քանի մը հաղուագիւտ բարեկամները, Մսերեան, Ոսկան, եւն., որ գիտութեան դրօշը պահ մը կանդուն պահել փորձած էին: Հերոսը՝ վերջնականօրէն պարտուած ու իր մէջ՝ դադափարը անդարմանելիօրէն ինկած պիտի նկա-

տէինք եթէ մեզի չիմացնէին թէ՛ հեռու ըլլալէ դասալիք մը, որ կը մատնէ իր պաշտամունքն ու կ'ուրանայ իր հաւատքը, Կոստանդեան կ'աշխատէր միշտ իր propagande ի գործին մէջ, — բայց այս անգամ Փրանսերէն գրեւով:

Յետոյ, մահուանէն վերջ, իր կտակը իր իսկատպութեամբը եկաւ միեւնոյն բանը շեշտել: Հազար լիրա արժողութեամբ մատենադարանը՝ Իզմիրի Յոյն ընթերցատան կը նուիրէր:

Իր կենդանութեանը իր վերարկուին քղանցքին հետամտող թափառկոտներուն շուրջը՝ այս անգամ իր գիւհին շուրջը խմբուեցաւ բացարձակ անվախութեամբ: Քաջութեան բարձրագոյն աստիճանն էր այս:

Իրաւ, Կոստանդեան քէնոտած մըն էր թէեւ, — ու որեւէ քէն՝ ժխտական հոգեբանութենէ մը կը թուի բղիւիլ, — բայց իր կտակը իր գործին տրամաբանական շարունակութիւնը կ'երեւայ ինձի, ունենալով իր մէջ բարոյական խիստ նշանակութիւն մը, զոր ժամանակին ոչ ոք գիտեց: Մեր հասարակութիւնը՝ նուրբ ձեւերէն ոչ կը հասկնայ ոչ կ'ախորժի: Կոշտ կերպերը միայն կրնան մեզի զարնուիլ ու ազդել: Կոստանդեան՝ դաս մը կ'ուզէր տալ մեզի տակաւին, հասկնալ ուզէինք կամ ոչ: Միթէ մենք արժէքը պիտի գիտնայի՞նք իր նուէրին. խոզին առջեւ անխելքութիւն չէ՞ր մարդրիտ նետել:

Ու բոլոր կատաղութիւնները նորէն բռնկեցան անպաշտպան դիւհին շուրջը: - Բոլոր սեւ խղճմտանքներն ու բոլոր պլշկած հոգիները իրենց աղտոզութիւնը փորձեցին իր յիշատակին: Կոստանդեան հայ չէ՞ր, Կոստանդեան տոհմասիրութիւն չունէր, Կոստանդեան օտարամոլ էր, Կոստանդեան անբարոյական էր, — Յոյն

Հոմանուհիի մը հետ կը կենակցէր :

Անհունօրէն կը տխրիմ ու ցաւոտ հարցում մը կը յաճախէ միտքս :

Այդ բարոյականութեան միեւնոյն մունետիկները, որ իրենց հոետորութիւնը վատնեցին հէզ պատուական դիտունին մաքուր յիշատակը աղտոտելու, իրենց ճարտարախօսութիւնը, իրենց երգեցիկ տիրացուութեան տաղանդը արդեօք ի՞նչպէս պիտի գործածէին, եթէ Կոստանդեան ազգին նուիրած ըլլար այն մատենադարանը՝ որ աղբերակը եղած էր իր անբարոյական ու անբարիշտ մտածումին : Այն ատեն ազգը պէտք ունեցած պիտի ըլլա՞ր արդեօք անաստուածի մը, անկրօնի մը, աշխարհաքաղաքացիի մը, վտանգաւոր մարդու մը այդ պիղծ ու վնասակար նուէրին : Գայթակղութիւնը նուա՞ղ մեծ պիտի ըլլար արդեօք. Կոստանդեան քաւած պիտի ըլլա՞ր իր Մեթաուի վրայն, եւ հարկ չպիտի՞ ըլլար բանալ հին տետրակներ, քրքրել հին հաշիւներ, ու այրել, ոչնչացնել այդ դիրքը, խեղդել այդ կայծերը, որոնք, ի վնաս բոլոր յարգուած կեղծաւորութիւններուն, ի վնաս բոլոր նուիրական ու պաշտելի ստութիւններուն, — Աստուած մի՛ արասցէ, — կ'սպառնային ճշմարտութեան հանդիսաւոր ու մեծ հրդեհը բռնկցնել :

Ասոնց բոլորին եզրակացութիւնը այնքան օգտակար է, որքան անուղղակի առնչութիւն մը միայն ունի Կոստանդեանի դիմաստուերին հետ :

Բայց այս մարդը ձեզի ներկայացնել փորձած ատենս, յուսահատութիւնը չէ որ կը համակէ զիս մեր սպուռնութիւններուն ու մեր տգիտութիւններուն համար : Կոստանդեանին յիշատակը կորովաբեր ու կաղդուրիչ ընկեր մըն է միշտ : Ասոր համար է որ, ես ալ, մտածողներու ամենէն յետինը, որ հայ մեծ մարդուն

յիշատակին արդարութիւն ընել փորձեցի, իրեն հետ կը հաւատամ թէ, «դրական օրէնքները զմեզ կը գերեն, բնական լոյսը՝ հաւատոյ խորաններուն կանթեղները կը խաւարեցնէ:» եւ «Ձեռք կարծեր որ մէկը կարենայ առանց կրքի ու նախադատութեան ամէն ինչ քննել՝ եւ այս համոզումին չի դալ: Իրք եւ իրաւը այնքան կապուած են մէկ մէկու, շօշափելի եւ զննելի եղելութիւնները այնքա՛ն մեծ հեղինակութիւն մը ունին իբրեւ յաւիտենական ճշմարտութիւն, որ անհնար է փխլիստփայլութեան հետեւիլ, առանց ուշ կամ կանուխ գիտական մեթոտի աշակերտելու:» 1)

Յ. Գ. — Բացատրութիւն մը, նախորդ յօդուածիս, (Եղիա Տէմիրճիպաշեան) լուսանցքին ներքեւ գրաբարի առթիւ Ար. Մամուլի խմբագրութեան կողմէ եղած դիտողութեան մասին, որ թիւրիմացութենէ մը առաջ եկած է:

Գրաբարը սկզբունքով արհամարհող մը, ատող մը չեմ: Ընդհակառակն ես իմ ուրոյն հիացումս ունիմ՝ այդ լեզուին ուրոյն ղեղեցկութեանն ու ճոխութեանը մասին: Իմ ըրած դիտողութիւնս՝ գրաբարախառն աշխարհարարին դէմ էր, եւ աշխարհարարին մէջ գրաբարամու ձեւերը, ասութիւնները նկատած էի զարչելի ցեխացայտումներ, որ արդի աշխարհիկ լեզուին հետո՛չեա՛ն զտուող մաքրութեան ու սահունութեան կը վնասեն: Այս էր ահա ըսել ուզածս:

15 Ապրիլ 1902  
«Ար. Մամուլ», էջ 386-392

---

1) Մեթոտի վրայ, էջ 156:

## ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ

Ասիկա՛ հասուն տարիքին սահմաններուն վրայ դեպերող ազուորուհի մըն է, ու զինքը ուշադրութեամբ դիտողը՝ չի կրնար առանց կանխորոշ կուրութեան ստանալ ստոյգ գեղեցկութիւն մը, որ աւելի թարչամած է քան աւրուած ու քայքայուած: Այդ գեղեցկութիւնը՝ ազուոր ու մխիթարող ենթադրութիւններ ընել կուտայ ի նպաստ հինաւուրց հարսին:

Մօտան յատկանշողներուն ու մօտան ներկայացնողներուն խճողակ երամին մէջ ուր, աւա՛ղ, ինչպէս միշտ սովորութիւն է ըսել, շատ բան կորսուած է հինէն, առանց մխիթարական բան մը շահելու ի նպաստ նորին յաւակնութիւններուն, — ինքը, նախկին ազուորուհին եթէ ոչ այնքան իր համակրութեան, գէթ իր պատկառանքին անկիւնը ունի, որուն համար դո՛հ է, ինքը, գիտակից գոհունակութեամբ մը:

Երբեմն երբեմն, երբ նոր տանտիկիւններուն յաւակնոտ անճարակութիւնները զինքը կը յուսահատեցնեն, անկեղծ ու արդարացի փառասիրութեան թափի մը մէջ, ամուր կղպուած հին դարակի մը բանալին կը դարձնէ: Մանրակրկիտ մարդու զգուշաւորութեամբ ու, պչրանքով մը, որ տակաւին, որ մի՛շտ այնքան կը վայլէ իր գեղակորոյս ամբողջութեան, եւ, անհուն դուրբուրանքով մը, ուր մայրական բան մը կայ խանդաղատեցնող, կը բանայ դարակներ, քոզազերծ կ'ընէ

Թաքստոցներ, անոնցմէ դուրս բերելու համար իր սլաշտելի մատիկներուն ճարտարութեան հմայքը, — մոռցուած արուեստին հպարտութիւնը, — ձեռագործ մը, ժանեակի շերտ մը, տանքէլ արմէնիէնի հինաուուրց նրբին նմոյշ մը, — մասնիկ մը՝ որ իր մատուրներուն մէջ կեանք անած ու ապրած է: Իր շուրջը գտնուողները զարմանքի ու հիացումի անակնկալ մը կ'ունենան: Իրա՞ւ: Ի՞նչպէս կարելի է ուրեմն: Ու ինքը, եթէ ոչ յաւակնութեամբ, գէթ խրոխտ շնորհով մը, որուն իրաւունքը իրն է, գիտակցօրէն կը հպարտանայ իր յաղթանակին համար:

Մէ՛կ բան միայն, — եւ, աւա՛ղ, ասիկա կեանքի օրէնքն է, — կը տհաճեցնէ նրբաճաշակ հանդիսատեսը, — նուիրական անտուկին կափարիչը՝ տեղի կուտայ կծու բուրմունքի մը, զոր դարակները կ'արտաշնչեն, — հոտ մը՝ որ այնքան անդիմադրելիօրէն յատկանշական է: Մզլումի, բորբոսի, հնութեան հոտն է անիկա, հոտը երկար ատեն կը պուած, երկար ատեն դոց պահուած բաներուն, որոնք, ո՛վ դժբախտութիւն, լոյսի կեանքին զրկման դալկութիւնն ու կենսապրաւումն ունին կարծես, — աշնքա՛ն տխուր ու հատած է իրենց երանդն ու երեւոյթը: Ու, հանդիսատեսը, որ միեւնոյն ատեն ճաշակաղէտ մըն է եւ imitié մը, չի կրնար ստանալ բոլոր արժէքը այդ հնօրեայ ձեռակերտներուն, որոնց կեանք տուող մասները, չօժտուած չեն կրնար եղած ըլլալ արուեստագէտի յատկութիւններով: Եւ,

*Հոտը, կծու Հոտը, որ յատկապէս պիտի բացարձակեալ  
այն շնորհաւոր մտաւորներ, իրեն համար անտանգ մը  
ախորժ ալ ունի, — ախորժը հնարասական վաւերանիւթի  
մը, զոր եթէ ոչ կ'ըմբօղջանէ, այլ գէթ կը հասկնայ  
ու կը ճաշակէ: Այդ ձեռակերտները, իրաւ, հինաուուրց  
են, բայց բոլորովին հինցած չեն, մեռած չեն, — իրենց*

մէջ կեանքի մասնիկ մը կը բարախէ դեռ :

Մկրտիչ Աճէմեան, չին սերունդին միակ բանաստեղծը որ կ'ապրի դեռ ու կը դրէ, այս տպաւորութիւնը կը ձգէ վրաս :

Բայց ասոնցմով չեն վերջնաւոր իր յատկանիշները :

Մկրտիչ Աճէմեան ունի մասնաւորութիւն մը՝ որ իր արժանիքներուն ամենէն աննշանը չէ ապահովաբար : Եթէ Աճէմեան մեր ժամանակին ամենէն մեծ բանաստեղծը չէ, մեր ժամանակին ամենէն զուտ բանաստեղծն է անիկա առանց տարակոյսի : Կշռութեան ու ներդաշնակութեան պաշտամունքը, մուսաներու լեզուին սէրը, ոչ ոք իրեն չափ զուտ, անխառն խանդավառութեամբ մը կ'ենթադրեմ որ հետապնդած ըլլայ, վասն զի Աճէմեան այն տաղաչափողն է, որմէ տող մը արձակ չենք ճանչնար դէթ մենք, նորերս, եւ իր ստորագրութեան՝ համաչափ կամ կշռաւոր գիծերու ներքեւ միայն հանդիպելու վարժութիւնն ունինք : Վասն զի մեզի համար գրեթէ պատմական իսկ չպիտի ըլլայ այն իրողութիւնը թէ, «այն ժամանակն ուր հայ թատրոնը կը ծաղկէր, Աճէմեան Թէրզեանի եւ Թղլեանի հետ թատրերգակ ալ եղած ըլլայ, թարգմանելով Շիլլէրի Աւագակները եւ հեղինակելով կատակերգութիւն մը, Ծեր սիրահարը, որու ձեռագիրն ալ կորսուած է այսօր :» 1) Եւ եթէ բողոքատուութիւնները կը սիրէք, պիտի ըսէի թէ, այս վերջին տեսակէտէն, Աճէմեան հայերու Լէոն Տիէռքան է, զուտ, pure բանաստեղծը, որ տող մը արձակի անհամաչափութիւնով չէ ընդմի-

ծած *էր հառութիւններն ու ներգանակութիւնները :  
Եթէ սաստաւ Թատր Եւ Կատակերգութեան Եւ  
Եթէ Բողոքատուութեան ու Կատակերգութեան Եւ  
Բը ասոյ տանէինք, պիտի կրնայի ըսել նաեւ թէ*

1) «Մասիս», 1 Օգոստ. 1902, Հրաման Ասատուր :

Մկրտիչ Աճէմեան խառնուրդ մըն է ուժանթիկի ու բառնաւիճի: Ըսածս ընդլայնելէ առաջ պէտք է փակագծեմ թէ այս տեսակ օտար պիտակներ (étiquette) շատ դիւրութեամբ կարելի էր գտնել մեր Պոլսահայ գրողներու մեծ մասին համար: Հիմա խնդիր չպիտի ընէի թէ այս պարագային մէջ բարբօք մը կայ մեր գրականութեան համար, թէ անիկա սողտանքն է անոր: Կ'ուղէի միայն ստորագծել թէ, Ֆրանսական գրելակերպերուն ու գրական դպրոցներուն ուղղակի ազդեցութիւնը՝ այնքա՛ն հզօրապէս դրոշմուած է մեր գրական մարդերուն տաղանդին վրայ:

Մկրտիչ Աճէմեան՝ ուժանթիք է իր նկարագրական եւ իմաստասիրական ոտանաւորներուն մէջ: Առաջինները կ'ուրուաւծուին տարտամ երանգները եւ անորոշ շրջադիժերը նախընտրող վրձինի մը քմահաճոյքին համար: Մանրակրկիտին, կենդանի իրականութեան զգացումը (sens) չկայ հոն: Պատկերները՝ միշտ աւելի զգացումներով քան զգացողութիւններով կ'անդրադառնան ու կը թարգմանուին: Թերեւս ասիկա՝ մէկն է ուժանթիզմի ընդհանուր յատկանիշերէն: Պատկերը՝ որ կ'անդրադառնայ աչքի ցանցենիին վրայ, հոն չի լուսանկարուիր՝ թարգմանուելու համար գոյներով ու գիծերով, այլ կը կերպարանափոխուի յուղումի մը, զդացման մը: Անոր համար է որ Մկրտիչ Աճէմեան, զուրկ իրականին զգացումէն, միշտ անյաճող եղած է իր այն ոտանաւորներուն մէջ, ուր փորձած է Քօփէի մը կեանքոտ վրձինը գործածել, առօրեայ կեանքին շրջանակին մէջ գլորուող ու սողանցող պատկերներուն վրայ:

Իր իմաստասիրութիւնը՝ իմաստասիրութիւնն է ուժանթիքներու մեծ մասին: Անիկա՝ ընդհանրապէս տարածօրէն հոգեպաշտ տրամադրութիւններ՝ առկախ

կը ձգէ իմաստասիրական կասկածին առջեւ : Ձի նշանակեր թէ հեզնօրէն սկեպտիկ ըլլալ այս իմաստասիրութիւնը : Անիկա մանաւանդ վարանոտ է եւ կը կասկածի .

Ո՛չ, մի՛ հարցնէք թէ ես ինչ խորհիմ ,

Գըրիչն իմ սըրտիս չէ հաւատարիմ .

Ա՛յլ է տեսակէտն իմ եւ ձերն է այլ .

Մուրք թուի ձեզ հոն ուր ես տեսնեմ փայլ :

Շուարում մը կայ հոն , յանդգնութեան վախը կայ հոն , որ սիրոփանք կը փնտռէ խորխորանքին մէջ :

Առ Գրիգոր է՞Ք . Օտեան ուղղուած գեղեցիկ ոտանաւորի մը մէջ , Ո՞ւր երթան հոգիք , Աճէմեանի մտքի այս փիճակը ցայտուն կերպով երեւան կուգայ .

Մեր հորիզոնէն այսպէս մեկնեցար ,

եւ երկբայուքեան զիս պատեն խաւար .

Թէ՛ քու հետ տանիս դու մահուան գաղտնիք՝

Ո՞վ ինձ մեկնէ թէ ո՞ւր երթան հոգիք . . . :

Ո՞ւր երթան հոգիք . . . իբրեւ ծաղկանց բոյր

Միքէ կը ցրուի՞ն . . . իբրեւ մեղմ համբոյր

Իբրեւ երգ թռուցիկ կը մարի՞ն միքէ .

Հստպա ո՞ւր երթան հոգիք . . .

Ո՞վ գիտէ :

Բայց իր կեանքի ըմբռնումը , իր աշխարհահայեցողութիւնը , -- եթէ թոյլ կուտայիք գործածել այս բարբարոս եւ տգեղ բառը , -- տրամաբանական հետեւութիւնը չի թուիր ըլլալ այդ կասկածոտ իմաստասիրութեան : Իրական կեանքին արդէ պայմաններուն դառն հասկացողութեան մէջ , որ զինքը տեսակ մը համակերպող հեզնանքով կը լեցնէ , անիկա կը պահէ նո-

ըէն կերպ մը յարաբերական լաւատեսութիւն՝ որ կազդուրիչ ու զովացուցիչ է լալկան ու մահաբաղձիկ բանաստեղծներու գուժաւոր կաղկանձիւններուն մէջ : Հոն , այդ լաւատեսութեան խորը , փորձառու մարդը կայ , որ աշխարհը կը դատէ ո՛չ թէ իմաստասիրական դրութեան բարոյական եզրակացութիւններուն համեմատ , — որոնք աւելի կամ նուազ միշտ կամայական են , — այլ իր համեստ ետին կողմանկիւնէն , անձնական տրամադրութիւններու անձուկ՝ այլ սրտապնդող տեսակէտէ մը :

Աշխարհիկ ու ապրած մարդու , սակաւապետ ու երջանիկ նահապետի հայրական բան մը կայ Օղիին , Սիկարին , Յետ յիսուն ամբանին մէջ :

Յետ յիսուն ամբան՝ չունիմ ստացուած ,  
Ոչ տուն՝ ոչ հիւղիկ յարդէ ծածկուած ,  
Բայց փոփոխ բախտին պարգեւներ խարդախ  
Արեամարհելով երգեմ միշտ ուրախ :

Յետ յիսուն ամբան՝ դեռ ծովեր ու սար ,  
Արտեր ոսկեվարս , դաշտ , հովիտ դալար  
Դիտեմ ընդ երկար , վայելեմ լըռիկ ,  
Եւ այս շատ իսկ է սրտիս իմ փոքրիկ :

Յետ յիսուն ամբան՝ տակաւին կայտառ  
Շրջիմ հետիոտս ի ձոր եւ յանտառ ,  
Եւ ոչ նախանձիմ հարստին երբեք  
Որ ցոյս կառփին մէջ երթայ ցաւաբեկ :

Յետ յիսուն ամբան՝ պատերն են անգարդ  
Համեստ սենեկիս , բայց երբ լոյս գուարթ  
Ներս կը թափանցէ , ցայց տայ ինձ պատկեր  
Սիրուն գաւակացս՝ իմ միակ գանձեր :

Յետ յիսուն ամբան՝ չունիմ ստացուած,  
Ոչ մի թիգ պարտեգ, քայց գիտես Աստուած՝  
Թէ ոչ շրթներէս քոած է գանգատ.  
Թող միշտ երջանիկ բայց լինիմ աղփատ:

Յետ յիսուն ամբան՝ ո՛ր Տէր, ինձ մի՛ տար  
Ոչ փառք հնուրացիկ, ոչ սիրտ յլշտահար,  
Այլ տուր ինձ հարել հացիկ անխարդախ  
Եւ տուր ինձ երգել միշտ գոհ եւ ուրախ:

*Չէ՞ք զգար թէ այս տողերուն մէջ երջանիկ ու  
կազդուրիչ բան մը կայ, որ կ'սփոփէ ու կը զովացնէ:  
Ու այսօր ալ, «յետ վաթսուն ձմբան» նորէն, բանաս-  
տեղծը իր նախկին տրամադրութիւնները չէ փոխած  
բնաւ, անցամաքելի լաւատեսութեան մէջ շարունակե-  
լով տարփողել կեանքին սէրն ու ուրախութիւնը:*

Երբ ետիս դառնամ՝ անցեալը դիտեմ  
Կեանքի առեղծուածն կանգնի ինծի դէմ,  
Տիեզերական անհուն անբսպառ  
Կեանքին մէջ՝ մարդուն կեանքն է մէկ պատառ.  
Անծայր ծովուն մէջ հազիւ մէկ կաթիլ,  
Ու կը հարցնեմ թէ կ'արժէ՞ սարիլ:  
Ո՛հ կեանքն անուշ է ու յանախ լեղի,  
Վնիտ վտակն ալ փոխուի հեղեղի,  
Տառապանք, վայելք, դառնութիւն, հաճոյք  
Զիրար հաղածեմ կամ ընթանան գոյգ.  
Ու թէ որ ճնշէ զիս կեանքին պայքար  
Ծըռիմ հեղեղին պէս գլուխս սկար  
Ու մրրիկն անոր զիս ոչ կ'արգելու  
Հոգուոյս ձգտումներն անխռով երգելու,  
Երբ ջերմ համբուրեմ վարդին լանջ քնքուշ,  
Ինչ փոյթ թէ շրթունքս արիւնէ սուր փուշ:

Խեղճ փիլիսոփայք ի գուր կը յոգնիք,  
Կեանքը կը լուծուի՝ բայց ոչ իր գաղտնիք.  
Առեղծուած կեանքի՞նք թէ մահուան անգութ,  
Ըսէք ինձ, ո՞րն է շատ աւելի մութ,  
Կեանքը սերտեցի, հեշտ ու փշոտ է,  
Իսկ մահը ... գիշեր՞ք թէ առաւօտ է:

*Դրամին մէջ կը ցայտէ հեղնութիւնը հանդարտա-  
բարոյ՝ ալլ արդարամիտ մարդուն, կծու, խայթիչ,  
ալլ առանց բարկութեան ու կիրքի, տեսակ մը ընկ-  
ճուած համակերպութեամբ՝ նուիրադործելով տխուր  
խրոզութիւնները՝ զոր հաստատելու դառն ու դժնշակ  
պարտաւորութիւնն ունի:*

Հարկ չէ միշտ լինել խոհուն գիտնական,  
Յաճախ նա որ է տգէտ աննշան՝  
Ակադեմիայի ընտրուի անդամ

Եթէ ունի դրամ :

Զարմանալի են օրէնք աշխարհի,  
Կարծես թէ նարտաք խօսի եւ խորհի  
Նա որ իրօք է ապուշ եւ անհամ,

Եթէ ունի դրամ :

Ընկերակցութեանց մէջ բազմի վերին բարձ,  
Երկնից մէջ նաեւ յուսայ առնուլ վարձ՝  
Երբեմնն նա իսկ որ է անըզգամ

Եթէ ունի դրամ :

Ի՞նչ փոյթ եթէ կադ ըլլայ կամ ճոտտ,  
Թէ համբոյրք նորա բուրբն գազիր հոտ,  
Տօնեն գնա միշտ հէգ կանանց երամ

Եթէ ունի դրամ :

Նա որ ոտնակոխ առնէ գիւր պատիւ,  
Եւ ծաղրէ ամէն գգացմունք ազնիւ,  
Նա եւս ստանայ փառք եւ բարեկամ

Եթէ ունի դրամ :

Իրաւունք գտնայ միշտ լեցուն գրպան,  
Եւ առանց խղի կուտայ տէր-պապան  
Զորս կիմ մէկ մարդուն, ես կը հաւատամ,

Եթէ ունի դրամ :

*Ու պարզապէս տեսակ մը պաշտամունքով կ'ար-  
տատակեմ սա տողերը՝ որոնց մաքուր յօրինուածքը,  
աշխուժ դրուածքն ու դալար թարմութիւնը՝ երբեք  
հակասութիւն մը չեն ծերունի բանաստեղծին մշտանո-  
րող հողէին մէջ.*

#### ԱՊՐԻԼ

Գարնան դունէն՝ անհամբեր

Ապրիլ նայի դէս ու դէն.

Զիւներ հալեր ու ամպեր

Զմրան փախեր են արդէն :

Գարնան դունէն՝ պչրելով

Ապրիլ ժպտի դէս ու դէն,

Հաշտ ու կապոյտ ծփայ ծով

Լեռներ, ձորեր կ'ըլլան շէն:

Գարնան դունէն՝ ոսկեցու

Լոյսեր գեղուն գերդ տարափ,

Ապրիլ չորս դին սփռէ խօլ՝

Վարդի խուրձեր լեցուն ափ:

Գարնան դունէն խնկաւտ

Հովեր փչեն մեղմօրօր,

Ապրիլ նորեկ թռչնոց հետ

Մեզ կ'աւետէ ուրախ օր :

Ապրիլ, ծաղկունիք այդ նախշուն՝

Որո՞ւ շոայլես այդ շողեր՝

Տե՛ս, ալեւոր իմ գլխուն

Բաղդը ցանեց դառն հոգեր :

Ծաղիկներուդ տակ փունջ փունջ  
Յիշատակներ ունիմ տխուր,  
Ու այդ հովիկ հեգաշունչ  
Արծարծէ իմ սրտիս հուր :  
Խամրած հոգւոյս մէջ՝ Ապրի՛լ,  
Այ չես կրնար դնել ոչ,  
Անուշ բոյրէդ մէկ կաթիլ՝  
Վարդերէդ մէկ ծիլ բողբոջ :

Վերջին տողերուն անհուն մեղամաղձութիւնն իսկ իրեն մէջ ունի տեսակ մը շեշտ՝ որ շեշտը չէ բնաւ զղուանքին ու յափրանքին, այլ շեշտը՝ կեանքի վերջին անբոյթ հանգրուաններուն մէջ իր յոգնութիւնը առնող գոհունակ ծերունիին, որ երիտասարդութեան օրերուն կարմիր կարօտովը կ'ուռի :

Եթէ որ եւ է գրող իր մտադրութիւններուն ու իր յաւակնութիւններուն համեմատ միայն հարկ ըլլար դատել, ապահովապէս կարելի պիտի ըլլար ըսել Մկրտիչ Աճէմեանին համար թէ մեր ժամանակին լաւագոյն բանաստեղծն է անիկա, համեստ երազներուն ու ժուժկալ քնարերգութեան մը բոյնը :

Այս տեսակէտէն, մեր աչքին պէտք չէ զարնեն իր մինչեւ այսօր դորձածած հայերէնը՝ իր կղպուած պահարանի թթու հոտովը : Ու քննադատութիւն մը չենք ընել իրեն իր ոտանաւորին ալ միօրինակ յօրինուածութիւնը, որ կը յատկանշուի տասը ոտքով ու զոյգ յանգերու անընդմիջական համապատասխանութեամբ : Այս համեստ երգիչը՝ բազմաթիւ լարերուն ու բազմահագագ շեշտերուն խիզախութենէն խուսափած է միշտ, իր միօրինակ կշռութիւնը պատշաճեցնելով իր այլազան յուզմունքներուն :

Նորէն, համարձակէի՞ արդեօք իրեն մեղադրանք մը ընել տաղաչափական օրէնքի տգիտութիւն մը, որ մի՛նակ իրեն չի վերադրուիր, եւ որուն ստղտանքին ենթարկուած է նաեւ երբեմն՝ Պօտլէսի նման խղճամիտ արուեստագէտ մը: Աճէմեան սխալ հնչեակ (sonnet) գրող մըն է:

Ապահովաբար ձեւը չէ որ իր տաղանդը կը շինէ: Հնչեակի մը երկու քառեակներուն նոյնայանգութենէն չի բղխիր բանաստեղծական յուզմունքը: Ծիչդ այս պատճառով է որ, Ալիասլան, ճարտար ու անստգիւտ տաղաչափողը, մեծահարուստ յանգաբանը, միջակ բանաստեղծ մըն է Աճէմեանին քով:

Բոլոր խնդիրը սա՛ է թէ, հնչեակը, ոտանաւորի վճռուած ձեւ մըն է, եւ անոր համեմատ գրուած ատեն միայն այդ անունը կրնայ կրել, ինչպէս բանքումը, քերթաւիման, ոսկւալը եւն.: Պզտիկ թերութիւն մը՝ ոտանաւորի այդ նուիրագործուած ձեւերը զրկած կ'ըլլայ իրենց անունէն, երեւան բերելով տաղաչափողին անճարակութիւնը կամ տգիտութիւնը, — եւ այդչափ միայն:

Աճէմեանի համար փորձուած գլխաստուերի մը վերջին վրձինի հարուածը՝ աս չէր կրնար ըլլալ սակայն: Մեր ժամանակին մէջ, ուր շատ են բանաստեղծներն ու չա՛տ քիչ՝ իրական տաղանդները, միխթարական է որ այս ճշմարիտ բանաստեղծը երբեմն բանայ իր հնօրեայ դարակները, անոնցմէ դուրս քաշելու եւ մեր հիացումին ու վաշխելին նուիրելու համար՝ իր ձեռագործներէն մէկը, որ եթէ երբեմն ըլլա՛յ իսկ նորագուրկ ու հնարոյր մտքի արդուզարդ մը, այլ յաճախ դանձ մը ու գոհար մըն է:

1 Յունիս 1902 «Արեւ. Մամուլ» էջ 497 - 504:

## ՅՈՎՀԱՆՆԻՍ ԳԱԶԱՆՁԵԱՆ

Յովհաննէս Գազանճեան դաւառացի գրագէտ մըն է :

Հիմակէն չէ՞ք գուշակեր բոլոր այն միամտօրէն սղորմելի հեզնութեան ժպիտները՝ որ պիտի ուրուագծուին ընթերցողներու մէկ մասին քթին շուրջը — գոհունակ արհամարհանքի նուրբ ժպիտներ, ծաղկանկարչական դիմաճուովի ուրուագիծներ, որ այնքան երջանիկ պիտի ընեն զիրենք, որքան ատոնց շարժաւիթը եղած պիտի ըլլայ ոճրական ու վտանգաւոր անհասկացողութիւն մը, դէպի ոգին տոհմային լուրջ գրականութեան :

Անձկամիտ ընթերցողին երջանկութիւնը խանգարելու եւ իր անիմաստ դիմաճուովին մէջ զինքը անգրթօրէն անհանգիստ ընելու դիտաւորութիւն չունիմ : Բայց պիտի ըսեմ թէ՛ Գազանճեան ալ ինքնիրեն բուսածներէն է : Վարժարանական փայլուն շրջանի մը յիշատակները չեն սփոփեր զինքը, իր յամառ ու տաժանելի տքնութիւններուն մէջ, եւ շողշողուն վիպականներու ամոքումը կը պակսի իր ինքնաշխատութեամբ ու հազար դժուարութիւններով երեւան եկած գրողի յաճախագէտ գառնութիւններուն : Ուրեմն ինքն ալ մէկն է այն անանուն ծաղիկներէն՝ որոնք անջրգի ժայռի մը կողին վրայ կը բուսնին, դժուարաւ գուրս դարձով քարերու բացումքներէն, եւ արեւին հայրական խանդաղատանքին տակ, օրին մէկը իրենց բովան-

դակ ուժն ու կենսունակութիւնը կ'զգացնեն առոյգ ու ջերմ բողբոջումով մը՝ որ այնքան ուժգնօրէն կ'ընդդիմադրէ ջերմանոցներու կեղծ միջնորդութիւն մէջ ու պարտիզպանի ախտավարակ խնամքներուն ներքեւ հասնող ծաղիկներուն հիւանդ վեղեցկութեան :

Իր արժանիքին ստորոգելիները թուելէ առաջ, զինքը կը ներկայացնեմ կարեւոր անդամներէն մէկը այն փոքրաթիւ՝ այլ յամառօրէն կամքոտ խումբին՝ որ բարի պայքարը կը շարունակէ մղել ընդդէմ պոլսասայ օտարացած ու կեղծաւոր մտքին՝ ի նպաստ վաղուան հայ գրականութեան ցեղայնութեան եւ ինքնուրոյնութեան առողջ ու կենսունակ զազափարին :

Իր յողուածները՝ մտածուած, սերտուած ու լուրջ զազափարներու վեղեցիկ ընդլայնումներ են, եւ անոնք որ հետաքրքրութիւնը ունենան օր մը մեր մէջ մտաւորական ժամանակակից հոսանքներուն ուսումնասիրութեան ձեռնարկելու, օգտակար վաւերանիւթեր պիտի դռնեն Գաղանձեանի գրութիւններուն մէջ :

Արդեօք խնդր՞ք է թէ այսօրուրնէ վաղը անմիջապէս պիտի իրադործուին Գաղանձեանին եւ իր համախոհներուն ծրագիրները : Արդեօք խնդր՞ք է թէ զազափարի մը կարեւորութիւնը՝ տրամաբանական է որ համեմատական նկատուի այն մօտաւորութեան կամ հեռավորութեան՝ զոր անիկա ունենալ կը թուի հաւանական իրադործումին հետ : Գազափարը, իր կարեւորութեան մէջ, անկախ չէ՞ միթէ անմիջական օգտակարութեան անձուկ նկատողութենէն : Շատեր՝ հակառակ կերպով կը դատեն գաւառական գրականութեան պարզան, փաստարանելով անոր կանխահասութիւնը : Երբ այսօրուանը կայ, կ'ըսեն, իր բովանդակ խեղճութեան մէջ, վաղուանին վրայ մտածել՝ զործնական

մտքի յայտնի պակաս է: Այլ ի՞նչ բան ճշդիւ պիտի  
հարկադրէր վաղուան դրականութեան դադափարող-  
ները՝ եթէ ոչ իսկ եւ իսկ այսօրուանին անբաւականու-  
թիւնն ու ողորմելի նկարագիրը: Բոլոր առարկութիւ-  
նը բառերու աղուոր կատակ մըն է, անհիմն ու անտա-  
նելի: Ուրեմն այսպէս խորհողները աւելի նպաստաւոր  
են գաղափարին քան Պէրպէրեան էՖ. որ հիմնապէս կը  
մերժէ թէ ապագայ հայ գրականութիւն մը, վաղուան  
գրականութիւնը, կրնայ պոլսականէն աւելի տոհմային  
ըլլալ, կամ թէ գաւառական գրականութիւնը՝ ընդու-  
նակութիւններ ունի վաղուան ճշմարիտ հայ գրակա-  
նութիւնը դառնալու: Առաջինները մանաւանդ կ'ըսեն  
թէ պոլսականէն անկախ գաւառական միտք մը առ  
այժմ չի կրնար գոյութիւն ունենալ, հետեւապէս պոլ-  
սիներ կ'ուզղէ եւ հարկ է որ տակաւին երկար ատեն  
ուզղէ գաւառականը: Չէ՞ք զգար հոս հաւանութեան  
լոբին հանդիսաւորութիւնը:

Այլ ո՛չ Պէրպէրեան էՖ.ի վտանգը, ոչ ալ կանխա-  
հասութեան սարսափին տակ դողացողները իրենց մէջ  
բաւականաչափ ոյժ ունին դիմադրելու այն հոռանքին՝  
որ կը զարդանայ հայ ժողովրդին կուրծքին տակ,  
տոհմային ինքնամփոփումի դրացման ձեւին ներքեւ,  
որ կը համակէ նոր սերունդը, իր կազդուրիչ ու ջղուտ  
տենդով, եւ որ պիտի տիրապետէ վաղուան գրակա-  
նութեան ընդհանուր ոգիին վրայ, պոլսահայ միտքը  
լուսանցքին մէջ ձգելով, եթէ անակնկալ հակազդե-  
ցութիւններ չլլատեն թուիչքին աշխոյժն ու թափը:

Խնդացողները եւ ծաղրողները, ամբողջ խումբը  
չհասկցողներուն, բոլոր ապականած վոհմակը խառնա-  
ծիններուն, երկակենցաղներուն ու իրենց տոհմայնու-  
թեան անարատ արիւնին մէջ այլասերածներուն, նա-  
հանջի եւ պարտութեան ամօթին տակ պիտի ընկճուին:

Գաղափարը՝ հաւատքի մը անխորտակելի պատուանդանին վրայ բարձրացած է միտքերու մէջ: Գաղանճեանին ու իր ընկերներու արժանիքը պիտի մնայ իրենց ուժին նպաստը բերած ըլլալ անոր շուտափոյթ յաղթանակին:

Բայց Գաղանճեան դեռ բուն գաւառացի գրագէտը չէ, անիկա՝ որ իր հանճարին մէջ արտայայտութեան մասնիկ մը պիտի ըլլար իր ցեղի ոգիին: Գաղանճեան ուղղակի չի բաղդատուիր Թլկատինցիին, — բուն գաւառացի տոհմային գրագէտին հետ: Բացի այն զանազան քննադատական յօդուածներէն, հէքեաթներէն, նոյն խնդրոտանաւորներէն, որոնցմէ օգտուած են գրեթէ բոլոր օրագիրներն ու հանդէսները, Գաղանճեան իր արժանիքի տիտղոսը կը գտնէ մասնաճիւղի մը, բանասիրական լեզուաբանութեան մէջ, զիտութիւն մը՝ զոր ասպետական հանդիսաւորութեամբ ծաղրելու անհաւատալի քաջութիւնը գործեց Պոլսեցի աղմկալից գրիչ մը, Պ. Ենոյլք Արմէն:

Բայց ի՞նչ է այդ ըստ Պ. Ենոյլքի բարակցաւ գիտութիւնը՝ որ իր խտտութիւնները կ'ընդգրկմադրէ նորելուկ գրագէտներու սանձարձակ եւ ազատասէր քմահաճոյքին:

«Բանասիրութիւնը, կ'ըսէ Ֆրէտէրիք Նիցչէ 1), ան յարդելի արուեստն է, որ ամէն բանէ առաջ իր հաւատարիմներուն վրայ պարտք կը դնէ մեկուսի մընալ, ժամանակին նուիրուել, լուռ, յամբ ըլլալ, — արուեստ մը սակերիչի, բառաճանաչի ուր բոլոր աշխատութիւնները փափուկ են ու մանրակրկիտ, ուր կարելի չէ ոչ մէկ բան յաջողցնել, եթէ ոչ յուշիկ,

---

1) *La philosophie de Nietzsche*, par H. Lichtenberger, F. Alcan, éditeur, p. 36.

յամբօրէն: Այս պատճառով է նաեւ որ անիկա աւելի քան երբեք պիտանի է այսօր. այս պատճառով է որ անիկա դմեզ կը գերէ ու կը հրապուրէ այս «աշխատութեան», ըսել կ':ուզեմ աճապարանքի, անպատեհ ու քրտնաթոր դահալիժման ժամանակին մէջ, որ կարելի եղածին չափ շուտով կ'ուզէ ամէն բան «կարճ կապել», ամէն բան գլխէն վանել, գիրքերն ալ, անոնք ըլլան հին կամ նոր: Բանասիրութիւնը, անիկա երբեք չի գիտեր կարճ կապել, խնդիրը ի՛նչ բանի վրայ որ ըլլայ, անիկա կը սորվեցնէ լաւ կարողալ, այսինքն յամբօրէն, խորապէս, ամէն կողմէն զգուշանալով կանխորոշ մտածումներէն շրջահայեցութեամբ վերաբերուելով ելքերու մասին, անիկա կը սորվեցնէ վերջապէս կարողալ փափուկ ձեռքով մը եւ փորձ աչքով մը»:

Հիմա տեսա՞ք թէ բանասիրութեան դառն օջարակը՝ տկար ու հաճոյասէր քիմքերուն չպիտի կրնայ պաշտօնաճիւ: Այսօր հայ բանասիրութիւնն ալ պէտք է ազատազրուի չոր ու ցամաք հասկաքաղութիւններու սահմանազծումէն, եւ ըստ Նիցչէի, անիկա պէտք է ճոխանայ կամ լրանայ մանաւանդ իմաստասիրութեան ու արուեստի նպաստներովը:

Այսօր բաւականին չափ հում նիւթերու աշխատութեան եւ բնադիրներու եւ ձեռագիրներու բաղադատութեան գործը առաջ գացած բաներ են: Ինծի կը թուի թէ այլեւս հնարաւոր է այս ցրուած ու ցրցքնուած տարրերով համադրել ու վերակազմել հայ ոգիին շիջելափառ անցեալը, իր անկումներուն ու բարձրացումներուն, իր քաղաքակրթութեան յարափոփոխ փուլերուն մէջ: Այն ատենն է որ արդի հայը, առօրեայ խորթ աղէցցութիւններու մշտատեւ սպառնալիքին մէջ, ինքզինքը պիտի ճանչնայ՝ ոգեկոչուած անցեալին

ստուերոտ նշոյլներուն ընդմէջէն, ու պիտի վերադառնէ  
հոն հարազատ բնազդները ցեղի ոգիին, պիտի լսէ հոն  
յուզող, ցնցող կոչը՝ ցեղին ձայնին:

Ահա՛ այն բանասիրութիւնը՝ որուն այլեւս իրօք  
պէտք ունինք, զոր փորձած են մասամբ իրագործել  
մէկ կամ երկու Ռուսահայ վիպասաններ, եւ զոր կը  
թուի ջատագովել Գազանճեան իր ուսումնասիրութիւն-  
ներով:

Գազանճեան, բաց ի այն տեսակ ուսումնասիրու-  
թիւններէ, որոնցմով Շահինեանին եւ ուրիշ մէկ եր-  
կուքի հետ մատնանիշ ըրած է հայ ազգադուրբեան,  
հայ բանասիրութեան, հայ հնագիտութեան կարեւո-  
րութիւնը, վաղուան գրականութեան գաղափարին ի-  
րագործման տեսակէտէն, աշխատասիրած է նաեւ Թո-  
քատի դաւառարարաւին ուսումնասիրութիւնը,  
(Ջայնարանութիւն, Բառացուցակ, Առածներ, եւն.)  
Թրքահայերու մէջ առաջին անգամ փորձը տալով նմա-  
նօրինակ անհրապոյր՝ այլ օգտաշատ երկին: Իղմիր-  
եանց կտակին յանձնաժողովը, որուն գնահատման  
ներկայացած էր այս գործը, վերապահումով մը վար-  
ձատրեց զայն, — ինչ որ ամէն պարագայի մէջ Գազան-  
ճեանի արժանիքին պաշտօնական նուիրագործման նշան  
մըն է:

Պոլսահայ — դաւառահայ գրական վէճը՝ իր ցա-  
ւալի թիւրիմացութիւններն ունի: Գրականութեան մէջ  
երբ գաւառացիները լեզուի խնդիր յարուցին, շատեր,  
ու ամենէն յօժարամիտներէն կարծեցին թէ՛ դաւառա-  
րարառններուն դերը կը հրաւիրուէր ոտնձգութիւններ  
ընելու՝ արդի Պոլսահայ աշխարհիկ լեզուին ձայնա-  
բանական ու քերականական սահմաններուն վրայ: Բա-  
ւրիթ Խաչկոնց իր Բիւրակներովը երբեմն այդ սխալը  
նուիրագործելու նպաստեց, լեզուաբանական յայտնի

անդուշութեամբ: Գաւառաբարբառներու առանձին ու բաղդատական ուսումնասիրութիւնը ունենալով հանդերձ գիտական շատ բարձր նշանակութիւն, վաղուան գրականութեան գաղափարողները մտքերնուն չանցուցին բնաւ որ եւ է գաւառաբարբառ իր ձայնաբանութեան ու քերականութեան տեսակէտէն գրական լեզուի բարձրացնելու անխոհեմութիւնը դործել: Գաղանձեան եւ իր ընկերները ըսին ու կը կրկնեն թէ, Պոլսահայ բարբառը, արդէն բարձրացած գրական լեզուի նուիրագործումին, ու իր նկարագրով ունենալով բաղմակողմանի հանդիսութիւններ՝ քանի մը կարեւոր կենդանի գաւառաբարբառներու հետ, անպայման կերպով կը պահէ իր այդ գիրքը: Բայց եթէ լեզուաբանօրէն անիկա այսօր վարդացած ու կանոնաւոր լեզու կրնայ համարուիլ, այլ սակայն, գրականութեան տեսակէտէն հասնելու համար բաղձացուած հարստութեան ու ընդարձակութեան, շատ պէտք ունի գաւառաբարբառներու բառամթերքին ու ոճին, որոնք իբրեւ հայ լեզուին հարազատ՝ այլ անտեսուած ստացուածքները, պիտի գային արդի աշխարհաբարին մէջ գրաւել իրենց համար բաց մնացած տեղերը, այնքա՛ն գեղեցկապէս ու օգտակարապէս հերքելով օտար լեզուներու բառարանին ու ոճին խաթարող ու այլասերող արշաւանքը:

Ուրեմն Գաղանձեան շատ իրաւամբ կը քննադատէ օրինակի համար Թլկատինցիին ու Գեղամին լեզուները, երբ այս գաւառացի գրողները շատ անգամ իրենց բարբառին քերականութիւնը եւ հնչումները կը գործածեն, եւ գրուածքը խրթին ու անհասկնալի կը դարձնեն, մինչդեռ Զարդարեանին լեզուն, այս տեսակէտով, կրնայ անսուղիւտ համարուիլ, նկատելով որ անիկա կը պահէ Պոլսահայ բարբառին քերականութիւնն ու ձայնաբանութիւնը, իր լեզուն ճոխացնելով միայն գաւառ-

ուսկան գեղեցիկ բառերով, ոճերով, դարձուածքներով :

Գաղանճեանը, գաւառացի գրողներու խումբին այս յարգելի անդամը ներկայացուցած պահուստ, դիտմամբ շատ զբաղեցայ քանի մը երկրորդական գիծերով, որոնք այնքան լաւ կը յատկանշեն տիրապետող նկարագիրը Գաղանճեանի մտաւորական ձգտումներուն : Իբրեւ բարացուցիչ իր իսկ հոգեբանական խառնուածքին, պիտի աւելցնեմ թէ այս տղան, որ գաղափարներու ամենէն հրատապին ու ամենէն գրգռիչներէն մէկին պաշտպանութեան համար զինուորագրուած գտնուեցաւ, իր կռուողի գերին մէջ զգացումէ, կիրքէ, խանդավառութենէ աւելի գերակշռօրէն՝ հաշիւ, հեռատեսութիւն ու հնարք դնել գիտցաւ : Զղային հանդարտութեան այն հազուադիւտ յատկութիւնը, հոգեբանական ձգտումներու այն հաւասարակշռութիւնը, որ զինքը այնքա՛ն կը մօտիկցնէ մտաւորական խառնուածքով՝ ուրիշ գաւառացի գրագէտի մը, Գ. Անդրէասեանին, չեմ գիտեր թէ տկարացուցած է իր մէջ գաղափարը, որ այնքան հաշիւ, լրջութիւն, որքան կիրք, տենդ, խանդավառութիւն կը պահանջէ, իր բովանդակ ուժգնութեան մէջ արտայայտութեան գալու համար :

Խնդիրը այն է թէ՛ Գաղանճեան աշխարհի ամենէն աղնիւ մարդն է, զոր երբեք ճանչցած ըլլամ, եւ որուն սրտին աղնուութիւնը իր մտածումներուն անկեղծութեան եւ իր գաղափարներուն անկախութեան կրցած է զուգահեռաբար ընկերանալ, — պարագայ մը՝ որ իր մէկէ աւելի արժանիքներուն ամենէն պզտիկը չպիտի եղած ըլլայ :

1 Օգոստոս 1902

«Արեւ. Մամուլ», էջ 731-736

## ԳԻՐՔԵՐ ԵՒ ԴԵՄՔԵՐ

### ԻՆՏՐԱ ԵՒ ԻՌ «ՆԵՐԱՇԽԱՐՀ»Ը

Գրողներ կան, որոնց տաղանդին անյաղթելի բացարձակութիւնն եւ մտքին անճողոպրելի հեղինակութիւնն ինքզինքնին հարկադիր կ'ընեն իրենց ժամանակին վրայ: Անտեղիտալի բռնակալութիւնն է ան հանճարին որուն առջեւ ստիպուած ենք խոնարհիլ: Ուրիշներ կան, հասարակ տաղանդները, դիւրին, բեղուն, աւելի կամ նուազ ճկուն, ու հետեւակ: Ծեծուած ճամբաներու վրայ երթեւեկող կառապաններ են ասոնք: Իրենց հետ հանդիստ ենք ու ապահով: Հասարակաց հաւանութիւնն ու վստահութիւնն անոնց հետ է, հասարակաց ծոյլ վստահութիւնը, որ կը վախնայ խոտորնակ ճամբաներէն, անընդունակ է տոկալու անոնց յոգնեցուցիչ շահոյքին:

Կան նաեւ տարականոն տաղանդները: Հանճարին տիեզերականութիւնը չունին ասոնք: Բայց մեկուսի ու վեր են հասարակ միտքերու ռամիկ սովորականութենէն: Արտուղի, կողմնակի, նորերեւոյթ ճիշդեր են անոնք. մերթ, լաւադոյն պարագային, յոյժ շահեկան: Իրենց միակողմանիութիւնը, աւելի կամ նուազ անձուկ, աւելի կամ նուազ աղանդամով անհատապաշտութիւնը՝ հաճելի չէ ամենուն: Մանաւանդ թէ՛ հասա-

րակաց զայրոյթն ու հակակրութիւնը կը գրգռէ յաճախ : Սովորաբար, չենք սիրեր այս մարդիկը՝ որք նմանութեան եղբրը կը խանդարեն : Անհրաժեշտապէս կ'ողնենք որ մարդիկ իրարու նմանին : Ասիկա՝ հասարակաց մտքին տափահուութեան զայրալիւ խոստովանութիւնն է : Տարտամօրէն ու խուլօրէն կ'զգանք թէ ամենուն չնմանողներն իրենց վրայ բան մ'ունին՝ որ եթէ միշտ գերազանցութիւնը չէ՝ բայց ուշադրութիւն կը հրաւիրէ : մինչդեռ, սովորական դէմքերը, աւա՞ղ, իրարու հետ կը շփոթուին : Հետեւաբար, այդ զարտուղի տաղանդներուն մօտենալու պատշաճագոյն եւ լաւագոյն եղանակը, առանց կանխորոշութեան, հանդարտօրէն, ու մանաւանդ համակրութեամբ հետաքրքրուիլն է անոնցմով : Առանց բարեմտութեան, առանց արուեստի ազատութեան սկզբունքին ընդունելութեան, եւ առանց տեսակ մը հոգւոյ ձկունութեան, որ ընդունակ ըլլար բոլոր ձեւերուն հետ ձեւաւորուելու, այդ զարտուղի տաղանդներն անվիճելիօրէն մերժելի են : Համակրութիւնը լաւագոյն révélateur ն է այդ զգայուն տախտակներուն (plaque sensible) վրայ պահուրտած անտեսանելի պատկերներուն յստակ յայտնումին :

Ներաշխարհի հեղինակը կը պատկանի գրագէտներու այս վերջին դասակարգին :

Տիրան Չրաքեան՝ խրոխտ, անհամբոյր, խստօրէն հսակամ միտք մ'է : Շատեր, որք տասնեակ տարիներէ ի վեր հետամուտ եղած են մեր գրական խլրտումին, թերեւս նոր լսեցին իր անունը : Այս անողոքելի դժուարապահանջը, իրեն համար պատուոյ խնդիր համարած է բոլորովին հեռու մնալ մեր արդի լրագրական գրականութենէն, ուր վերջին քանի մը տարուան միջոցին յայտնուող դէմքերը, առանց բացառութեան, թշուառութիւն ու ոչնչութիւն են միայն : Այս ոչ ոքի հաւնող

մարդը, կարծես անապատի մը մէջ մինակ դտնելով  
ինքզինքը, մխիթարուելու համար, կամ իր ձանձրոյթը  
փարատելու համար, խոշորացոյց հայելիի մը մէջ կը  
նայի մերթ: Իսկատիպ խառնուածք մ'է ինքը, անվիճե-  
լի կերպով: Իր կերպասը՝ սովորական կերպաս մը է:  
Բայց իսկատպութեան բնազդն իրեն մէջ գլտակցու-  
թեան բարձրացած վիճակ մ'է: Գլտակցութեան գերա-  
կշիռ աճումը կը վնասէ արուեստի գործին: Անդին  
Թլկատինցին, բուն իսկատիպ գործն է, ինքնաբուխ,  
բնական: Մինչդեռ, իսկատպութիւնը, գլտակցութեան  
բարձրացած, այլեւս հոգ մը եւ յաւակնութիւն մ'է:  
Ուրիշներուն ըրածը շատ ողորմելի բան մ'է. ուրիշնե-  
րուն չըրածը պէտք է ընել: Որովհետեւ, հարկ է ջնջել  
ուրիշներուն հետ հասարակաց ամէն եղբ, եւ ստեղծել,  
նոյն իսկ, նոր լեզու մը, նոր քերականութիւն մը:  
Այսպէս ըրած է՞ Նարեկացին, այսպէս ըրած է՞ Տէ-  
միրճիպաշեան. այսպէս ըրած է՞ Մալլաումէ: Չբաք-  
եան՝ անհունօրէն կը գերազանցէ զանոնք: Իր այլա-  
մերժ, ինքնաբաւ, գոռոզ անհատականութիւնը կը թուի  
ունենալ ուզուած մաս մը, որ թերեւս չափը կ'անցընէ:  
Եւ դուցէ այդ է պատճառն որ, իր տաղանդը հանդուր-  
ժելի չի հանդիսանար ծայրէ ծայր: Խաղարարութեան  
բաժին մը կասկածելի կ'ըլլայ հոն: Վասն զի ի՞նչ ան-  
թարգմանելի բան բացատրելու համար պիտի կրնային  
յօրինուիլ քմածին կազմութեամբ ածանցումներ ու  
բարդութիւններ՝ որոնց ճիշտ ու կանոնաւոր հոմանիշ-  
ները գոյութիւն ունին, արդէն, եւ մանաւանդ, ի՞նչ  
բանաւոր պէտքի գոհացում տալու անհրաժեշտու-  
թեամբ, այլանդակօրէն եւ կամայականօրէն ձեւազեղծ  
կ'ըլլան կարգ մը բառեր, օրինակ, մտատանջ — մտանջ,  
նարտարարուեստ — նարտարուեստ, մարդադաւ —  
մարդաւ, լուսասփիւռ — լուսփիւռ եւն. ինչպէս շատ

իրաւամբ դիտած է Պէրպէրեան էֆ. իր դեղեցիկ յաւաջարանին մէջ, — սքանչելիք մը նրբութեան, հեղնութեան, փափկութեան ու փաղաքշոտ անկեղծութեան :

Հասարակաց եղրերու ջնջման մէջ լեզուն ունի, ճաշակի տէր եւ լուրջ մարդուն համար, տեսակ մը նըւիրականութիւն, զոր չենք կրնար պղծել առանց մեծամտութեան, կամ առանց տգիտութեան: Լեզուական իսկատպութիւնը մանաւանդ արտաոցութիւն մ'է: Իսկատիպ է Թլկատինցին. իսկատիպ է Սրուանձտեանց: Բայց շինծու չէ իրենց լեզուն: Դասական լեզուն իսկ կարող է իսկատիպ խտնուածք մը լիովին թարգմանել: Հարիւրաւոր օրինակներ կարելի է մէջ բերել օտար մատենագրութիւններէ: Անշուշտ, կենդանի լեզուն չէ սառեր վերջնական կաղապարումի մը մէջ: Ասիկա նկարագիրն է մեռած լեզուներուն: Կենդանի լեզուն կը փոխուի, կը շրջուի, անշուշտ, քանի որ կ'ապրի: Բայց այս պարագան չի կրնար շփոթուիլ բնաւ, շինծու, բռնաճիւղ ու փախուկ լեզուական յանդգնութիւններուն հետ:

Ներաշխարհը, Չրաքեանի նորատիպ գործը, հոգիի մը պատմութենէն՝ բացառիկ կերպով տպաւորուած վայրկեաններու նկարագրութիւն մ'է, բանաստեղծաշունչ, քնարական յուզումով թրթռուն: Ներաշխարհը փոթորիկ մ'է. փոթորիկի մը անկարգ, զանազանակ եւ ընդգլխմակ երեւոյթներուն հանդիսարանը: Թոթովում մը եւ դառանցանք մ'է ան. դժայակատրանական նոպայի մը ուժգին զարկը: Յորձանապտոյտ միգամածի մը պակուցիչ սաստկութիւնը, ցնորաբեր չիոթն ու ջղագալար ուժգնութիւնը կայ հոն: Ներաշխարհը տեսիլքներու դիւթական հանդիսարանն է, մթնշաղին տարտամ ոսկեղօծման մէջ խլրտացող հմայիչ տեսիլքներուն տողանցումը: Իրականին ու դաղափարականին տարօրի-

նակ շփոթումն է ան, նիւթին տեսլակերսզ անվերջ ա-  
նօսրացումը, զազափարացումը: Հոն ամէն պատկեր,  
ամէն իր՝ խորհրդանշանական եւ ներքսածական կեր-  
պարանափոխում մ'է, եւ ներածածուկ իմաստի մթին  
հոծութիւն մը կ'արտաշնչէ: Այլատարր, հակառակաբը-  
բնօյթ իրերու եւ իրողութիւններու մոգական, բնազան-  
ցական միաւորման ջանքը, համագոյից ներքին ու  
զադտնի առնչութիւններուն միաւորիչ ընդելուզման  
յանդուզն խուզարկութիւնն է Ներաշխարհը:

Պատկերները, դէպքերը, երազային ու տեսլական  
պատկերներ են, անկապ, անշրջադիծ: Արդէն, զգայա-  
րանօրէն ըմբռնելի աշխարհին երեւութական ստուշու-  
թիւնը չի գոհացներ, վիճելի կամ տարակուսելի ըլ-  
լալով: Եւ, ճշմարտութիւնը, վերջնական, իսկական,  
«ներէական» ճշմարտութիւնն այլուրին կամ «անաշ-  
խարհային» ոլորտին մէջ փնտռելու տենչը՝ այլեւս մո-  
լութիւն մը հիւանդութիւն մ'է, մինչդեռ հոս, մարդ-  
կութիւնը, իր խոհանոցային աշխարհահայեցողութեան  
մէջ, աւա՞ղ, այնքա՛ն ողորմելի է, այնքա՛ն թշուառ:

Եւ զայրադին, կնճոռտ նրբամոլութեամբ մը, հոն  
կը վերլուծուի ամէն բան. անվերջ տրոհում մը, կո-  
տորակում մը, դէպի հիւլէական, նախատարրային ալ-  
քիմիական կազմութիւնը մարդուն եւ տիեզերքին: Ան-  
կէց վերջը, միրքաման է. ոչ թէ անէութիւնը, այլ  
«հանրէութիւնը» մանաւանդ, ուր ամէն ինչ այլ եւս  
իրարու հետ կը շփոթուի: Խարուսիկ մասնաւորմանց  
այս ժխտումն ու զգուանքը, եւ «հանրէական» հալումին  
այս փափաքն ո՛րքան տրամաբանական ու ցանկալի կը  
դարձնէ մահը, որուն կը տենչայ արդէն բանաստեղծը  
հոգեւին, նոյնանալու համար մեծ ամբողջին հետ:

Ասոնք նոր ճշմարտագանցութիւններ չեն. բայց  
միշտ շահեկան են: Ներաշխարհն անկախ, զարտուղի,

բուռն անհատականութեան մը ծառայումն է ահա, ընդդէմ սովորական, անմիջականօրէն իրական աշխարհին ու իր պայմաններուն :

Ներաշխարհը միայն այս չէ սակայն : Յոռետես մտածողին քով, որ իր պատրանքները, ցաւերն ու զգուանքները կ'ըսէ տեսակ մը շնական բուռն միամտութեամբ, որ իր բաղձանքները կը բանաձեւէ հաւատացողի մը ոգիով, հոն է նաեւ բանաստեղծը, քնարերգուն ու արուեստագէտը : Բայց հոս, ինչպէս այլուր, ոչ մէկ չափաւորութիւն, ոչ մէկ ներդաշնակիչ, զտիչ, կանոնաւորիչ նկարագիր : Պատկերները, զգացողութիւնները այնքա՛ն խկատիւլ, այնքա՛ն ուշադրաւ, կը մթննան, կը խճողուին կը ծանրաբեռնուին, գոյներու, գիծերու, երանդներու եւ ճապող թրթռացմանց յորդառատ շոյլութեան մը մէջ :

Բայց Ներաշխարհն էջեր ունի, ուր քնարերգութիւնը կը թրթռայ վէտայական ու աստուածաշնչական մեծվայելչութեան կշռոյթին համեմատ : Լոյսիմ քերթուածը կայ հոն, զոր կարելի չէ կարդալ առանց խորապէս ցնցուելու, առանց դող ելնելու էութեան ամենէն յետին մասնիկով : Եւ Յիսուսի տեսիլքը, հոյակապ էջ մը, ուր հոգին իր անճառ հիացումը կը հեւայ, յափըշտակուած, պակուցեալ, ու կը ցնծայ՝ բոլորանուէր ներշնչման մը ներքեւ լիալիթ թրթռումով սաստկօրէն հնչող քնարի մը հանգոյն :

Չրաքեան՝ միսթիք բանաստեղծ մ'է : Նաեւ, յայտնապէս զգալի է իր մտքին ésotérique և hermétique նկարագիրը : Իր զգացողութիւններուն, ու իր գաղափարներուն ներքին հմայքին հետ հաղորդակցելու համար, անհրաժեշտ է քիչ թէ շատ ծանօթացած ըլլալ occultisme-ին, եւ յաճախած ըլլալ միսթիք գրագէտներու մօտ :

Այս տեսակէտէն անջատաբար, Չրաքեանի ոճը մանուածապատ, խրթին, ճապաղ ու ճոռոմ է. պատճառն այն չէ որ այդ ոճը կախում ունի իր մշակած գաղափարներուն խորութենէն կամ բարձրութենէն, լայնութենէն կամ երկարութենէն, այլ որովհետեւ, ոճը՝ մարդն իսկ է, le style est l'homme : Ոճը՝ գաղափար մը չէ, ոչ իսկ գաղափարներու արդիւնք: Գաղափարներն ենթակայ են ոճէն անկախ փոփոխութեանց: Ոճը կրնայ փոխուիլ՝ մարդու մը ընդհանուր նկարագրին կրած եղանակաւորումներուն համեմատ միայն: Մարդ, անկեղծօրէն ու բնական վիճակի մէջ, ինքն իրեն համար ոճ մը չի շիներ: Կ'ունենայ դայն: Կամ եթէ կը շինէ՝ շինած կ'ըլլայ դայն, — շինծու արուեստակեալ: Չրաքեանի ոճին նկարագրերը վերագրելի է իր իսկ անհատական նկարագրին:

Եզրակացութիւն. — Ներաշխարհը նորութիւն մ'է մեր գրականութեան մէջ, իր արտառոցութիւններով ու անհեթեթութիւններով. անիկա շահեկան է իր մեծաշուինդ քնարերգութեամբ, իր նրբամուլ ու մանրախոյզ մտքով, և այն ամէն անակնկալներով՝ որոնք դուրս կու գան իրմէ, և այս շահեկանութիւնը բնաւ բաղդատելի չէ հետեւանլ, հասարակ ու ռամիկ գրականութեան մը յարուցած կամ գրդուած հետաքրքրութեան հետ:

19 Յուլիս 1906 «Բիւզանդիոն»

## «ՎԵՐԱԾՆԻՈՂ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ՄԵՐ ԴԵՐԸ»

Միֆայել Վարանդեան, Հրատ. Հ.Յ.Դ., Ժընևի, 1910. --

Հայ ժամանակակից կեանքին արտադրած ամենէն կենսաւէտ ու ամենէն հզօր քաղաքական կուսակցութեան, Հ. Յ. Դաշնակցութեան քսանամեակի առիթով գրուած այս գիրքը, հայ կեանքին պատմական, քաղաքական, ընկերային եւ քաղաքակրթական հանդամանքներուն ուսումնասիրութեան տեսակէտով՝ վերջին երեք տարուան շրջանին տեղի ունեցած հրատարակութիւններուն մէջ՝ արժանի է ամենալուրջ ուշադրութեան:

Անհրաժեշտ չէ որ մարդ ըստ ամենայնի համար իր իր եղած ըլլայ հեղինակին, ընդունելու համար թէ Պ. Միքայել Վարանդեան մեր օրուան հայ կեանքի ուսումնասիրութեամբ պարապող հազուադիւր մտքերուն մէջ կարեւորագոյն շրջանակ մը կը գրաւէ: Իր ստորոգելիները բազմաթիւ եւ պատուարեք են: Հմուտ է ժամանակակից ընկերային գիտութեան այնպէս՝ ինչպէս պարտ էր ըլլալ ժողովուրդի մը կեանքը շինող բազմատեսակ ու տարասեռ ձգտումներուն ու երեւոյթներուն քննութեան մէջ մտնել յանդընող մէկը: Սիսթէմապաշտ է այնպէս՝ ինչպէս պիտի ըլլար բացօրոշ եւ անդրդրելի տեսակէտներու ետեւ պատնէշաւորուած անկեղծ վարդապետական մը: Ամէն ինչ սերտօրէն զիրար կը բռնէ իր կառուցումներուն մէջ: Իր ամուր տրամասացի (dialecticien) անվարան համարձակութեամբ, գիտէ քալել, տրամարանութեան ջահն ի ձե-

ռին, անձնավստահ ու հաստատուն քայլով մը, դէպի  
 առաջ, եւ այդ ջահը պիտի առաջնորդէ զինքն անպրէպ՝  
 դէպի այն լուսաւոր հորիզոնները՝ ուր սպառայ կեան-  
 քին յաշխանակը պիտի տօնուի գեղեցիկ օր մը: Պ.  
 Վարանդեան հաւատքի ախոյեան մըն է, որովհետեւ  
 բուն, խորունկ եւ անկեղծ փառաքներ ունի: Պ. Վա-  
 րանդեան երկրաւոր դրախտին ազատարար կրօնը կը  
 քարոզէ, որովհետեւ իր ցեղը, եւ ամբողջ մարդկու-  
 թիւնը, աւա՛ղ, այնքա՛ն հիւանդ են: Ան որ կը հաւա-  
 տայ՝ պիտի ապրի: Կեանքը հաւատքի պէտք ունի, եւ  
 ոչ թէ փիլիսոփայութեան եւ իր ջլատիչ կասկածնե-  
 րուն: Կեանքը լաւատեսութեան պէտք ունի, եւ ոչ թէ  
 վարանոտ մտավախութեան մը նուրբ հաշիւներուն:  
 Կեանքը հաստատումներով (affirmation) կը զարգա-  
 նայ, եւ ոչ թէ բացասումներով: Պ. Վարանդեան հայ  
 ցեղին կենսաւէտ հոգիէն թեւ առած թրթռուն ու տա-  
 քուկ ձայն մըն է: Եւ անոր ամենէն ստորադասական  
 բնազդներուն յաղթանակին՝ ի սպաս կը դնէ ջղուտ եւ  
 ճկուն իր իմացականութեան տրամադրած բոլոր կա-  
 րելի հնարագիտութիւնները:

Ի՞նչ պայծառ, ու զգացումով ելեկորացած ոճ,  
 իր ինքնատիպ, քնարաչունչ, կենդանի եւ ուժեղ ոճը:  
 Քիչ անգամ ոռոսահայ դրող մը այնքան տանելի ու  
 հաճելի է իր արտայայտութեան եղանակին մէջ:

Եւ ի՞նչ շինարար գիրք, իր գիրքը: Անթիլա՛ տեսակ  
 մը նոր ժամանակներու աւետարան է, որ կը հաւաստէ  
 զմեզ մարդէլ իտէալին կորովի զինուորութեան: Պատ-  
 մութեան մէջ յարատեւելու որոշում տուող ցեղ մը,  
 ինչպէս կ'ուզէ եղած ըլլալ մեր ցեղը, այդ տեսակ  
 գիրքեր պիտի կարգայ, անոնցմէ քաղելու համար  
 կեանքի լաւագոյն անունը: Եւ ինձի պէս անբախտ-  
 ներն իսկ, որոնց հոգիին ապահովութիւնը մեծ չափով

խախտած է կասկածանքէ ու անխտահութենէ ցեցա-  
կեր, որոնք՝ իբր թէ առաւելապէս գիտնալու քանդիչ  
յլմարութենէն բռնուած, մոխիրներու եւ աւերակներու  
աշխարհի մը մէջ՝ տակաւին ու յաւիտեան անթերի  
ճարտարապետութեամբ շէնքեր բարձրացնել երազող-  
ներուն ազնիւ միամտութեան վրայ անուշ զմայլանքով  
ժպտելու կացութեան մը (attitude) կը ջանան կրթըն-  
ցնել իրենց գոյութիւնը, — ինծի պէս հաւատքի անկա-  
րող հոգիներն իսկ, եթէ գիտեն ազնուօրէն վայրկեան  
մը ինքզինքնին մոռնալ, եթէ ազատ են՝ իրենց եսին  
իրաւացի՝ բայց սեղմ ու խիստ ճշմարտութիւնները  
ի շահ ընկերութեան մերթ ընդ մերթ իրենց մէջ սահ-  
մանափակելու աստիճան, պիտի խրատեն որ, Պ. Վա-  
րանդեանի գիրքը, եւ նմանները, կարգացունին, կար-  
գացունին եռանդով, կարգացունին հաւատքով, որպէս-  
զի ապրին մարդիկ, որպէսզի կեանքը յաղթանակէ:  
Վասնզի՝ «Այս է իմաստութեան վերջին խօսքը. — նա  
միայն արժանի է ազատութեան եւ կեանքի՝ ով որ ա-  
մէն օր կուրծով կը նուաճէ գանոնք»: (Կէօթէ):

\*  
\*\*

Վերածնունդ Հայրենիքին կողքը կը դարձնեմ:

Պատկերաչար մը՝ հայ ազատագրական շարժման  
դէմքերու եւ նահատակներու:

Առաջին էջին վրայ՝ Քրիստափոր Միքայէլեան,  
«գլխաւոր հիմնադիր Հ. Յ. Դաշնակցութեան, նահա-  
տակուած 1905ին:» — Ես միշտ հիացում ունեցած եմ  
ամէն կարգի հերոսներու մասին: Միշտ մարդկութեան  
արջառին մէջ շատ քիչ են անոնք, եւ իրենց մէջ կը  
պանծայ անհատապաշտութեան (individualisme) սկզբուն-  
քը՝ որուն կամակորներէն եմ: Հերոսներն են մարդկու-

թեան գերագոյն կարելիութիւններուն հազուադէտ արտայայտութիւնները: Արջաւը՝ արջառ է, հասարակաց ազգատիկ ու աննշան հանգամանքներով՝ բուսակենցաղ դոյութիւն մը քաջքշող երկրի վրայ: Անոր բաղկացուցիչ տարրերն իրարու կը նմանին, եւ զիրար միայն կ'արժեն: Մէկը միւսին տեղ՝ խնդիր չէ: Անոնք որ չեն նմանիր ոչ ոքի, անոնք որ կը տարրորոշուին անհատական մասնաւորութիւններով՝ անոնք ուշադրաւ միութիւններն են, եւ չեն շփոթուիր բնաւ: Երկրին աղէ լիակ են անոնք: Առանց անոնց՝ համ հոտ չէր մնար աշխարհի մէջ: Այդ պայծառ վարոսներն են որ՝ խաւարին տրտում միօրինակութիւնը կը լուսաւորեն ցանցառօրէն:

Քրիստափոր Միքայէլեան: Սրտագին ուշադրութեամբ կը դիտեմ այդ ինքնազուսպ կամեցողութեան մը ուժին մէջ խաղաղած համակրելի դիմագծութիւնը: Որքա՛ն երազ կայ իր կիսախուփ անուշ նայուածքին պայծառ միամտութեան մէջ, որքա՛ն խորհուրդ՝ իր լայն ու դմբէթարթ ճակատին վրայ, ու որքա՛ն կամք ու կորով՝ իր սեղմ շրթունքներուն վշտաբեկ այլ վճռական շրջագիծերուն մէջ: Անշուշտ քիչ անդամ կը պատահի որ երազը ի սպաս իրեն ունենայ այն հանդարտ, աննկուն ու գործնական կամեցողութիւնը՝ որով Քրիստափոր Միքայէլեան կըրցաւ արժեցնել իր կեանքն ու իր դործունէութիւնը: Unifié (\*) մըն էր անտարակոյս,

\*) Unifié կ'անուանեմ այն տիպարները, որոնց մէջ ներդաշնակութիւնը սուաջ կուգայ չէ թէ գրեթէ հաւասարագոր ձգտումներու հաւասարակշռութենէն, այլ՝ ձգտումներու ամբողջութեան՝ անոնցմէ մէկին կամ մէկ քանիին հպատակումովը: Այս վերջինները կը կազմեն անձնաւորութեան միութիւնը, եւ միւս ձգտումներուն

վսեմազոյն անուրջի մը տեսիլքէն շանթահար, ու դայն հետապնդելու անդրդուելի հաւատքով ամբացած: Եւ գնաց, մինչեւ վերջը, նոյն ուղղութեամբ, ուխտի դըժուարին ճամբուն վրայ իյնալով՝ անպարտելի արիութեան մը առաքինութեամբ: Սուրբերուն Պանթէոնը, իր պատուանդաններուն ընտրելազոյնին վրայ կը բարձրացնէ Միքայէլեանի կիսանդրին, եւ մենք պատկանանքով կը խոնարհինք այս մեծ ու ազնիւ Հայու Զաւկին անուան տղէ:

Կը թղթատեմ պատկերաշարը: Սերոր: Չեմ տեսած դէմք մը իրենին չափ հայեցի, իրենին չափ գեղեցիկ, իրենին չափ հանդարտ ու գիտակից ուժի աւնադեղ արտայայտութեան մը մէջ պատկերացած:

Ո՞ր մէկն անուանեմ սակայն բոլոր այն պաշտելի նահատակներուն, որոնք անխտիր վացին, գերազոյն իտէպլին անունով, մեռնիլ «աղատութեան ճանապարհին», որպէսզի ապրի գաղափարը, որպէսզի ապրինք մենք...: Ուշի ուշով կը նկատեմ իւրաքանչիւրին դէմքը, հոն իրենց հողին կարգալու բարեյօժարութեամբ: Ոմանք կ'արտայայտեն խանդավառ հողիներ, անգիտակից ու ինքնացայտ, վերացական ու երազատոջոր, ինքնամոռաց, ոււուցիկ եւ կուրօբէն բոլորանուէր: Ուրիշներու մօտ՝ կը պատկերանայ գերազոյն արդարութեան զգացումին դայրոյթը, եւ տառապողներու

---

կը բողոս կեանքի եւ առողջութեան պահպանման պէտք եղած գործունէութիւն մը միայն, այն պահուն իսկ, երբ անիրաժեշտ ներդաշնակութեան խզումով՝ իմացականութեան աւերումին ու գործարանաւորութեան մահուան պատնառ չեմ ըլլար:»

(Les Caractères, p. 16, par Fr. Paulhan. F. Alcar .

ցաւին վերահասութիւնը, լուսաւորուած՝ իմացականութեան զիտակից շնորհով: Իրենց նպատակներուն մէջ ամուր, իրենց որոշումներուն մէջ սառնորէն անդրդուելի եւ ահեղ են անոնք:

Պ. Վարանդեան՝ հոյակապ պերճախօսութեամբ ու վճիտ քնարականութեամբ գլուխ մը կը նուիրէ հերոսներու պաշտամունքին: Լիովին համակարծիք եմ իրեն: Մեր այսօրուան ճշմարիտ սուրբերն անոնք են՝ որ կրցան հերոսանալ ու մեռնիլ յանուն ազգային վերածնութեան դատին:



Հակիրճ գրախօսական մը, ինչպէս պարտաւոր են ըլլալ իմիչներս, չի կրնար իրենց մանրամասնութիւններուն մէջ ձեռք առնել այն բոլոր հարցերը, որոնց ուսումնասիրութեամբ կ'ըբաղի Պ. Վարանդեանի գիրքը:

Ընդհանրապէս խօսելով, անհրաժեշտ է սակայն մատնանիչ ընել թէ, այս գիրքը կը պարզէ Հ. Յ. Դաշնակցութեան հայեացքները եւ ընդհանուր աշխարհահայեցողութիւնը՝ հայ կեանքին վերաբերմամբ:

Դաշնակցութիւնը մեր այսօրուան քաղաքական կուսակցութիւններուն մէջ, անժխտելի կերպով, ամենէն գործունէայ, ամենէն ընդարձակածաւալ, ու միեւնոյն ատեն ամենէն աւելի հասարակաց ըմբռնումին մէջ վէճի ու անհամաձայնութեան առարկայ դարձած կուսակցութիւնն է, թէ՛ իր ձգտումներուն եւ թէ՛ իր գործելակերպին տեսակէտներով: Իր ընկերվարական ծրագիրը մեղի համար վտանգաբեր կը դաննն շատեր: Իր գործելու եղանակը՝ այլամերժ, խիստ եւ բուռն:

Իմ գործս չէ հոս զուտ փիլիսոփայութեան տեսակէտով քննութեան ենթարկել ո՛չ ընկերվարական վարդապետութիւնը, իր տեսաբանութեան եւ իր առաջ բե-

րած գործնական արդիւնքներուն համեմատ, ո՛չ ալ յեղափոխական կուսակցութեան մը գործելակերպը: Այդ տեսակ ուսումնասիրութիւն մը ընելու պահուն, պէտք պիտի ըլլար նաեւ նկատի առնել վերլուծական նշաւակութիւնը ամէն կարգի ընկերային ձգտում ունեցող վարդապետութեանց եւ իրենց գործելակերպերուն, — այն բոլոր բարոյական դրութիւններուն՝ որոնք անհատին ու ընկերութեան առնչութիւնները ներդաշնակելու համար՝ կը վատնեն աշխարհի լաւագոյն բարեկամեցողութիւնն ու իմաստութիւնը: Ի՞նչ ապերախտ ու կործանարար աշխատութիւն մը պիտի ըլլար այդ, եւ ի՞նչ անուշ պատրանքներ, հմայաթափ, պիտի ցնդէին, այդպիսի պարադայի մը մէջ: Ո՛չ, ասիկա իմ գործս չէ այս անգամ: Վասնզի տեղի չկայ:

Այս պահուս կ'ուզեմ միայն ըսել որ, հետեւած ըլլալով այն մեղադրանքներուն, որոնցմով հայ ժողովուրդին մէկ մասը ուզած է նշաւակել Դաշնակցութիւնը, կը գտնեմ զանոնք մեծագոյն չափով զրպարտական: Պ. Վարանդեանի գիրքը կարգալու է, տեսնելու համար թէ ի՞նչ խելացի, ի՞նչ բանիմաց, ի՞նչ քաջատեղեակ եղանակով մը Դաշնակցութիւնն առաջադրած է օժանդակել հայ կեանքի վերակազմութեան, իր ընդհանուր հանգամանքներուն մէջ, ժամանակակից ընկերային — մտաւորական աշխարհը տողորող դաղափարներուն համեմատ: Ոչ ի՞նչ տեսայ կործանարար՝ այս գրքին մէջ պաշտպանուած սկզբունքներուն ու ձգտումներուն խորը: Ընդհակառակը, զանոնք կը գտնեմ կենսաւէտ, արբեցնող, վերանորոգիչ, քանի որ անոնք իսկական արտայայտութիւնն են կեանքը նեխումէ կամ քարայրումէ ազատել ձգտող բնաշրջման օրէնքին:

Անշուշտ իրաւացի է հետաքրքիր ըլլալ, գիտնալու համար թէ Պ. Վարանդեանի քարոզած ընկերային վար-

դապետութիւնը եւ զայն գործադրելու մեթոտը ընդ-  
հանրապէս այս եղանակով ընդունուած են մեր մէջ,  
իր բոլոր հաւատակիցներէն:

Պ. Վարանդեան բնաւ չըսեր թէ Հայ տարրը աշ-  
խարհի մէջ կրնայ մէկէն ի մէկ ընկերվարականութիւնն  
ապրել առանց իր դոյութիւնը վտանգելու: Այս ճշմար-  
տութիւնը հասարակաց է՝ բոլոր բարոյական համա-  
մարդկային դրութիւններուն համար, — օրինակ՝ քրիս-  
տոնէութիւնը: Կոյր ըլլալու է շտեմներու համար այն  
անդունդը՝ զոր զմեզ շրջապատող մարդկութիւնը կը  
սլահսպանէ իր սլաշտօնական դաւանանքներուն եւ իր ա-  
մենէն իրական ապրելակերպին մէջ:

Արդարեւ կարելի չէ, առանց յիմարութեան, ձգտիլ՝  
հայութեան բազկացուցիչ ուժերն իրարմէ հեռացնելու,  
հայութեան ամբողջութիւնը կազմալուծելու ներքին  
սլաշտօններով, յանուն վարդապետական աղան-  
դամտութեան, — յանուն յեղափոխական կամ հակա-  
յեղափոխական սկզբունքներու — եւ աս այնպիսի ժա-  
մանակներու մէջ՝ ուր զմեզ շրջապատող քաղաքական  
փոթորկալի հանդամանքներն ու սլաշտօնները՝ ահար-  
կու սպառնալիքներ են մեր դոյութեան համար: Այդ  
սխալ մեթոտը, որի՛ կողմէն որ ալ առաջարկուի, պիտի  
մատնէ ազգային հաւաքական շահերու անդիտակցու-  
թիւն. պիտի մատնէ մահամերձ ժողովուրդի մը ջղա-  
ձգական շարժումը:

Որքան ատեն որ նշաններ շտեմները մեր շուրջը,  
որ զմեզ պիտի ապահովէին ի մասին համամարդկային  
բացարձակ արդարութեան մօտալուտ յաղթանակին,  
մեր գերագոյն առաքինութիւնը պիտի ըլլայ արթուն  
կենալ ու շուրջերնիս նայիլ: Կարելի չէ տեղի տալ,  
յանուն տեսականօրէն լաւագոյն վարդապետութիւննե-

րու, երբ ուրիշներ զմեզ առանձին պիտի թողուն անոնց դործադրութեան մէջ: Կարելի է որ մարդիկ պատրաստուին ընկերվարութեան: Բայց պէտք է դիտնալ որ, իր ընդհանրացած ձեւին մէջ միայն ընկերվարութիւնը դործադրելի է անվարան:

Գիտենք թէ ի՞նչ ուղղութեամբ կ'ընթանայ այսօր ինքզինք քաղաքակիրթ եւ մարդկայնացած հռչակող քաղաքական աշխարհը: Ի՞նչ լիբր եւ աղտոտ կատակերգութիւն կը խաղայ ան: Այս հանգամանքները միշտ աչքի առջեւ ունենալու է: Եւ ես տեսայ որ Պ. Վարանդեան ա'յս շինարար մտքով կ'ուսուցանէ: Եւ այս իմաստով կը դբէր Պ. Ռ. Դարբինեան ասկէց առաջ՝ Ազատամարտի մէջ հրատարակուած յօդուածաշարքով մը:



Ասոնցմէ դուրս, ինչ որ ալ ըլլային այն բոլոր կարելի տեսակէտները, որոնք պիտի ընդդիմահանուէին Դաշնակցութեան տեսակէտներուն, չենք կրնար ուրանալ թէ, Դաշնակցութիւնը, անտարակոյս՝ զինքը տողորող ընդհանուր ոգիին իսկ բերմամբ, հայ կեանքին մէջ կենսաւէտ ուժ մըն է, զոր կարելի չէ վարկաբեկել կամ ջլատել ջանալ, առանց վնասելու ազգային դատին ու շահերուն: Անտարակոյս կարելի է քննադատել Դաշնակցութիւնը, երբ տեղի կայ, անկեղծութեամբ ու անշահախնդրութեամբ: Արի կուսակցութիւն մը չէր կրնար մերժել քննադատուելու կարելիութիւնը: Բայց զայն քանդելու աններելի ինքնասպանութիւնը թող չգործուի բնաւ: Դաշնակցութիւնը, հիմնարկութիւն մըն է, որ, եթէ չուզեր ցրտութեան մը մէջ բիւրեղանալ, անշուշտ պարտաւոր է կրելու ժամանակին հարկադրած փոփոխութիւնները: Ինքը ձգտելով ըլլալ հայ կեանքին պահանջներուն արտայայտութիւնը, ի

հարկէ չի կրնար անտեսել այն նորանոր պայմանները, որոնց մէջ պիտի կրնար արդիւնաւորել մեզի համար՝ նոր մտքին բոլոր բարիքները: Պ. Վարանդեան, որ լուրջ դրող մըն է, այդ մտքով կը հաւաստէ իր ընթերցողները: Կը սիրեմ հաւատալ իր անկեղծութեան, վասնզի կը փափաքիմ որ Դաշնակցութիւնը ապրի ու բարգաւաճի, եւ վասնզի համոզուած եմ թէ՛ կազմակերպութիւնները նշանակելի ու ՚հեծ արժէք ունին իրենց քաղաքական ու ընկերային կեանքին մէջ պատմական եւ այլ կարգի չարիքներէ հալածական ժողովուրդներուն դոյուլթեան տեսակէտով: Տակաւին ճշմարիտն այն է որ, քաղաքակրթութեանց թոհուրոհին մէջ ապրիլ ու զարգանալ ձգտող ժողովուրդները կը յաջողին ու կը բարգաւաճին որքան իրենց բուսցուցած անհատական հանճարներով, նոյնքան ու նաեւ՝ այն կազմակերպական ուժերով, որոնք կոչուած են իրականացնել մեծ մարդոց մեծ երազները:

«Շանթ» կիսամսեայ համդէս  
1 Նոյեմբեր 1911, էջ 163-164

ՆԱԴԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ ԱՇՈՒՂԸ ԵՒ  
ՅՈՎՆԱԹԱՆ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ ՆԿԱՐԻԶԸ

Փարիզ, 1910

Պ. Չօպանեան քանի մը ամիս առաջ Փարիզի մէջ հրատարակեց հատոր մը, որ կը պարունակէ տաղերը Նադաշ Յովնաթան բանաստեղծին եւ ընդօրինակութիւնները՝ էջմիածնի տաճարին որմանկարիչ Յովնաթան Յովնաթանեանի գործերուն:

Պ. Չօպանեան ամփոփ ուսումնասիրութեամբ մը մեզի կը ծանօթացնէ երկու հայ արուեստագէտները, իրենց կենսագրական գիծերուն եւ իրենց գործին քննադատական արժէքին տեսակէտով, ու Պ. Չօպանեան միշտ իր գիտուն révélateur-ի պատուական դերին մէջն է:

Իրմէն կը տեղեկանանք թէ՛ Աշուղը ծնած է 1661ին, Սիսականի Շօռօթ բանաստեղծական գիւղաքաղաքին մէջ, — գեղեցիկ աւան մը՝ շրջապատուած վտակներու, անտառներու, ձորերու եւ բնական բիւր գեղեցկութիւններու վայրանկարներով: Իր կենսագրական գիծերը ցանցառ են: Իր որդւոյն, Յակոբի՝ իրեն ձօնած մէկ տաղէն միայն կը տեղեկանանք թէ՛ Աշուղ Յովնաթան իր ժամանակին «ուսումնական» մըն է եղած, իմաստուն եւ ընդհանուր յարգանքի արժանացած անձ մը,

ուչ թէ հասարակ ժողովրդային աշուղ մը :

Իսկ նկարիչ Յովնաթան՝ թոռն իսկ է Աշուղ Յովնաթանին, եւ իր կարգին եղած է խիստ յարգուած ու դիրքի տէր անձնաւորութիւն մը :

Պ. Արշակ Զօպանեան, Նարեկացիէն, — չվարանի'նը ըսելու, այո՛, Նարեկացիէն ու Քուչակէն յետոյ, դիւտը կ'ընէ այս երկու թանկագին Հայերուն, որոնց դործը սահմանուած է նպաստի բաժին մը բերելու հայ զեղարուեստական Մուսէոնին :

Հատորը կը պարունակէ քառասունեկեկ տաղեր, Աշուղ Յովնաթանէն, եւ լուսանկար վերարտադրութիւնը քսանեկեկ կտաներու, դարդանկարներու, սրմանկարներու «պատկերհան» Յովնաթանէն :

Նաղաչ Յովնաթան՝ կեանքի բանաստեղծ մըն է լթեթև, անհոգ, զուարթ հոգի մը, որ կեանքի երեւոյթիւն վրայէն կը թռչի կ'անցնի՝ ծիծառի մը նման ուրախ, եւ ապրելով վայրկեանին երջանկութեան մէջ : Կը սիրէ կեանքը, կը սիրէ կինը, կը սիրէ դինին, կը սիրէ միտը : Զգայապաշտ բանաստեղծ մըն է, — ոգեկան ու միտտիք դաստիարակութեան մը վրայ ճառագայթող հոգի մը, սիրաւէտ, արբշիւ, տարուած, որ ժամանակ ու պէտք չունի կանգ առնելու՝ մտածման խոժոռութիւններուն առջեւ : Իր սէրը, հակառակ տեսակ մը խպնտութեան, որ հայ սիրային բանաստեղծութեան ընդհանուր նկարագրերը կը շինէ, ընդունակ է համարձակութիւններու եւ յանդգնութիւններու, որոնք վայելքի զօրեղ ախորժակներով բաբախուն իրապաշտ խառնուածք մը կը մատնեն : Իր սիրականին կլոր եւ համեղ շամամներուն յաճախանքէն հալածական, աշխարհի մէջ անոր չքնաղ պատկերը միայն կը տեսնէ, եւ անով միայն կը հաւատայ միտթարել աշխարհի ունայնութիւնը : Վասն զի ինք՝ կեանքի իմաստին բացարձակ տղէտ մը

չէ, սչնչութեան ստուգութիւնը հոգիին մէջ սողոսկած է. բայց սա՛ է որ՝ ինք կանգ չառնէր անոր առջեւ, կ'ուզէ ապրել, ու կ'ապրի, սիրելով, խմելով ու ճաշակելով:

Նաղաչ Յովնաթան մեծ բանաստեղծ մը չէ անշուշտ: Գուշակ մը չէ ինք ապահովարար: Բայց իր բանաստեղծութեան մէջ յատկութիւնները կան զգայուն սրտի մը, գիտուն մտքի մը եւ թրթռուն հոգիի մը: Իր բանաստեղծական գործը խիստ անհաւասար է զբական արժէքի տեսակէտով: Մեծ մասամբ անիկա շինուած է հասարակ տեղիքներով, տափակ է եւ անթռիչ՝ ներշնչումով, եւ զուրկ՝ ինքնատուլութենէ: Բայց դայն պէտք է նկատել իր լաւագոյն կողմերէն, եթէ ունի անոնցմէ: Բանաստեղծի մը սիրտը ակունք մըն է: Եւ անիկա միշտ միօրինակ մաքրութեամբ ջուր մը չի տար: Անձրեւները, մթնոլորտային եւ երկրաբանական յուզումները՝ կ'ազդեն ջուրին յատկութիւններուն վրայ: Բաւական է որ ակունքը մաքուր ըլլայ ըստ ինքեան: Նաղաչ Յովնաթան՝ բաւական մաքուր ակունքի մը յատկութիւններէն զուրկ չէ: Կարելի է ախորժակով ու համակրութեամբ կարդալ զինքը, եւ ասիկա անպէտ արժանիք մը չէ: Պէտք է նոյն իսկ ընդունիլ թէ, Նաղաչ Յովնաթան մէկն է այն մոռցուած բանաստեղծներէն՝ որ հետզհետէ կը յայտնուին, հերքելու համար սա ընդհանուր կարծիքը թէ՛ հին հայ բանաստեղծութիւնը կրօնաբարոյական միօրինակ մօթիֆ մը միայն գիտցած է շահագործել: Ունեցած ենք ժողովրդային հարուստ բանաստեղծութիւն մը: Մեր ցեղին հոգին ինքզինքը կ'արտայայտէ հոն իր նկարագիրը շինող տարրերուն ճոխ ալլաղանութեան մէջ: Ասիկա բաւական էր վերելի սխալ կարծիքը ջրելու: Մեր անգիր բանաստեղծութիւնը անգին

գոհարներու շարան մըն է: Հոն կը շողան բազմերանդ ճառագայթներ զգացումներու եւ գաղափարներու աշխարհէն, որ մեր ցեղը ոգեւորած են դարերու ընթացքին: Հայ հանճարը՝ միակ աղբատիկ լար մը չէ՛ հնչեցուցած: Անիկա լսելի ըրած է բաղմաղի քնարի մը ամենէն բազցր ու սրտազին թրթռումները: Ձեռագիրներու մէջ մոռցուած հայ թրուպատուներու յայտնութիւնը՝ պիտի դայ բերել թանկազին նպաստ մը այս ճշմարտութիւններն իսկ զօրացնելու մտքով: Մնաց որ, մի՛միակ Նահապետ Քուչակի մը գոյութիւնը բաւական պիտի ըլլար լրացնելու բոլոր պարագաները: Նահապետ Քուչակ, զմայլելի ու սիրելի այն քաղցր բանաստեղծը, այն համազրական Հայու հոգին՝ որուն խնկաբոյր ջերմութիւնը իմ հոգիս կը գինովցնէ սիրով ու հեշտութեամբ, որուն հետ կ'զգամ թէ կ'եղբայրանան իմ բոլոր զգացումներս, ամէն անգամ որ իրեն կը մօտենամ, իր անուշ, իր փափուկ ու թարմութեամբ սարսուռն երգերուն մէջ վնասուելու համար՝ մխիթարութեան վըճիտ աղբիւր մը: Ասիկա անոր համար է՝ որովհետեւ կը զգամ թէ ան՝ որ այդ սիրոյ եւ արցունքի երգերը երգեց, հոգի մըն էր իմ հոգիէս, սիրտ մըն էր իմ սիրտէս, եւ տակաւին բան մը կայ մէջս՝ որ իրմէ կը խօսի, — պիտի համարձակէի ըսել:

Բանաստեղծները, մանաւանդ ժողովրդային բանաստեղծները, եւ անոնք՝ որ շատ մասնաւորուած զարտուղի զգայնութեան մը անօրինակ թրթռումները լսելի չեն ըներ, ամէն անգամ կը խօսին մեզի ցեղի մը սրտին ամէնէն ինքնաբուխ ու ամէնէն ջերմ զգացումներուն խորէն: Ժողովուրդ մը ամբողջ՝ անոնց մէջ պիտի ճանչնայ ինքզինք, իր ցաւերով: Ու բոլոր տեսիլներն ու պատկերները՝ իր երեւակայութեան աշխարհը ծաղկաւէտող, ու բոլոր կիրքերը՝ իր հո-

դին ապրեցնող, ու բոլոր լարերը՝ զինքը հինաուրց նուիրական կոճղին կապող, — այդ բոլորը պիտի տեսնէ ու ներդաշ անոնց հետ :

Նաղաշ Յովնաթանի տաղերուն ընթերցումը՝ ընդունակ է այսպիսի խորհրդածութիւններ թելադրելու :

Իսկ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը՝ հասարակ արուեստագէտ մը չէ : Պ. Չօպանեան անոր մասին կը վկայէ ուշադրաւ տաղանդ մը, որ պատիւ կը բերէ հայ հանճարին : Դժբախտաբար, իր գործերուն կարեւոր մէկ մասը՝ էջմիածնի միաբանութեան տգիտութեան եւ Խրիմեան կաթողիկոսի վանտալական հակումներուն հետեւանքով, փճացած է :

Սպասելի է որ Յովնաթան Յովնաթանեանի թողած դործը ուսումնասիրուի մասնագիտական հասկացողութեամբ :

Պ. Չօպանեան՝ մատնանշում մը ըրած է, եւ իր դերը, վերստին, ազնիւ ու գեղեցիկ դեր մըն է միանգամայն :



Ինչպէս կը տեսնուի, խիստ մեծ նշանակութիւն ունի անցեալը պրպտել, եւ Քուչակներ կամ Յովնաթաններ հանել դարերու փլատակներուն տակէն : Հնախոյզի նուիրական ու յարգելի աշխատութիւն մըն է այդ : Այդ զիւտերը աւերակներու մէջ գտնուած թանկագին դրամներ, արուեստի մեծարժէք առարկաներ են : Կը նայինք անոնց վրայ, հիացումով, երկիւղած գուրգուրանքով, ու անոնց մէջէն կը կարդանք անցեալը :

Մեր անցեալի մոռցուած տաղանդները վեր հանելու տեսակէտով, ահա՛ այս կարգի սուրբ աշխատութիւն մըն է, որուն ինքզինքը նուիրած է Պ. Չօպանեան, տարիներէ ի վեր : Իրմէն աւելի ընդունակ ոչ ոք կար այդ

նուիրական պաշտօնին համար: Ոչ ոք իրեն չափ զգա-  
յուն միտք մը ունի, հասկնալու համար բոլոր կարելի  
գեղեցկութիւնները. ո՛չ ոք իրեն չափ լայն եւ հիւրըն-  
կալ սիրտ մը ունի, յօժարելու եւ հանդուրժելու համար  
անոնց գոյութիւնը: Ես չեմ ճանչնար մէկը որ իրեն  
կարենար հաւասարիլ՝ գեղեցկութեան պանծացումին  
աննախապաշար ու աննախանձ խանդավառութեան մէջ:  
Ինք չէ կրցած հանդուրժել որ հայ միտքը անտարբեր  
մնացած ըլլար նոյնիսկ սկզբնական ակունքէն ճառագայ-  
թող այն լոյսերուն համար՝ որոնք իր փառապսակին  
լաւագոյն զարգերը պիտի կազմէին: Իր դրական-գե-  
ղարուեստական համակրութիւնները կը սաւառնին մա-  
քուր բարձրութեան մը վրայ, ուր անզօր են պզտիկ  
նկատողութիւնները՝ պզտիկ շահերուն ու պզտիկ կիր-  
քերուն:

Կարելի չէ անտարբեր աչքով նկատել գործունէու-  
թիւնը թանկագին գրագէտի մը, որուն կեանքին կա-  
րելոր մէկ մասը նուիրում մը եղած է Հայ Հանճարին  
պանծացման: Ժամանակը եկած է որ կարենանք անմի-  
ջապէս զիտակցել մեր սեփական փառքը շինող հարս-  
տութիւններուն:

Պ. Զօպանեան մէկն է անոնցմէ: Իր դրական գոր-  
ծունէութիւնը, իր ընդարձակութեամբ ու որակով,  
ինքըլինքը կը հարկադրէ մեր սքանչացման ու յարգան-  
քին: Մենք պէտք չունինք սպասելու որ մեր փառքերը  
մեռնին եւ սուգի անօգուտ պսակներ զրկենք անոնց հո-  
ղակոյտերուն: Եռանդով կը ձայնակցիմ Ոստանի մէկ  
խմբագրին, որ, Պ. Զօպանեանի ներկայ գործին վրայ  
դրած իր մէկ դրախօսականին իբր վերջաբան, կ'առա-  
ջարկէ տօնել բազմաշխատ գրագէտին քսանեւհինգամ-  
եայ դրական գործունէութեան յոբելեանը: Այսպիսի

ցոյց մը բան մը չպիտի աւելցնէր անշուշտ Պ. Չօպանեանի արժանիքներուն վրայ. բայց այսպիսի ցոյց մը մէկ կողմէն պիտի ապացուցանէր թէ անիկա սրտի պահանջ մըն է նոյն իսկ անոնց համար՝ որ պիտի գիտցած ըլլային դրասպէս զնահատել յոգնաջան աշխատաւորին գործը, եւ միւս կողմէն եղած պիտի ըլլար բարոյական եւ նիւթական գոհացումի պատրուակ մը՝ արժանաւոր յորելեարին համար:

Սպասելի է որ, պոլսահայ մտաւորականութիւնը յօժարութեամբ նախաձեռնարկ ըլլայ ի գլուխ հանելու Պ. Չօպանեանի յորելեանին գաղափարը: Չեմ կարծեր որ անարձագանգ մնայ միտք մը՝ որ արժանի է անխտրական համակրութեան: Պ. Չօպանեան ունի անկախ հայ գրագէտի այն պայծառ հանգամանքը, որով ինքզինքը կարող է հակադիր ընելու մեր ամենուս յարգանքին ու սիրոյն:

«Ազատամարտ» շաբաթաթերթ,  
1 Մայիս 1911, քիւ 42



## ՎԱՂՈՒԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

---

Շարաքաթերք «Մասիս»ի 1900 Յունիս 24ի քիւիւն մէջ (քիւ 26), խմբագրութիւնը իր աշխատակիցներուն եւ առհասարակ ընթերցողներուն ուղղած է հետեւեալ *Հարցարանը*, գոր մտածած ու խմբագրած էր Արտաշէս Յարութիւնեան: Ատոր պիտի հետեւին հեղինակին բացատրական մէկ քաղերը, իր տեսակէտներն ու եզրակացութիւնը: Աւելարդ է ըսել քէ այս հարցը ժամանակին մեծ հետաքրքրութիւն արքնցուց եւ ծանօթ գրագէտներ, ինչպէս Ռ. Պէրպէրեան, Ռ. Զարդարեան, Ռ. Որբերեան, Յովհ. Գազանեան, Ս. Դաւթեան, Արշ. Ալպոյանեան եւ Շ. Շաւարշ, իրենց տեսակէտները պարգեցին շահեկան յօդուածներով:

Ն.Գ.Բ.

*Գրականութիւնը այն ատեն միայն ճշմարիտ ու անկեղծ է, երբ անիկա կը ներկայանայ իբրեւ զբաւոր ցօլացումն ու յիշատակարանը անցեալ ու ներկայ կեանքի երեւոյթներուն այն ցեղին՝ որուն կը պատկա-*

նի, — արտայայտուելով այդ ցեղին գեղեցկագիտական-  
գրական մասնաւոր խառնուածքին տիրական առանձնա-  
յատուկ յատկութիւններուն համեմատ :

*Սկզբունքով ընդունելէ ետքը այս assertion-ը .*

Ա. — Կը կարծէ՞ք թէ մեր ցեղն ընդունակ ըլլալ  
նշմարտապէս հայ գրականութիւն մը ստեղծելու :

Բ. — Այսօրուան թրքահայ գրականութիւնը ընդհան-  
րապէս կը համապատասխանէ՞ ակնարկուած պայմաննե-  
րով հայ գրականութեան մը, եւ, Պոլիս՝ թրքահայերու  
արդի մտաւորական կեանքին իբրեւ գլխաւոր կեդրոն՝  
ընդունա՞կ է ու կրնա՞յ ըլլալ այդ գրականութիւնը ե-  
րեւան բերելու, իր բովանդակ ընդարձակութեանն ու  
կատարելութեանը մէջ :

Գ. — Կը կարծէ՞ք որ այսօրուան Պոլսահայ-թրքահայ  
գրականութիւնը պէտք ունենայ նոր ձգտումով մը ներ-  
շնչուելու, եւ, այս տեսակէտէն՝ ի՞նչ ուղղութեամբ ու  
ի՞նչ ոգիով կը բաղձաք որ կատարուի մեր գրականու-  
թեան բարեշրջումը վաղուան համար :

Դ. — Ի՞նչ կը խորհիք *գաւառական գրականութեան*  
մասին : Ըստ ձեզ, գաւառական գրականութիւնը ընդու-  
նա՞կ է ակնարկուած բարեշրջութիւնն իրագործելու,  
թէ՛ մեր գրականութեան մէջ անոր գոյութեան իրա-  
ւունքը պէսպիսութեան մը, զանազանութեան մը, մաս-  
նանիւղի մը հանգամանքով միայն ընդունելի կը նկա-  
տէք :

Իսկ եթէ կ'ընդունիք գաւառական գրականութեան  
կարեւորութիւնն ու առաւելութիւնը Պոլսականին վրայ,  
գուտ հայեցի ներշնչումով ու իսկատպութեամբ գրա-  
կանութիւն մը ծաղկեցնելու ծրագրին իրականացուման  
տեսակէտէն, ըստ ձեզ, որո՞նք են այն միջոցները ո-  
րոնցմով գաւառացի գրագէտները գործնական վիճակը

պիտի ունենային այդ գրական ծրագիրը գործադրելու :

Այդ պարագային, ի՞նչ պիտի ըլլար Պոլսեցի գրագետին դիրքը՝ վաղուան գրականութեան նկատմամբ, եւ ի՞նչ կը խորհի՞ք իր ապագային մասին :

*Այս հարցարանին առթիւ, Մասիսի խմբագրութիւնը կը գրէր հետեւեալը .—*

«Այս հարցումը, — զոր հրապարակաւ կ'ուղղենք մեր հին ու նոր բոլոր գրագէտներուն վաղուան հայ գրականութեան նկատմամբ քննութիւն մը կատարելու բաղձանքով, — մեզի թելադրած է մեր բարեկամ ու աշխատակից Արտաշէս Յարութիւնեան՝ գաւառացի ծանօթ գրագէտը որ ամէն ձեռնհասութիւն ունի այս տեսակ ձեռնարկի մը : Աւելի պարզ խօսելու համար, ըսենք թէ Յարութիւնեան ինքն է հեղինակը հարցումին՝ զոր իր առաջարկութեան վրայ՝ սիրայօժար կը ստանձնէ Մասիսի խմբագրութիւնը, իր թերթին էջերը բանալով այս կարեւոր խնդրին առջեւ, հասնելիք պատասխանները յաջորդաբար հրատարակելու պատրաստակամութեամբ : Ինչպէս կը տեսնուի՝ հարցումը բոլորովին լուրջ հանդամանք մը ունի, եւ կը փափաքինք կարելի եղածին չափ շատ ունենալ ձեռնհասներու կարծիքը կամ պատասխանը, — փոյթ չէ թէ հակիրճ ըլլան կամ ընդարձակ — որոնց ամբողջին երեւումէն ետքը, ընդհանուր եզրակացութիւն մը պիտի գրէ Յարութիւնեան, եւ կ'մտադրութիւնն ալ իր կարգին :

«Թէեւ Մասիսի խմբագրութեան կողմէ պիտի ձեռնարկուի առանձին նամակներով դիմում ընել ամէն առնոց որոնք անուն մը ունին մեր գրականութեան ու լրագրութեան մէջ, բայց ուրախ պիտի ըլլանք՝ եթէ

ընդհանուր կերպով՝ իբրեւ իրենց ուղղուած նկատեն  
այս հարցումը մեր հեղինակները, գրագէտները, հրա-  
պարակագիրները, եւ ինքնաբերաբար պատասխանել  
յօժարին, առանց անհատական հրաւէրի սպասելու,  
որուն առաջման մէջ կրնան յապաղումներ եւ նոյն իսկ  
թերացումներ պատահիլ:

«Կը սիրենք յուսալ որ մեր սոյն հրապարակային  
հրաւէրը ինչպէս նաեւ մեր անհատական դիմումները  
փութկոտ ընդունելութեան մը պիտի արժանանան եւ  
առ առաւելն մինչեւ մէկ ամիս պիտի ստանանք սպաս-  
ուած բոլոր պատասխանները:»

#### «ՄԱՍԻՍ»Ի ՀԱՐՑԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՋ

Բիւրակին խմբագրութիւնը, գրչի աննկատ շար-  
ժումով մը, իր յունիս 27ի թիւով կ'ըսէ թէ, իր թերթին  
1898 եւ 1899 շրջաններուն մէջ իր աշխատակիցները թէ՛  
Պոլսէն եւ թէ՛ դաւառէն ընդարձակ ուսումնասիրու-  
թեան նիւթ ըրին այն չորս հարցումները, զորս Մասիս  
իր թիւ 26ով ուսումնասիրութեան նիւթ կ'առաջարկէ  
«Մասիսի առաջարկ» խորագրին տակ: Եւ Մասիսի  
այս tardif <sup>(<sup>o</sup>)</sup> առաջարկին առիթով հետաքրքիրները  
կը հրաւիրէ աչքէ անցնել Բիւրակին նախորդ համար-  
ները, ուր անոնք լիովի <sup>(<sup>r</sup>)</sup> պիտի գտնեն եղեր իրենց  
հարցասիրութիւնը գոհացնելու նիւթեր: Ու, իբրեւ  
վերջաբան, կ'աւելցնէ. «Սպասենք տեսնելու համար թէ  
արդէն ըստածներէն տարբեր բաներ մը երեւան պիտի  
գա՞ն այս նիւթին վրայ: Բայց պէտք է որ մոռացու-  
թեան թողուի արդէն կատարուած աշխատութիւն մը:»  
Որովհետեւ այս գրութեան շեշտը Մասիսի ձեռնարկին  
վնասակար ու réactif ըլլալու անբացատրելի նպա-

տակ մը կը մատնէ, ինքզինքս ստիպուած կը զգամ ընթերցողներուս դիտել տալու թէ .

1. Բիւրակն երբեք, au grand jamais, քննութիւն մը բացած չունի վաղուան գրականութեան վրայ այն ձեւով՝ որով կը ձեռնարկէ բանալ այսօր Մասիս :

2. Իր նշանակած թուականներուն Բիւրակն առաջին անգամ ու միմիայն ինէ հրատարակած է զանազան յօդուածներ Պոլսահայ գրականութեան իսկական նշանակութեան՝ ու գաւառականին ապագայ բնութարձակ կոչումին վրայ, ու Պոլսահայ ո՛չ մէկ գրող իր կարծիքը յայտնած է այս մասին : Երկու տարտամ յօդուածագիրներ միայն գաւառէն բանասիրութեան, ազգաբնութեան ու լեզուաբանութեան կարեւորութիւնը երգեցին սովորական ծանօթ եղանակով : Կը յայտաբարնմ թէ Բիւրակնի խմբագրութիւնը ինք իր կողմէն աշխատութեան մէջ մասնակցութիւն չէ ունեցած ուղղակի, եւ այդ յօդուածները իր թերթին մէջ հրատարակուած տեսնելու բախտէն զատ՝ գործօն զեր մը չենք կրնար ճանչնալ իրեն համար, որով, արդէն կատարուած աշխատութիւն մը մոռացութեան թողուած տեսնելու վախը, այսօր, իր հաշուին, բոլորովին անտեղի կը դառնայ :

Խնդիրը ուրիշ տեսակէտէ մը նկատելով, չեմ գիտեր թէ գրական կարեւոր հարցի մը մասին բացուած այս քննութեան առթիւ ճշմարտութիւնը խեղաթիւրելուն մէջ ի՞նչ օգտակար ու պարկեշտ նպատակ մը կրնայ կենալ Բիւրակնին համար . բայց դիտել կուտամ որ, մեր յարուցած խնդիրը երբե՛ք իր կարեւորութիւնը չի կորսնցներ, եւ եթէ կրկնութիւն մըն ալ եղած ըլլար — ինչ որ չէ — սչ թէ յետամնաց, այլ օգտակար անհրաժեշտ կրկնութիւն մը եղած պիտի ըլլար մեր ըբածը :

Եթէ Բիւրակն բոլորովին անկեղծ է իր դիտողութեան մէջ, այն ատեն իր հասկացողութեան շրջանակէն դուրս մնացած կ'ըլլայ սա մտածումը թէ նոր դադար փար մը որպէս զի օդտակար իրականութեան մը յանդի, անհրաժեշտ է որ նուիրապիքժուի տեսակ մը հասարակաց կարծիքով, ու անոր համար որեւէ կրկնութիւն, այս կամ այն ձեւի ներքեւ, ոչ թէ յետամնաց, անօգուտ է, այլ մանաւանդ՝ անհրաժեշտ :

Յանկալի էր որ Բիւրակին հրաւիրած հետաքրքիրներէն ալ այս առիթով իրենց հետաքրքրութեան արդիւնքը ընդհանուրին ծանօթութեան ներկայացնողներ գտնուէին :

Ծ . Խ .— Աւելորդ կը սեպեմք մեր կողմէ բան մը աւելցնել այս Յայտարարութեան վրայ, որ յստակ կերպով կը հաստատէ արդէն թէ Բիւրակն կամովին կամ ակամայ սխալի մէջ ինկած է՝ այնպէս մը հասկցնել ուզելով իր ընթերցողներուն թէ՝ «Վաղուան գրականութեան» վրայ Մասիսի կողմէ մեր գրագետներուն ուղղուած հարցումը արդէն իսկ այդ թերթին մէջ ծեծուած խնդիր մը եղած ըլլար :

— Շար . «Մասիս», 15 Յուլիս 1900, քիւ 29

### «ՄԱՍԻՍ»Ի ՀԱՐՅԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՁԸ

«Բիւրակն»՝ prestige է ու վարկէ ինկած թերթը, ինքնագովութեան ու ազգազրա-լեզուադիտա-բանասիրական տքնութիւններու հռչակաւոր fiasco ն, պարզապէս նողկալի կը դառնայ այսօր, վաղուան դրականութեան առթիւ բացուած վիճարանութեան մէջ : Կ'աղմըկէ, կը բացադանչէ, ձեռքը կուրծքին դարնելու ձեւով կը բողբէ, — ու դեռ բոլոր զաւեշտական ձեւերը

մէկու մը՝ որուն կարծեցեալ արժանիքները տարակոյսի ներքեւ պիտի դրուէին, — արժանիքներ՝ զորս անժըխտելի ու անվիրաւորելի նկատած էր ինքը: Այլ իր ինքնագով մունետիկի բոլոր խժալուր ազմուկը իրեն նաքարակիտ մըն ալ չի շահիլ տար՝ ի նպաստ իր դատին: Ընդհակառակն: Եւ անոնք որ «Բիւրակն»ը ժամանակէ մը ի վեր, — ու բաւական ժամանակէ ի վեր, — Դաւթեան դորձակալութեան ունեւորի անտանելի շրջաբերականին չարափոխուած տեսնելու յաւը զղացին, այսօր իրենց տխուր համոզումներուն մէջ աւելի կ'ամբապնդուին միայն: Ընթերցող հասարակութիւնը, որ յաճախ հրապարակային վիճարանութեան մը ամենէն կարեւոր dessous-ներուն անդիտակ է, ուղածին պէս կրնայ մեկնել: Այդ հասարակութեան կը յանձնարարեմ, եթէ ձանձրութիւնը կ'արժէ, կարդալ «Բիւրակն»ին նախորդ համարները,

1. Համոզուելու համար իմ նախորդ յայտարարութեանց ստուգութեան: «Բիւրակն»՝ վաղուան գրականութեան վրայ քննութիւն մը եւ ընդարձակ ուսումնասիրութիւններ՝ իր Պոլսեցի ու դաւառացի բազմաթիւ աշխատակիցներուն կողմէն իր համարներուն մէջ լիուրի կատարուած ըլլալ կը հռչակէր, ու այսօր... միմիայն Պ. Գալուստ Անդրէասեանի անունը մէջտեղ կը նետէ: Գ. Անդրէասեանին, մեր նոր սերունդի ամենէն բեղուն ու հասուն միտքերէն մէկին՝ արժանիքներուն վրայ չիացող մըն եմ. այլ իր յօդուածները, իրենց ինքնուրոյն կարեւորութիւնը պահելով հանդերձ, անմիջական ու բացարձակ աղերս չունին մեր յարուցած խնդրին հետ: Աղգազըր-լեզուագիտութեան նիւթերէ բաւական տարբեր բաներ կ'ուզենք քրքրել այս անգամ: Կը սպասենք որ «Բիւրակն» շարունակէ մէջտեղ դնել անունները իր Պոլսեցի ու գաւառացի բազմաթիւ աշ-

Խատակիցներուն որոնք դրած են եղեր այս նիւթին վըրայ :

2. Զարմանալու համար թէ՛ արդեօք այս այն միւնոյն սիրելի Պ. Դաւթեա՞նն է, որ իր թերթին մէջ լաւագոյն գնահատականները հիւրընկալած եւ դրած էր այն անձին դէմ՝ զոր այսօր Լաֆօնթէնի ճանճին նմանցնելու ողորմելի եւ աղքատ սրամտութեան զուարճութիւնը կը պարգեւէ մեզի: Հասարակութիւնը՝ կրնայ զարմանալ այս ձեւով, իսկ ես՝ նողկանքը ունիմ յայտարարելու թէ՛ այսօր ինծի դէմ իր ասեղի անվնաս հարուածները այնքա՞ն չար մտադրութիւններով փորձել ուզողը այն երջանիկ, այն պարկեշտ, այն ուղղամիտ մահկանացուն է, որ դեռ երէկ, բարեկամաբար, — ինչո՞ւ չէ, — կը խնդրէր որ շարունակէի աշխատակցիլ իր թերթին: Ինչէ՞ն է այս հակասութիւնը՝ երէկին ու այսօրուան մէջ: Աս ալ խուրճագ խմբագրի հնարամտութիւններէն չըլլա՞յ:

Բայց բոլոր ատոնք՝ Դաւթեան զործակալութեան ուէքլամի շրջաբերականին ինկած վարկը բարձրացնելու չպիտի ծառայեն ապահովապէս: Ու իբրեւ վերջնական եզրակացութիւն այս քիչ մը անտեղի վիճաբանութեան, ինչ որ ալ շարունակէ ըսել ուղիւ հնարամիտ գործակալը, Մասիսին ու անոր աշխատակիցներուն վնասակար ըլլալու մտադրութիւնը անտարակուսելի կը դանենք:

Ծ. Խ. — Կը ցաւիմք որ Պ. Արտաշէս Յարութիւնեան այսօրու խիստ պատասխան մը տալու հարկին մէջ գրումուեցաւ, ինչ որ իր իրաւունքն էր, Բիւրակնի անխմաստ ու անտեղի յարձակումներուն, որոնք բարեկրթութեան սահմանները անցան եւ անձնականութեան տարին՝ լրբագրական հարցի մը կեղծ փողին տակ սկսուած վէճ մը (Տե՛ս այս շաբաթաթերթի յուլիս 18ի թիւը): Խնդիրը

իբ պարզագոյն ձեւին վերածելով, մէջտեղ կը մնայ սա  
անհերքելի իրողութիւնը թէ *Բիւրակնի* խմբագրութիւ-  
նը չկրցաւ ցոյց տալ անունները այն գրագէտներուն ու-  
րոնք այդ թերթին մէջ գրած ըլլան «Վաղուան Գրակա-  
նութեան» վրայ եւ ապաստանեցաւ միայն՝ Պ. Գալուստ  
Անդրէասեանի յօդուածներուն, տարիներ առաջ հրա-  
տարակուած: Ասկէ դուրս, ինչ որ գրեց ու գրէ Գալուս-  
տեան գործակալութեան *օսկանը*, խուսափողական բաներ  
են որոնց չարժեր այլեւս կարեւորութիւն տալ:

Արդէն, ինչպէս կը դիտեն *Մասիսի* ընթերցողները,  
երկու պարբերական հանդէսներ՝ մէկը Եզմիրէն ու միւ-  
սը Պոլսէն՝ բան գործ ըրած են ամենէն տափակ, ամենէն  
գոեհիկ ոնով վիճարանութիւններ գրգռել մեզի հետ,  
միմիայն նպատակ ունենալով քիչ մը ուշադրութիւն  
երաւիրել իրենց վրայ եւ եթէ հնար է՝ *Մասիսի* վայե-  
լած վարկը տկարացնել: Իրենց առաջին նպատակին  
մէջ յաջողին թերեւս, վասնզի շատեր տեսանք՝ գրասէր  
ու ընթերցասէր բարեկամներ՝ որոնք *Մասիսի* պատաս-  
խանները տեսնելէ ետքը կը հարցնէին թէ ի՞նչ էին  
*Արեւ. Մամուլի* եւ *Բիւրակնի* մէջ գրուածները... գոյս  
չէին կարդացած: Գալով երկրորդ նպատակին, ընտրած  
նամբանին այնքան ծուռ է՝ որ խնդուքնիս կը շարժէ:  
Մենք պիտի շարունակենք մեր գրական - լրագրական  
այս համեստ ձեռնարկութիւնը նոյն ուղղութեամբ որուն  
կը հետեւինք ամիսէ ի վեր եւ որ արժանացած է հասա-  
րակութեան համակրանքին, առանց բնաւ ազդուելու  
այդ երկու թերթերու վարիչներուն գնդասեղի հար-  
ուածներէն որոնք գէթ ժանգոտած չըլլալու առաւելու-  
թիւնն ալ չունին:

Շար. «Մասիս»

5 Օգոս. 1900, թիւ 32

ԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ  
ԵՒ  
ՌԷԹԷՈՍ ԷՑ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ա.

Ապահովարար, եւ առանց չարամտութեան, Պէրպէրեան էֆ. միակ խոնարհամիտ մարդը գտնուեցաւ Պոլսահայ նախորդ սերունդի այն գրագէտներուն մէջ՝ որոնք անհերքելի մեծութեան մը հռչակովը ոսկեզօծուած տեսան իրենց անունները: Ինքը միակը եղաւ, որ ուզեց նկատողութեան առնել գրական այն խնդիրը, զոր երեւան հանեցինք նոր սերունդէն քանի մը երիտասարդ գրողներ: Անհրաժեշտ է այս կէտը ստորագծել, ի պատիւ իր լայն ու խորաթափանց մտքին: Առ այժմ՝ ուրիշներուն հետ դործ չունինք: Մենք զանոնք հանդիստ կը թողունք իրենց արհամարհանքի այն տղայական դիրքին մէջ՝ որուն հաճոյքը այնքա՛ն ակորժով ճաշակել կը թուին: Ծնորհակալ ենք Պէրպէրեան էֆ.ին, որ մեզի առիթը կուտայ վերստին արծարծելու, վերըս-

---

\*) Արտաշէս Յարութիւնեանի այս յօդուածը պատասխանն է Ռ. Պէրպէրեանի այն յօդուածին, որ լոյս տեսած է 1901ի Մասիսի մարտ 10ի թիւին մէջ: Ն.Գ.Բ.

տին մշակելու դաղափար մը, որուն ապագայ պտղաբերութենէն դրական մեծագոյն բարիքները կը յուսանք սպասել:

Իմ մասիս, մեծ հաճոյքով ճաշակեցի իր յօդուածին բոլոր սրամտութիւններն ու յատկանշական շեշտերը: Չէ՞ մի որ ամէն մարդ՝ իր դիրքին յարմար լեզուն պատշաճ է որ դործածէ, եւ Պէրպէրեան էՖ. իր դիրքը ճանչցող մարդ է: Այսու հանդերձ, չեմ կարծեր որ իր յօդուածով վերջակէտը դնել առաջարկած ըլլայ դաւառացի այն գրիչներուն՝ որոնք քանի մը տարիներէ ի վեր դրական ամայի հրապարակին վրայ մարզանքներ կը կատարեն: Այդ դրական մարզանքներուն շարունակութիւնը արտօնելը իրօք պզտիկ վեհանձնութիւն չպիտի ըլլար, — բան մը որուն համար ինծի հետ շատեր պէտք է երախտապարտ ըլլան դրականութեան մեծահոշակ ու սիրելի վարպետներուն:

Դառնալով բուն խնդրին, Պէրպէրեան էՖ. ի յօդուածը սա ընդհանուր տպաւորութիւնը թողոք վրաս՝ թէ Մարդիկ եւ Իրէի հեղինակը «Վաղուան Գրականութեան» հարցը նկատողութեան առած է՝ առանց նախապէս անհրաժեշտ մտադրութեամբ հետեւած ըլլալու հոսանքը առաջ բերող գաւառացի դրողներու հրատարակութիւններուն: Ուրեմն յանցանքը մերը չէ, եթէ Պէրպէրեան էՖ. մեղի ըսել տալ ուզած ըլլայ այնպիսի *niaiserie*-ներ որոնք դուրս կը մնան մեր ծրագրէն:

Այս յօդուածով, մէկ կողմէն պիտի հերքեմ այն վերադրումները որոնց մեղադրանքը կը ծանրանայ «Վաղուան Գրականութեան» վարկածը պաշտպանողներուն վրայ, միւս կողմէն պիտի ջանամ ընդլայնել այն նկատողութիւնները՝ որոնց համեմատ Պէրպէրեան էՖ. ու մենք տարակարծիք ենք քանի մը սկզբունքի կէտերու վրայ: Ասոր համար՝ չպիտի կարգաւորեմ

քննելի կէտերը, այլ պիտի հետեւիմ քայլ առ քայլ Պէրպէրեան էֆ.ի յօդուածին :

\*\*\*

Պէրպէրեան էֆ. կ'ըսէ. «Եւ նախ եւ առաջ, ըստ մեզ, պէտք չէ որ խնդիր ըլլայ թէ Հայը ինքնայատուկ զրականութիւն մը ունենալու ընդունա՞կ է :»

Մենք բոլորովին հակառակ կերպով կը խորհինք, եւ ինծի կը թուի թէ որ եւ է ժողովորդի համար իսկապէս ինքնայատուկ զրականութեան մը հնարաւորութիւնը՝ ինքնայատուկ կեանքի մը թէութեամբ միայն կրնայ դոյութեան իրաւունք ստանալ : Ասիկա, եթէ չենք սխալիր, ա՛յնքան բացայայտ ընկերաբանական ճշմարտութիւն մըն է, որքան անիմաստ պիտի ըլլար՝ անոր դէմ փորձուած որ եւ է հերքումի ձեռնարկ : Չպիտի համարձակէինք նմանապէս ենթադրել՝ թէ այդ ճշմարտութիւնը նուազ քան առ մեզ ծանօթ է Թշուառութիւն եւ Գուքի բազմահմուտ հեղինակին :

Կ'ուզենք զիտնալ՝ թէ Հայը ընդունա՞կ է ինքնուրոյն զրականութեան, վասն զի կ'ուզենք ճշգեղ թէ ի՞նչ սահմանի եւ միջավայրի մէջ ունի անիկա աւելի՛ ինքնուրոյն անհատականութիւն :

Արդ, եթէ կը ներէ որ ըսենք, Պէրպէրեան էֆ. խորապէս կը սխալի մերժելով կարեւորութիւնը ապացուցման՝ թէ Հայը ինքնայատուկ զրականութիւն մը ունենալու ընդունա՞կ է :

Այս հաստատարանութիւնը ընդունելէ յետոյ էր որ մենք եզրակացուցած ենք ի նպաստ գաւառներու ուր մեր ցեղը աւելի՛ ինքնուրոյն կեանքով մը ապրած է ու կ'ապրի քան Պոլիս կամ ո եւ է գաղթավայրի մէջ : Պոլիսը հայ մտքին կեդրոն կրնայ ըլլալ, բայց երբեք՝ հարազատ ներկայացուցիչը անոր նկարագիրներու առանձնախառնութիւններուն : Պոլիս՝ կեդրոնն է այ-

լասեռ բարքերու որոնք իրենց կնիքը կը դրոշմեն ան-  
խուսափելի կերպով բոլոր այն դուրսէն եկած տարրե-  
րուն վրայ՝ որոնք իրենց ազդեցութեան սահմանին մէջ  
կ'իյնան: Պոլսեցի Հայը մեծապէս կը տարբերի դաւա-  
ւացի Հայէն: Պոլսական միջավայրին մէջ՝ հայ տար-  
րը աշխարհաքաղաքացի ընկերութեան մը ազդեցու-  
թիւնը կրած է: Միեւնոյն բանը չէ, սակայն, հարաւի  
Պրանսացիի մը համար Բարիզեան միջավայրին մէջ:  
Շատ խելացի, շատ հմուտ ըլլալու հարկ չկայ՝ այս  
ճշմարտութիւնը ըմբռնելու համար, որքան ալ անոնք  
euphémisme-ով ըսուած ըլլան:

Պէրպէրեան էֆ. կը կարծէ թէ, քաղաքակրթու-  
թեան ազդեցութիւնը շարունակուելով տարածուելի դա-  
ւաւորներուն վրայ, այս վերջիններուն ալ հայ տարրը  
Պոլսականին հետ անխուսափելի հանդիսութիւններ պի-  
տի պարզէ: Զարմանալ միայն կը մնայ նմանօրինակ  
բարեմտութեան մը վրայ: «Բանիբուն դիտողը» դիւ-  
րաւ պիտի կրնայ որոշել այն բոլոր նկարագրի տար-  
բերութիւնները՝ որոնք Պոլսահայը կը զանազանեն դա-  
ւաւոր Հայէն: Պէրպէրեան էֆ. չի թուիր լրջօրէն նկա-  
տած ըլլալ՝ թէ Պոլսահայուն կեանքը մէկ զեղծ վա-  
ռիանքն է միայն եւրոպական կեանքին: Տոհմային  
նկարագիրը մեծ խաթարումներ կրած է հոն, տեղի  
տալու համար օտար բարքերու մակընթացութեան ու  
Պոլսահայ դրականութիւնն ալ, մասամբ ընդօրինակու-  
թիւն Փրանսական ոսմանդիի դպրոցին արտադրութիւն-  
ներուն, արտայայտութիւնը եղած է պիտակ ու  
օտարացած կեանքին: Խնդիրը Զօհրապի մը, Տիկին  
Տիւսաբի մը, Պէշիկթաշլեանի մը տաղանդները վիճելի  
ներկայացնել չէ բնաւ: Բայց ասոնք, ինչպէ՞ս դիտած էր  
արդէն իմ հմուտ բարեկամս «Հասկաքաղ - Գիշերուկ»  
(Սուրհանդակի մէջ այս խնդրոյն նուերուած յօդուա-

ծով մը) միայն հայերէն գրող գրագէտներ են առաւելապէս, ինչպէս Եղնիկը իր ժամանակին մէջ: Պոլսահայ գրականութեան վրայ աւելի մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը՝ աւելի շեշտուած ձեւի ներքեւ երեւան պիտի բերէր թէ իսկապէս անիկա հեռու եղած է հայ կեանքին հանգամանքներուն արտայայտութիւնն ըլլալէ՝ գրականութեան ձեւին ներքեւ:

Պէրպէրեան էՖ. կը կարծէ թէ, առաջարկելով գաւառական գրականութիւնը՝ մենք կ'ուզենք վտարել մեր ծրագրէն մշակումը այն խնդիրներուն ու հարցերուն՝ որոնք առնչութիւն ունին ամբողջ մարդկութեան հետ: Պէրպէրեան էՖ. կը կարծէ թէ՝ տոհմային գրականութիւնը կը սահմանափակենք՝ հին աւանդութիւնները և բարքերը միայն ներկայացնելու շրջանակին մէջ: Ապահովաբար սխալ կանխորոշութիւններ միայն կրնան իր միտքը առաջնորդած ըլլալ այդ կասկածն ունենալու, քանի որ այդպիսի բան մը ըսած չենք երբեք:

Գրականութեան մը ձգտումն է որ զինքը կ'ընէ համադրային կամ ոչ: Հեղինակին մասնաւոր մտադրութիւններուն մէջ պէտք է փնտռել մարդկայնութեան միտումը, որ ուղղակի առնչութիւն չունի իր գործին տոհմայնութեան հետ: Այսպէս է որ Թշուառութիւն եւ Գուքը, Մայրան եւն., մշակած են ընկերական ու իմաստասիրական հարցեր, առանց ունենալու տոհմայնութեան նշոյլը, մինչդեռ, Թոլսթոյ, Տոսթոյիէվսքի, Կոկոլ՝ Ռուս կը մնան, Զօլա՝ Ֆրանսացի, Իպսէն՝ Նորվեգիացի, Սթրինտպէրկ՝ Տանրմարքացի, հակառակ իրենց երկերուն internationaliste եւ ընկերական լայն ձգտումին: Ու չենք տարակուսիր թէ Պէրպէրեան էՖ. այս նրբութիւնները չհասկցող մարդ ըլլայ: Այս հեղինակներուն տոհմայնութեան գաղտնիքը հո՛ն է որ,

իրենց ընդհանուր գաղափարները իրենց մտքին իմաստասիրական ձգտումը՝ մշակման տարրերը քաղած են նոյն իսկ տոհմային կեանքէն: Բազմաթիւ առիթներով կրկնած ենք արդէն՝ թէ առանց բարոյական մտադրութեան ու ձգտումի, ամենէ՛ն հաճոյալի գրականութիւնը՝ իսկական նշանակութիւն չի կրնար ունենալ: Ուրիմն Պէրպէրեան էֆ. յանիրաւի կ'ամբաստանէ զմեզ, եւ կ'ապացուցանէ թէ իր նկատելի կէտերը գրած է առանց նկատողութեան առած ըլլալու ինչ որ գրած ենք ժամանակին բազմաթիւ յօդուածներու մէջ:

Բ.

Պէրպէրեան էֆ. արհամարհանքով մը կը յիշէ նաեւ դաւառարարբառներու հարցը: Հակառակը չենք պնդեր թէ Պոլսահայ դաւառարարբառը, որ արդէն այնքան հանդիտութիւն ունի բազմաթիւ ներքին դաւառներու բարբառներուն հետ, ըլլայ այսօր արեւմտեան Հայերուն գրական լեզուն:

Պոլսահայ լեզուին քերականութիւնն ու ձայնարանութիւնն է որ թերեւս պիտի ամբաստնուի տակաւին իր գոյութեան իրաւունքներուն մէջ: Բայց իր բառարանն ու իր գրականութիւնը՝ մեծապէս պիտի ճոխանան զուտ եւ հարազատ դաւառական բարդ կամ ամանց բառերով, որոնց հոմանիշները գոյութիւն չունին, հոմանիշներով՝ որոնք լեզուին երանգները պիտի ճոխացնեն, ոճերով ու յատկաբանութիւններով՝ որոնք լեզուին ջիղերը պիտի զօրացնեն, մկանները ուռեցնեն եւ բնորոշ յատկութիւնները շեշտեն: Պէրպէրեան էֆ. կրնա՞յ պնդել թէ գրաբարը լիակատար բաւարարութիւն տալու ընդունակ է օրուան լեզուին արդի պէտքերուն:

Մենք բնաւ չենք զարմանար որ Պէրպէրեան էՖ. այսպէս խորհի: Ինքը բնաշրջական միտք մը չէ: Ժամանակին ալ կուուած է գոյն աշխարհաբարին դէմ՝ զոր այսօր այնքա՛ն դեղեցիկ կը գրէ, թերեւս առանց զգալու:

Պէրպէրեան էՖ. կատարեալ խնդրէ շեղումներ, digression-ներ կ'ընէ, «արուեստ»ի ու գրականութեան հարցին վրայ նկատողութիւններ ըրած պահուն:

Վաղուան գրականութեան ներկայացուցիչները, բնա՛ւ շփոթած չունին արուեստին գաղափարը՝ ընդհանուր գրականութեան գաղափարին հետ: Անոնք՝ վաղուան գրականութեան տոհմայնութիւնը կը ջատագովեն՝ արուեստի (բանաստեղծութիւն, վէպ, թատերգութիւն) տեսակէտէն, Պէրպէրեան էՖ. աւելորդ գիջողութիւն մը ըրած կ'ըլլայ ըսելով. «Ուրեմն դէթ գրականութեան այս ձեւերուն (ինչպէս, մասնագիտական ուսումներ, գիտութիւններ, իմաստասիրութիւն, լեզուաբանութիւն, բանասիրութիւն, ընկերաբանութիւն, մանկավարժութիւն, եւլն. եւլն.) նկատմամբ անտեղի է անձեռնհասութեան խնդիր յարուցանել Պոլսեցի գրագէտներու մասին:»

Ի՞նչ հաճոյք կրնայ կենալ այս տեսակ տխմարութիւն մը վաղուան գրականութեան պաշտպաններուն վերադրուելուն մէջ: Ո՛հ, Պոլսեցիները կրնան չզգածուիլ այդ մասին: Մենք երբեք մտքերնուս չպիտի անցընենք թէ, օրինակի համար, Պէրպէրեան էՖ.ի մանկավարժի եւ ուսուցչի արժանիքը կրնայ նուազիլ, վասն զի ինք Պոլսեցի է:

«Թո՛ղ յաւէտ արուեստագիտական նկարագիր ունեցող գրական սեուերուն համար նիւթին եւ առարկային խորապէս տոհմայնութեան կամ մանաւանդ գաւառա-

կանութեան պահանջումը բացարձակապէս օրինաւոր է:» Մենք կը պատասխանենք. դրագէտի մը տաղանդը, զոր մանաւանդ կը յարգենք իր ուրոյն յատկանիշներուն ու հակումներուն համեմատ, որ եւ է գրական դրութեան մը (նովանքիզմ, ցարիւռալիզմ, եւլն.) կանոններուն հպատակեցնելու միտքէն հեռու ենք: Ընդհանրապէս խօսելով, եւ ո՛չ թէ բացարձակապէս, վաղուան գրականութեան ամբողջութեան համար, արուեստի գործերուն նիւթին տոհմայնութիւնը կը ջատագովենք, աւանց հիմնական մերժումի մը մէջ ուրանալու իսկապիպ տաղանդներուն աղուոր անհեթեթութիւնները՝ որ գոյութիւն կրնան ունենալ ամէն տոհմի գրականութեան մէջ: Չենք ալ ժխտեր արժէքը Օռիանքալներուն, Նաչէգներուն, Սալամպօին, Մատամ Գոնիգանքէմին, Մառիաթ տը Լօքիին, եւ բոլոր տարաշխարհիկ վէպերուն՝ որոնք Քրանսական ընդարձակածաւալ գրականութեան մէջ պզտիկ սիրուն ածու մը կը ծաղկեցնեն միայն: Ասոր համար է որ կ'ընդունինք թէ Պոլսահայ գրականութիւն մը կրնայ գոյութիւն ունենալ իբրեւ մաս ամբողջին: Բայց ճշմարիտ գրականութեան մը ընդհանուր յատկանիշը կը կայանայ էապէս իր ցեղայնութեան մէջ: Հնդիկ գրականութիւնը՝ հնդիկ հոգիին ճառագայթումն է, իր մասնաւոր խառնուածքին համեմատ. հեթանոս Յունաստանը՝ իր քաղաքակրթութեան մեծ մասը կը խտացնէ իր մատենագրութեան մէջ՝ իր ինքնուրոյն նկարագրին համեմատ: Միեւնոյն բանը կրնան ըսել բոլոր ազգերու գրականութիւններուն համար: Ու որքա՛ն անձուկ, որքա՛ն ալ սահմանափակ ու համեստ՝ հայ գրականութիւն մըն ալ հայ նափակ ու համեստ՝ հայ գրականութիւններուն արտայայտութեամբը կրնայ գոյութիւն ունենալ: Այս ըմբռնումին

համեմատ, ի՞նչպէս ընդունիլ թէ Պոլսահայ գրականութիւնը կրցած է ըլլալ իսկապէս տոհմային գրականութիւն: Եթէ նոյն իսկ Պոլսահայ գրականութիւնը ուղղակի արւսայայտութիւնը եղած ըլլար Պոլսահայ կեանքին, մեծ բան էր նորէն: Պարոնեա՛ն մը միայն ունինք, որ կրցած է իսկատիպ հայ գրականութիւն մը ընել, եւ Ռուսահայերուն հոտառութիւնը այդ բանը կրցած է մեր ուշադրութեան յանձնել:

Եթէ միջավայրին ու վայրկեանին քննութիւնը կը բացատրէ արուեստի զործերուն նկարագիրը, եւ եթէ կրնանք վերջապէս սահմանել այն պայմանները՝ որոնք անհրաժեշտ կը դառնան տոհմային գրականութեան մը կարելիութեան, ապա ուրեմն չմերժենք դաւառական ըստած գրականութեան կարեւորութիւնը: Իրաւ, դաւառը չտուաւ դեռ մեզի այն գրագէտը՝ որ տոհմային գրականութեան ճամբան պիտի հարթէր, բայց նկատելի է թէ, դաւառը մասամբ զուրկ զտնուած է մտաւորական զարգացման բոլոր պայմաններէն եւ միւս կողմէն ուղղակի ազդուած է Պոլսահայ մտքէն:

Խնդիրը ա՛յն է թէ, Պոլսեցիի ու դաւառացիի կռիւ մը չէ գոյութիւն ունեցողը, ինչպէս դիտած էր արդէն «Հասկաքաղ — Գիշերուկ»: Գրականութեան մէջ ինքնաճանաչման եւ ինքնամփոփման փորձ մըն է զոր կ'ուզենք ընել, խաթարում է ու օտար հակազդեցութենէ զերծ: Անոնք որ անխափ ու խոր գիտակցութիւնը ունին վաղուան գրականութեան կարեւորութեան, չպիտի սպասեն որ Պոլսեցիները նուիրագործեն զանի: Գաղափարը իքնին պիտի ընդունուի՝ ճշմարտութեան ուժին չնորհիւ՝ զոր իր մէջ կը պարունակէ: Մտածելու նոր եղանակ մըն է ասիկա՝ որ այսօր հազի՛ւ թէ կը ծընծնայ, բայց վաղը հոսանք պիտի կազմէ, ու անոնք որ այսօր կը յամառին ճշմարտութեան լոյսը ուրանալ,

հաւատացեալներու պիտի փոխուին առանց գիտնալու,  
ինչպէս աշխարհաբար գրել սկսան առանց ուզելու:

Շար. «Մասիս»

7 Ապրիլ 1901, քիւ 14

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Վաղուան Գրականութեան վրայ քննութիւն մը բանալու նպատակով ծանօթ Հարցարանը հրատարակուած ատեն խոստացած էի ընդհանուր եզրակացութիւն մը հանել ստացուած պատասխաններուն ամբողջութենէն:

Այսօր՝ այդ եզրակացութիւնը իր բնական ճամբէն շեղած է: Պատճառն այն է որ ձեռնարկը դրեթէ վրիպանք մը եղաւ ու փոխանակ Վաղուան Գրականութեան վրայ քննութիւն մը կատարուելու, վիճաբանութիւն մը միայն տեղի ունեցաւ:

Գիտէ՞ք ինչու:

Անոր համար որ, մեր ամենէն մեծահամբաւ գրադէտներն իսկ տակաւին չեն հասկցած թէ ի՞նչ է լրագրական enquete մը, քննութիւն մը, եւ ի՞նչ եղանակով կը պատասխանուի անոր:

Մեր բարքերը ինչպէս փորձը ցոյց տուաւ, այս տեսակ նրբութիւններու եւ պատշաճութիւններու վարժութիւնը չունին եղեր տակաւին: Անշուշտ ներելի չէ շատ զարմանալ: Բայց աղէկ կ'ըլլայ որ անգամ մը բացատրենք թէ ի՞նչ է այս տեսակ enquete մը եւ ինչպէս կ'ըմբռնուի ու ի գործ կը դրուի ան՝ եւրոպական թերթերու եւ հանդէսներու մէջ:

Օրուան նորութեան մը, իմաստասիրական, գրական, ընկերաբանական սուր ու շահեկան հարցի մը

մասին մասնաւորներու կամ հասարակութեան կարծիքը հաւաքելու եւ ընդհանուրին ուշադրութեան յանձնելու համար տեղի կ'ունենան ընդհանրապէս լրագրական enquêtesները: Ասոր համար քանի մը ձեւեր կրնան ի գործ դրուիլ: Հարցումը կա'մ մէկ անգամէն հրապարակ կը նետուի թերթին մէջ, ուղղուելով հասարակութեան, եւ ստացուած պատասխանները հրատարակելով, — ինչ որ տեսակ մը plébiscite է — եւ կամ, — եւ ասիկա գործածուած ձեւերուն լաւագոյնն է, — նախապէս կ'ուղղուի մասնաւոր նամակներով ծանօթ անձնաւորութիւններու, որոնք կը փութան իրենց կարծիքը եւ կամ պատասխանելու անկարողութեան չքմեղանքը դրաւորապէս յայտնել, անպատճառ, առանց զանցառութեան, — չթերանալու համար դէթ քաղաքավարական հարկի մը առջեւ:

Այս վերջին ձեւին մէջ, Հարցարանը կ'ունենայ ընդհանրապէս ինքնին բոլորովին չէզոք բնութիւն մը: Պարզապէս հարցական պարոյր մըն է ան, առանց կանխակալ թելադրութիւն մը ի գործ դնելու մտադրութեանը այն անձին մտքին վրայ՝ որուն կ'ուղղուի: Այս պայմանին մէջ, Հարցարանը հրատարակող Հանդէսը, անտարակոյս ունենալով հանդերձ իր մասնաւոր կարծիքն ու մտածումը, երբեք մտքէն չանցըներ որ իր ընդունելիք պատասխանները անպատճառ համակարծիք ըլլան իրենին հետ, ու, անխտիր կը հրատարակէ նըպաստաւոր կամ աննպաստ պատասխանները բոլոր անոնց՝ որոնց դիմած էր իրենց կարծիքը ունենալու հետաքրքրութեամբը: Ծզրակացութիւնը՝ զոր ինք կը հանէ, ոչ այլ ինչ է եւ կրնայ ըլլալ արդէն՝ բայց եթէ դասակարգութիւն մը եւ հակակշիռ մը յայտնուած կարծիքներուն բնութեան: Ամէն տեսակները կրնան գոյութիւն ունենալ հոն. կարծիքներ՝ որոնք իրարու կը

ժպտին, զիրար կը համբուրեն կամ իրարու կոնակ կը դարձնեն պարզապէս: Բայց պատասխանողներէն ո՛չ մէկը մտքէն կ'անցընէ հարցումին սահմաններէն դուրս ելլել, օրինակի համար ըսելու՝ թէ ինչո՞ւ ատանկ հարցում մը կ'ըլլայ իրեն, թէ՛ անտեղի է ան, կամ անոր հեղինակը անընդունակ յաւակնոտ է, եւլն: Վասն զի կ'ըմբռնէք թէ ի՞նչ ցաւալի անսխալկանկատութեան մը մեղադրանքը կրնայ հրաւիրել իր վրայ՝ այդ ընթացքը բռնող մէկը, ինքզինքը պարզապէս ծիծաղելի դուրսեան մը մատնելով:

Հարցումին տէրը կրնայ անտարակոյս իր եզրակացութեան մէջ ապրեցնել նաեւ իր անձնական հակումը եւ մտադրութիւնը: Բայց այս Հարցարանին սահմանէն դուրս միայն իրաւունք ունի քննադատելու կարծիքներ՝ որոնք կրնան աննպատ ըլլալ իր կանխամտածութիւններուն: Ճիշդ միեւնոյն իրաւունքով, Հարցարանին սահմանէն դուրս մնալու պայմանին մէջ միայն կրնան քննադատուիլ հարցումը հրապարակ հանողին անհատական կարծիքները:

Ահա՛ այս ձեւին ներքեւ տեղի կ'ունենան enquête ներքը եւրոպական հանդէսներուն կամ թերթերուն մէջ:

Մասիսի խմբագրութեան հետ համերաշխօրէն՝ մենք ալ գրեթէ այս ձեւին ներքեւ ուզեցինք քննութիւն մը բանալ Վաղուան Գրականութեան վրայ:

Ինչ որ սակայն տեղի ունեցաւ՝ ակնկալութիւններու հակառակն էր: Առաջին օրէն էսնաֆական նախանձոտութեան լեղին դուրս տուող պատուելիներու թէլ-լալներ ու ինքնագովութեան յաւակնոտ մունետիկներ դտնուեցան արդէն կարգ մը թերթերու մէջ: Եւ բոլոր այն սնափառութիւնը արհամարհող եւ համբաւամոլութեանէն փախչող պատուական գրագէտներէն, որոնք այնքա՛ն շուտով փութացած էին իրենց առաջին հրա-

տարակուսեան տպաւորութիւնը վերյուշել զգայուն ու գեղեցիկ շարադրութեան մը մէջ, ո՛չ ոք գտնուեցաւ որ հարցումին պատասխանէր, անոր իւրաքանչիւր հատուածանիշերու կարգին համեմատ: Երկու երեք հոգի միայն բարեհաճեցան պատասխանել, առանց սակայն հարցարանին պայմանները լիովին յարգելու փափկանկատութեան: Անոնց մէջ գտնուեցան նաեւ՝ որ դատափետեցին հարցարանին նկարագիրը, քննադատելով նոյն իսկ անոր ձեւն ու հեղինակը:

Անակնկալ մըն էր ասիկա, զոր կրեցինք, յաջորդող ընդհանուր լուսթեան մը մէջ, սպասելով մինչեւ այն օրը ուր Պոլսահայ գրականութեան ապագայ վաճառականներէն մին յարձակման նշանը կուտար վերին աստիճանի լուրջ հնարամտութեամբ մը: Եւ հա՛ս՝ անհամբեր սպասումի մը մէջ հատնողները ամէնքն ալ իրենց խորշերէն դուրս եկան խուռներամ: Երեսան եկածը՝ շփոթ ու խլացուցիչ աղմուկ մըն էր մանաւանդ, եւ գրական Փանթզիի ու գրական Ժամանցի բոլոր թեթեւամտութիւնները չինայուեցան հասարակութեան համբերատարութեան, նոյն իսկ իրենց քմահաճոյքին մէջ ինդրին լրջութիւնը արհամարհելու եւ ծաղրելու ողորմելիութեան մը ախտանիշերը ցոյց տալէ չզուշանալով: Յարձակումը, որ երկարատեւ եղաւ ու իր chef-ի signal-ին ամէն կերպով արժանի, կը շարունակուէր գեռ, առանց զիս կամ իմ գրչի կռուի եղբայրակիցներս անհանդիստ ընելու: Անիկա կրնայ գեռ շարունակուիլ, ուղղակի կամ անուղղակի, այս կամ այն ձեւին ներքեւ, որքան ատեն որ ուզէ: Անոր բանաւոր նշանակութիւնը իմ ջղայնութիւնս ցնցելու կամ գիւրազգածութիւնս վիրաւորելու չափ կշիռ չունի: Վասն զի պէտք չունիմ համոզելու թէ՛ մարդ իր չհասկցած եւ հետեւաբար չսիրած բանը մանաւանդ տրամադիր կ'ըլ-

լայ թեթեւամտօրէն, քէյՖի, Ֆանթէզիի, Ժամանցի  
համար ծաղրելու :

Միայն թէ չեմ կրնար չնշանակել այս իրողութիւն-  
ները իբրեւ բարացուցական վաւերանիշ մեր գրական  
կեանքին մէջ : Այս ձեռնարկին, որ ա՛յնքան աղմուկ  
հանեց, ու ա՛յնքան պարկէշտ գրագէտներու համբաւին  
սպառնալու հանգամանք մը ունեցաւ, բնական եզրա-  
կացութիւնը շատ օգտակար կրնայ ըլլալ մեզի համար :  
Նախ սորված կ'ըլլանք թէ գրական կեանքին մէջ ի՞նչ  
է հասկացողութեան ու նրբամտութեան աստիճանը՝  
մեր ամենէ՛ն համբաւաւոր կուռքերուն, եւ յետոյ, կ'ի-  
մանանք թէ տարբերութիւն մը կա՞յ մեր ու եւրոպական  
ազգերու գրական բարքերուն ու բարեկրթութեան աս-  
տիճանին միջեւ :

Ահա՛ այս է միայն վաղուան Գրականութեան հար-  
ցարանին եզրակացութիւնը, որուն ա՛յնքան անհամբեր  
ու շնչասպառ հետաքրքրութեամբ սպասողներ կան ե-  
զեր, — այն պատասխաններուն ու այն վիճաբանու-  
թեան համեմատ՝ զորս մամուլը հրապարակ հանեց :

Իսկ թէ, վաղուան Գրականութեան խնդիր մը՝  
անկախօրէն Մասիսի Հարցարանէն կրնայ գոյութիւն  
ունենալ ու վիճաբանուիլ՝ անհերքելի է անշուշտ :  
Վասն զի ոչ ոք, առանց տկարամտութեան, իրաւունք  
պիտի կրնար ունենալ աս ու ան արգիլել ջանալու՝ մեր  
գրականութեան յոռի ձգտումները քննադատելու եւ  
մտածման նորագոյն հորիզոններ ու գրական նորագոյն  
արչալոյսներ մատնանշելու տրամադրութեան մէջ :

Շաք . «Մասիս»

30 Յունիս 1901, Թիւ 26

## Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

(ԱՆՏԻՊ ԷՋԵՐ)

Աշխարհի մէջ ամէն ոք իր բարոյականը կը գործադրէ, անձնական մասնաւոր ճշմարտութեան մը համեմատ: Ի զո՛ւր մարդիկ կը հետապնդեն բացարձակը՝ ճշմարտութեան ու բարոյականին ուղղութեամբ: Իւրաքանչիւրին շահը, — բազմապիսի ու բազմերանգ շահեր կան — հիմը կը կազմէ իր ճշմարտութեան: Անոր վրայ կը կառուցուի իր բարոյականին դիւրարեկ այլ իրական պալատը: Անոր համար է որ դարերէ ի վեր բոլոր բարոյականներն ու բոլոր ճշմարտութիւններն իրարու դէմ կը ծառանան եւ աշխարհը տակնուվրայ է միշտ: Պայքարին եղրակացութիւնը կը ճշդէ բարոյականութեանց եւ ճշմարտութեանց յարաբերական եւ պարազայական արժէքը: Յաղթականները լաւագոյնները կ'ըլլան: Պարտուածները՝ անշահասէր: Ճշմարտագոյն ճշմարտութիւններն անոնք կը մնան՝ որք ամենէն աւելի ուժ ունին եւ կեանքի կարողութիւնն ամենէն աւելի կանգուն բռնելու կը նպաստեն: Բանապաշտութեան (rationalisme) սառուցեալ մթնոլորտին մէջ բիւրեղացած բարոյականը եւ կենդանի

մարդուն կիրքերու մէջ եռուզեռ եկող բարոյականը կարելի չէ համաձայնեցնել իրարու հետ: Եւ ի՞նչ հեղ- նութիւն, ասիկա մեծ մասով անբարոյականութեան բարոյականն է:

|||  
\*

Արդարութիւն, ճշմարտութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն. ասոնք վերացական գեղեցիկ տեսիլներ են: Ուրեմն, ըստ սահմանումին, մտատիպ կաղապար- ներ, պղատոնական կատարեալ նախաձեւեր, որք հոն, այդ ցրտօրէն մեծվայելուչ ու անմերձեմալի սահման- ներուն մէջ միայն բացարձակ իմաստ մը ունին: Իջնելով ապրող եւ հրատապ մարդկային իրականութեան մէջ, ուր ամէն բան կը շարժի, ուր ամէն բան անհաստատ գետնի մը վրայ կ'ալեծդիւի, կը ձեւաղեղծուին եւ հազար կտոր կ'ըլլան անոնք: Այլ եւս արդարութիւն մը, ճշ- մարտութիւն մը, եղբայրութիւն մը, հաւասարութիւն մը չկան: Կան միայն արդարութիւններ, եղբայրու- թիւններ եւ հաւասարութիւններ, որք զիրար կ'անիրա-ւեն, զիրար կը հերքեն, զիրար կը մատնեն, զիրար կը հալածեն. եւ ասիկա է մարդկային կատակերգութիւնը:

Կեանքը յաղթանակներու յաջորդութիւն մըն է, եւ ուժը՝ բացարձակ պայման յաղթութեան: Հին հեղ- նական ճշմարտութիւն՝ ուժին է իրաւունքը, արդա-րութիւնը: Մարդիկ կը կարծեն թէ ճշմարտութեան վրայ կը թնամ արդարութիւն մը կայ, որ օր մը կը յաղ- թէ անվրէպ՝ ի հեճուկս արդարութեանց եւ անիրաւու- թեանց առժամեայ յաղթանակին: Միամտութիւն եւ պատրա՛նք: Իրապէս այդ չէ պատահածը: Ուժեր կան, որք իրարու կը բաղխին, եւ յաղթողը ամէն անգամ կը հռչակէ ու կը պարտադրէ իր ճշմարտութիւնը: Կեան-քը գեղեցիկ պչրուհին է, որ ամենէն աւելի ուժովին,

որով եւ ամենէն աւելի բեղմնաւորին անձնատուր կ'ըլլայ:

\*

Միշտ անբացատրելի եւ խռովիչ տարտամութիւն մը կայ բոլոր այն մեծ նպատակներուն մէջ՝ առ որ կ'ընթանայ մարդկութիւնը, չէ թէ բանալարական ցըրտութեամբ մը, չէ թէ իր եզրակացութիւններուն մէջ նախատեսուած առաջադրութեամբ մը, այլ բնազդներով եւ զգացումներով հրդեհուած թափով մը:

\*

Մարդու մը մահը տիեզերքի մը փլուզումն է:

\*

Իմաստասէրին համար, որ առօրեայ կեանքին եւ լրափիչ մանրամասնութեանց հոգէն ազատագրուած կը զգայ ինքզինք, որ, Նիշէի համեմատ, կըցած է թերեւս իր մէջ ստեղծել «անժամանակակից» հոգի մը, անցեալ կամ ապագայ ժամանակներու մէջ ապրող, որ կամաւոր թէ անգիտակից պատրանքներու մէջ, ինքնախաբէութիւններու մէջ՝ շահեր, նկատողութիւններ, յաջողութիւններ փնտռելու ստրկութենէն կը ձգտի ձերբազատել իր ազատատենչ հոգին.— որքա՛ն տխուր, որքա՛ն ճղճիմ է այս մարդկութիւնը, որ նենդօրէն զիրար կը բզկտէ, զիրար կ'ուտէ, դարչելիօրէն նուիրական եւ ոճրապարտօրէն անըմբռնելի ցնորքներու անունով, որք կը կոչուին՝ կրօնք, ազդութիւն, հայրենիք: Իմացական ու բարոյական բարձրագոյն գիտակցութեան հասած (անկարելի) մարդկութեան մը համար, այդ խաբէութեանց կամ այդ բառերուն ոչ մին գոյութիւն պիտի կընար ունենալ, իրենց արդի անձկամիտ ու խտրապաշտ ձեւին ներքեւ: Իմացական ձերբազատութեան բարձրագոյն աստիճանին հասած մարդը՝ ոչ մէկ խնդիր ու ոչ մէկ խտիր կը տեսնէ անհատներու եւ ցեղերու միջեւ՝

եթէ ոչ իրենց բնական անհաւասարութիւններու ներելի խնդիրը՝ որ բանապաշտօրէն թերի տիեզերքի անյադ-  
թելի բարոյականը կամ անբարոյականութիւնն է :

Բոլոր մեծ իմացականութիւններն ու բոլոր մեծ հոգիները, որք հայեցողական եւ իմաստասիրական կացութեան մը կարելիութիւնը գտած են իրենց մէջ, զգալի չափով զերծ մնացած են խտրական ցնորքներէ : Բայց մարդկութիւնը իմացականութեան պատրաստած օրէնքները շատ չի ճանչնար : Մարդկութիւնը կ'ապրի՝ դիմաբար զսպանակող զգածական տարրերու փոթորկալի ալեկոծութեան մէջ : Վասն զի վերջին պահուն՝ իմացականութիւնը կը մեռցնէ, մինչ զգացումը կ'ապրեցնէ :

\*

Մարդկութեան մէջ խտրական անիրաւութիւնը կը տիրապետէ, կարողութիւններու եւ ընդունակութիւններու ամենամեծ ու անյադթելի անհաւասարութեան մը իրականութեամբ : Ես հաւատք չունիմ այն գեղեցիկ ու հմայիչ իտէալին վրայ թէ՛ օր մը աշխարհի բովանդակ մարդկութիւնը, բնաշրջութենէ բնաշրջութիւն ձգուած՝ պիտի հասնի՝ քաղաքակրթական հաւասարիչ ու հարթարար այնպիսի մակարդակի մը, ուր բոլոր դիտակցութիւնները պիտի մղուին միեւնոյն բարոյական ու մտաւորական վեհագոյն սկզբունքներէն՝ հիմնելու համար աշխարհի վրայ այնքա՛ն փափագուած ու երագուած արդարութեան գերագոյն յաղթանակը, — երկրաւոր դրախտը : Ասիկա անհաւատալի է հակառակ անոր որ տեսակէտով մը այնքա՛ն գեղեցիկ է, հակառակ անոր որ մերթ լաւագոյն մարդոց լաւագոյն բաղձանքներէն մին է : Ասիկա անհաւատալի է՝ բնութեան խտրապաշտ անարդարութեան իսկ հետեւանքով :

Շատ դեղեցիկ, շատ բարեմաղթելի, բանաւոր չէ վեր-  
ջապէս մտաբերել մարդկութիւն մը՝ հաւասար աստի-  
ճանով բարձրացած բարոյական եւ իմացական դիտակ-  
ցութեան միեւնոյն կէտին. բնութիւնը այնքան անհա-  
ւասար բաժանում մը ըրած է թշուառ մարդկութեան  
մէջ՝ Փիղիքական հիմերու, բարոյական բնագոյներու,  
մղումներու եւ իմացական ընդունակութիւններու: Երբ  
մանաւանդ՝ բարոյական ու մտաւորական բնական ազ-  
նուապետութիւն մը կայ ու կը մնայ, մինչդեռ մարդ-  
կութեան ստուարադոյն հատուածը, ողբալիօրէն ան-  
ժառանգ, եւ անբաւական պիտի մնայ, հակառակ բո-  
լոր կարելի մանկավարժութիւններու, հակառակ բո-  
լոր ընկերային դեղաբանութեան:

\*

Քաղաքական օգտապաշտութիւնը դիւանագիտու-  
թեան օձադալար ճամբով յարաժամ կը ձգտի իրարմէ  
հեռացնելու եւ իրարու թշնամացնելու միայն ցեղերն  
ու ազգութիւնները: Մտաւորական օգտապաշտութիւ-  
նը, գրականութեան ու գեղարուեստներու ճամբով,  
զանոնք կը մերձեցնէ ու կը բարեկամացնէ իրարու:

Բարոյական ու կենցաղագիտական խրատները՝  
մողական յատկութիւններով յուռութներ չեն: Անոնք  
լուազոյններով կարելի չէ հրաշագործել ապրելու եր-  
ջանկութիւնը: Բոլոր յուռութքները ներքնուրոյն  
(intrinsèque) արժէքէ զուրկ են: Ամէն անգամ զիրենք  
կրօղին արժէքը միայն ունին անոնք: Եւ, այս տեսակէ-  
տով, ի՞նչ անհաստատ զանազանութիւն արժէքներու:  
Գտած ըլլալ երջանկութեան ճամբան՝ անշուշտ տեսակ  
մը պարծանք է մարդկային իմացականութեան համար:  
Գտած ըլլալ զայն՝ տեսականօրէն հիմնած ըլլալ կը

նշանակէ կեանքի գիտութիւնը: Բայց կարծել թէ կեանքի գիտութիւնը հիմնած ըլլալ կը նշանակէ նաեւ լուծած ըլլալ մեծ խնդիրը, այսինքն գտած ըլլալ երջանկութեան՝ դեղահատը թերեւս միայն խոստովանիլ է բարենպատակ մտքի մը սրտառուչ պարզութիւնը: Ապրելու գիտութիւն մը կրնայ ըլլալ, ինչպէս կայ գրելու գիտութիւն մը: Բայց մարդիկ կ'ապրին ճիշդ ու ճիշդ այնպէս՝ ինչպէս կը գրեն — այսինքն ոչ թէ ինչպէս կը խորհին կամ կ'երազեն, այլ՝ ինչպէս կրնան: Ապրելու արուեստ մը կայ ճշգիւ այնպէս կայ գրելու արուեստ մը, եւ մենք կեանքը կ'արժեցնենք այնքա՛ն որքան կ'արժէ մեր ապրելու բնատուր հանճարը, résultante մեր ընդունակութիւններուն:

\*

«Երջանկութիւն ու յաջողութիւն ո՛չ թէ պարագաներէն՝ այլ մեզմէ կախում ունին» կը վճռեն առհասարակ երջանիկ ու յաջողած մարդիկը: Միեւնոյն բանը բախտին կը վերագրեն ուրիշներ: Մինչեւ մարդը շատ ճիշդ է: Լա՛ւ, մարդն ո՞վ է, բացարձակ մեկնակէ՞տ մը, առաջին պատճառներու աղբիւր մը, թէ ողորմելի տեսակէն արարած մը: Ուրեմն որ եւ է կախում չունի՞ անիկա: Յետոյ բոլոր մարդիկ միեւնո՞յն աստիճանով եւ միեւնո՞յն եղանակով կախումներ ունին: Յետոյ նաեւ, մարդիկ տէ՞րն են իրենցմէ բղխող ներքին պատճառներուն, եւ նոյն իսկ զիջողաբար ընդունելով պահ մը ազատ կամեցողութեան վարկածը, մարդիկ հաւասար չափով կարո՞ղ են տէր ըլլալ իրենց նկարագիրը շինող բարոյական եւ ֆիզիքական հանգամանքներուն:

Աւելի իրական կը թուի թէ, աւա՛ղ, մարդիկ են՝ ինչ որ կը ծնին, աւելի կամ նուազ չափով ընդունակ, աւելի կամ նուազ չափով օժտուած եւ բոլորովին ան-

Համանման՝ քանակականօրէն եւ որակականօրէն, իրենց կազմին, իրենց խառնուածքին, իրենց իմացականութեան, իրենց ամբողջութեան տեսակէտով: Մանկավարժական կամ մարդավարժական դեղադիրները հիանալի են, բայց հրաշք չեն կրնար գործել: Առ առաւելն՝ եղանակաւորումներ — եւ ո՛չ թէ հիմնական փոփոխումներ — կը բերեն անոնք մարդուն մէջ:

Մեր իմացական ընդունակութիւններուն Համեմատ, ամենէն այլազան ու ամենէն հակընդդէմ գաղափարները կրնանք ունենալ, օրինակի համար՝ լաւաւ դոյն գաղափարներ կեանքի իմաստուն գործածութեան տեսակէտով: Կրնանք որդեգրել զանոնք՝ ճիշդ ինչպէս կրնանք որդեգրել գրագիտութեան կամ քերականութեան օրէնքները: Բայց առաջինները ա՛յնքան միայն նշանակութիւն ունին կեանքի բարւոք գործածութեան մէջ որքան վերջինները գրականութեան մէջ:

Կ'ապրինք այնպէս՝ ինչպէս կը տրամադրէ մեր խառնուածքը, մեր *sensibilité* ն: Գլխարկ մը փոխելու դիւրութեամբ կրնանք փոխել մեր գաղափարները, բայց մէկ եղանակով միայն կ'զգանք — այսինքն այնպէս՝ ինչպէս կրնանք:

\*

Չուտ հաւատքը հոգեկան վիճակ մըն է, եւ ըստ ինքեան բացարձակ ու անվիճելի: Հաւատքը մեծ ուժ մըն է անշուշտ, հաւատքը կը խանդավառէ, հաւատքը կրնայ հրաշքներ գործել անշուշտ: Բայց հաւատքը ճանաչողութեան մեթոտ մը չէ, կամ նոյն իսկ օժանդակութիւն մը՝ բերուած ի սպաս գիտութեան:

\*

Կը թուի թէ մարդիկ պէտք չունին անհրաժեշտա-

պէս՝ որ եւ է փայլուն ջնարակով — օրինակի համար կրօնական դաստիարակութեան օրհնեալ ջնարակով — թրծուելու, ամուր անօթներ ըլլալու համար: Ըստ իս՝ ջնարակը միշտ երկրորդական է: Խնդիրը կաւին վրայ է: Կաւը պէտք է դուտ, մաքուր ու ազնիւ ըլլայ: Ապա թէ ոչ՝ ամենէն փայլուն ջնարակը արգելք չի կրնար ըլլալ որ անօթը հնոցին փորձութեան մէջ չճաթի:

\*

Սխալ է թերեւս իմաստասիրական վարդապետութեան մը բարոյական եզրակացութիւններուն՝ դործնական եւ վաւերական նկարագիր մը ճանչնալ բարքերու սահմանին մէջ: Իմաստասիրութիւնը ճանաչողութեան միջոց մըն է միայն: Գաղափարը եւ դիտութիւնը ուղղակի չեն ազդեր մեր բարոյական նկարագրին վրայ՝ որ մեր միտումներուն դործն է մանաւանդ: Վասն զի ահա՛ ամենէն ազնիւ, ամենէն վեհ բարոյական վարդապետութիւն մը. քրիստոնէութիւնը. — եւ ամէնքս ալ քրիստոնեաներ չե՞նք միթէ — որուն անունով տխուր էջեր կը մնան պատմութեան մէջ, որուն հովանաւորութեան ներքեւ՝ մարդկութիւնը ցեխի ու թշուառութեան մէջ կը լողայ այսօր: Խնդիրն այն է թէ բարոյական արդարացումի մը կը կարօտինք՝ մեր բոլոր արարքներուն համար: Ելքի ճամբայ մը անհրաժեշտ է մեզի: Եւ, պատշաճութեան համեմատ կամ ըստ բախտի՝ կը գտնենք փախուստի ճամբան — արդարացումը՝ ձեռքի տակ գտնուած փիլիսոփայական կամ բարոյական դրութեան մէջ:

\*

Դասական մշակումը՝ խստաճաշակ, բծախնդիր մաքրասիրութեամբ հարուստ կահաւորման մը նշանակն է: Ասիկա խիստ լաւ է, երբ միանգամայն հմտական

է ու գրական: Եւ եթէ վարժապետական կամ պատ-  
ուելիական մտքերու մէջ — միջնավայրի ինդիւր —  
այնքան քիչ գրական է ընդհանրապէս որքան միմիայն  
անհանդուրժելիօրէն հմտական, բայց, դասական մշա-  
կումը, օտտեալ արուեստագէտ խառնուածքի մը մէջ  
կոկ եւ հատընտիր ճաշակի մը լրումն է: Դասական  
ճաշակը՝ ի սպաս արդիական ոգիի մը ընդունակ է յոյժ  
դեղեցիկ արդիւնքներ տալու: Դասականութիւնը, ա-  
ւանդասիրութիւնը, կամ մաքրասիրութիւնը, լեզուի  
մէջ մանաւանդ, երբեք չեն մերժեր զարտուղի առանձ-  
նախառնութեան մը կարելիութիւնը ոճի ու մտքի իս-  
կատպութեան մը:

\*

Գրականութեան մէջ ի՞նչ է լրագրականութեան  
նկարագիրը — Տգէտ, թերատ ու ծանծաղ ամենագի-  
տութիւն մը. աւելի կամ նուազ սահուն ու անապարտ  
ձեւի մը ներքեւ՝ մուրացածոյ ե՛ւ ծաղկաքաղ գաղա-  
փարներ կարկտելու ճարտարութեամբ: Անտարակոյս  
անտանելի կը դոնենք գրող մը՝ երբ կը ջանայ մեղի իր  
տաղտկալի հմտութեան բեռը հարկադիր ընել, նենդա-  
ժէտօրէն՝ մեր բան մը չգիտնալը մեր երեսին տալու  
ամբարտաւան եղանակով մը: Բայց կը սիրենք հմուտ  
մտքի մը հետ մտերմանալ, երբ հմտութիւնը կանխա-  
մտածութեան մը արդիւնքը չէ, այլ ինքնին կուգայ,  
բնական եղանակով, ու կը գայրանանք այն գրողներուն  
դէմ՝ որ ոչինչով կը սոնքան. այնքա՛ն աղքատ են՝  
ու մեծահարուստ կը ձեւանան, կամ նոյն իսկ կը լրբա-  
նան՝ իրենց տգիտութիւններուն անուամբ:

\*

Ինկած բարքերը բարձրացնելու նպատակով՝ բա-

րոյական շիճադարմանումի դրութեան մը վրայ խորհողներ կան :

Շիճուկը, այո՛, հրաշքներ կը գործէ, քանի որ աչքի առջեւ ունինք Բասթէօւը, Ռուն, Մէչնիքօֆը : Բայց Պէհրինկը, բայց Քո՞խը : Շիճադարմանումը՝ իբր մեթոս՝ անստգիւտ է : Միայն թէ շիճուկ կայ՝ շիճուկ ալ կայ : Իմ մասին, ես չեմ հաւատար սեռային անպարկեշտութեան կամ հեշտական բնազդներու դէմ նախազգուշական շիճուկի մը : Այս ախտերը նմանաբուժօրէն չեն դարմանուիր : Այդ յուռութիւն վատթար ազդեցութիւններուն աւելի կը հաւատամ . — վասնզի՛ այնքան դիւրագրգիռ ու բռնաւոր են մարդկային մեծ բնազդները :

\*

Անբարոյական դրականութիւնն այն չէ ապահովաբար որ, պատահաբար, անուղղակի կերպով սեռային բնազդներն ալ հրահրելու նկարագիր մը ունի : Իրաւամբ անբարոյական դրականութիւնն այն է որ կը միտի կանխամտօրէն չարաշահութիւն ի գործ դնելու յուրի եւ ախտավարակ բնազդներու վրայ : Մեծապէս անբարոյական է կեղծպարիչտ ու շողոմարար այն դրականութիւնը՝ որ իր անխոստովանելի ծածկամտութիւնները դիտէ պարտկել, այնքան խաբեպատիր դրսերելոյթի մը ներքեւ :

Արուեստի գործի մը բարոյական ազդեցութիւնները սերտօրէն կախուած են ազդուողին ներքին բարոյական տրամադրութիւններէն ու հակումներէն : Թոյնդաշոյնական վէպի մը մէջ բացատրուած դաւադրական հնարագիտութիւն մը կարող է ճարտարամիտ չարագործ մը հրահանգել իր մտադրութիւններուն մէջ, իսկ ազնիւ հոգի մը՝ նողկանքով համակել : Գեղեցիկ մեր-

կութիւն մը կրնայ զինքը նկատող աչքին, տրամադրու-  
թիւններուն, հասկացողութեան աստիճանին համե-  
մատ, գիշական հակամիտութիւններ զարթուցանել կամ  
զմայլանքի եւ հեշտութեան բեղուն արբեցութիւն մը  
պարգեւել:

\*

Յանդգնիլ մինչեւ վերջը: Ահա իմացական առաքի-  
նութիւն մը՝ որուն առջեւ կը դողան ամենէն խիզախ  
միտքերը: Ամէն անգամ՝ կէս ճամբան կանգ կ'առնենք:  
Վասն զի քայլ մը եւս՝ եւ ահա անդունդներու մէջ  
հարկ կ'ըլլայ գլորիլ: Կ'արժէ՞ր, կամ թէ, կարելի՞ էր  
անդունդներու վրայ խիզախել, հասնելու համար ճշ-  
մարտութեան: Իմացական ճշմարտութիւնը կործա-  
նումներ ընդ քարշ կ'ածէ իր ետեւէն: Պէտք է ապրիլ,  
ատոր համար է որ կառչած կը մնանք մեր փորձառա-  
կան ու պատահական ճշմարտութիւններուն:

\*

Ընկերվարութիւն: Իր իտէալը ընդհանուր հաւա-  
սարում (nivellement) մըն է մարդկութեան՝ իր կեանքի  
այլազան վիճակներուն ու արտայայտումներուն մէջ:  
Այդ իտէալը այն ատեն միայն ազնիւ է, երբ կը ձգտի  
մարդկութիւնը բարձրացնելու իմացական, բարոյա-  
կան վերնագոյն աստիճանի մը մակերեւոյթին, եւ ս-  
սիկա ղեղեցիկ ցնորք մըն է, որ նշանակութիւն ունի  
մեր մարդկային յուսախարութիւններն ու զղուանքնե-  
րը մերթ փոփոխելու արժէքով միայն: Իսկ եթէ ընկեր-  
վարութիւնը կը հետապնդէ հարթհաւասարութեան դա-  
ղափար մը՝ որեւէ կարելի աստիճանի վրայ, կ'են-  
թադրեմ թէ անիկա անթուիչ վարդապետութիւն մըն է  
նախանձարեկ հողիներու՝ որ անկարող ըլլային հան-  
դուրժելու բնութեան կարգադրած պանծալի անհաւա-

սարութիւններուն՝ որոնց գինով միայն մարդկութիւնը տիեզերքին մէջ բան մը կ'արժէ այս աւազի հատիկին վրայ: Յետոյ արդէն՝ ասիկա ալ ցնորք մըն է, միշտ իրականին դպացումէն, եւ այս անգամ, աւա՛ղ, տղեղ ցնորք մը:

Ընկերվարութիւնը մէկ ձեւով միայն թերեւս ըմբռնելի է: Ըլլա՛ր անիկա տնտեսական ընդհանուր արդարութեան յորդահոս աղբիւր մը՝ որուն ջուրերէն երթային իրենց կեանքի իրաւունքը հաւասար առատաձեւութեամբ ստանալու բոլոր մարդկութիւնները, երբ մայրախնամ բնութեան բարիքները կարող են սնուցանելու արեւին տակ ճլտորուող ամէն էակ, ամէն իր: Բայց հոս ալ հակասութիւն եւ ընդդիմութիւն չկա՞յ արդեօք անհաւասարութեան բնական եւ յաղթական սկզբունքին եւ հաւասարապաշտութեան արուեստական, մտատեսական սկզբունքին միջեւ:

Չեմ հաւատար ընկերվարութեան, ինչպէս չեմ հաւատար քրիստոնէութեան, ինչպէս չեմ հաւատար հանդերձեալ կամ աստենի բոլոր արքայութիւններուն, ինչպէս չեմ կրնար հաւատալ ոչ մէկ բանի: Վասն զի կ'ողգէի մանաւանդ գիտնալ՝ քան հաւատալ: Եւ յետոյ դպածողական (affectif) առաքինութիւն մըն է, զոր ունենալու համար փափաքիլը բաւական չէ, պէտք է հետը բերած ըլլալ:

\*

Սկզբունքները, տեսաբանութիւնները, բացարձակ արժէք ունին միայն իրենց գաղափարական ձեւին ներքեւ: Անմիջապէս որ տրուած անհատականութեան մը ջղային դրութեան մէջ կը տեղաւորուին իբր գործ երեւան գալու համար, շատ բան կը կորսնցնեն իրենց գուտ գաղափարախօսական արժէքէն: Այնուհետեւ՝

այն արժէքը միայն ունին՝ ինչ արժէք որ ունի իրենց կենդանութիւն տալու կոչուած միջավայրը:

\*

Կեանքը՝ բնութեան մէջ՝ շահեկան ու գեղեցիկ երեւոյթ մը կը թուի ինծի: Ինծի՛ կ'ըսեմ, որովհետեւ կ'ուզեմ ճանչնալ իմաստասիրելու ինքնօրէն իրաւունքն անոնց՝ որ տարբեր կերպով պիտի տեսնէին ու զգային կեանքը: Վասն զի կեանքը իւրաքանչիւրին համար այն իմաստն ու արժէքն ունի, անկախօրէն որ եւ է իմաստասիրական Փօռմիւլէ, ինչպէս որ ճակատագրուած ենք զայն զգալու: Արդ, կեանքը բնութեան մէջ, շահեկան ու գեղեցիկ երեւոյթ մը կը թուի ինծի: Չեմ գիտեր թէ ի՞նչ անմիջական կամ անդրադոյն վախճանականութիւն կայ անոր մէջ: Մանաւանդ որ՝ բացորոշապէս կասկածոտ եմ այդ մասին: Ահաւասիկ մեծադէղորդ աստուածաբանութիւնը՝ պարզապէս գոց աչքերու կամակոր դիւրահաւանութեամբ միայն վարկ եւ յաջողութիւն կը գտնէ: Հաւատալը գիտնալ է: Իսկ ոգեկան իմաստասիրութիւնը՝ չուզեր բաւականանալ գիտցուածին եւ գիտելիքին համեստութեամբ, ու կ'աճապարէ դէպի սահմանները հարուստ բայց մոլորանքներով լեցուն բնագանցութեան մը:

Բայց առ այժմ կը բաւէ որ գտած ըլլամ թէ կեանքը շահեկան է ու գեղեցիկ:

Եւ եթէ բնութեան մէջ վախճանական նպատակներ չեն նշմարուիր, իւրաքանչիւր անհատական կեանք իր յարաբերական անհատական նպատակն — իր կոչումն — ունի սակայն — ապրիլ ու աճիլ՝ իր ինքնուրոյն ընդունակութիւններուն ու հանգամանքներուն ամբողջական զարգացման մէջ, կեանքը, օրինակի համար մարդու մը կեանքը, այս մասնաւորուած երեւոյթը, կացուցա-

նելու համար աւելի՛ շահեկան, աւելի՛ դեղեցիկ:

Ծաղիկները՝ ճակատադիրն ունին, կոչումն ունին ճոխանալու երանգներով եւ լիանալու բուրմունքներով, որքան որ կան: Միշտ աւելի՛ ներքնուրոյն արժանիք ու դեղեցիկութիւն կայ մանիշակի մը մէջ՝ որ ուժգին կը բուրէ, եւ թանձր երանգով մը կը սարսռայ, քան ուրիշ մանիշակի մը մէջ՝ որ զուրկ է բուրմունքէ եւ թոյրէ:

Առիւծը անապատին մենութիւններուն եւ աւազնւորուն միահեծան խաղաղութեան մէջ աւելի՛ վսեմ է ու դեղեցիկ, եւ անմերձենալի բարձրութիւններու արքայական սահմաններուն մէջ միայն իր տեղն ունի՝ արծիւին խրոխտ ու սլափաւելի հպարտութիւնը:

Գալով մարդուն, անիկա գործարանաւոր կենդանութեան եթէ ոչ ամենէն վերջին ու վերջնական, այլ ամենէն բարդ ու ամենէն բարձր արտայայտութիւնն է:

Այդ պարագային՝ իրեն համար կեանքի գերագոյն նպատակը պիտի ըլլար մշակել առաւելապէս՝ ինչ որ զինքը կը բնորոշէ ամենէն աւելի՛ կենդանական շրջանակին մէջ:

Աստուածները կը սնանին. կը սնանի նաեւ մարդը: Անկարեւոր է քանակական ու որակական տարբերութիւնը որ պիտի բաժնէր իրարմէ՝ քիմիական կամ կենսաբանական այս երեւոյթները — սնանումն անասունին եւ սնանումը մարդուն: Միեւնոյն խոտի շիւղը կամ մսի կտորը կոչուած է ապահովել երկուքին ալ կենդանութիւնը:

Նաեւ՝ չպիտի կրնայինք իմացականութիւնն ընել բացարձակ մենաշնորհ մարդուն:

Բայց եթէ կը մտածէ անասունն ալ, ի՞նչ անդունդ՝ որ կը բաժնէ մարդկային մտածումն՝ անասնային տարրական իմացականութեան գործունէութենէն՝ զոր կ'ան-

ուանենք բնազդ :

Ատոր համար էր որ պիտի համարձակէի ըսել թէ՛ մտածումը միայն կեանքը կը գեղեցկացնէ ու կը մեծցնէ մարդուն մէջ, մտածումը՝ որ կը թուի ըլլալ իր կեանքին վեմադոյն նպատակը: Եւ, նորէն, ա՛ն է որ կեանքի դանազան երեւոյթներու նուիրապետութեան մէջ բարձրագոյն տեղ մը կը բռնէ:

Խանդաղատալիբ պատկառանքով կը յիշեմ Բասքալը որ այնքա՛ն իրաւամբ անուանած է մարդը « le roseau pensant ».

✱

Ըսել ուզած եղայ որ մտածո՛ւմը միայն կը բարձրացնէ մարդը: Բայց այնքան պնդած են թէ՛ բարոյականը գերագոյն պսակն է մարդկային փառքին: Արդե՛ս ետ՞ք Ապաճովաբար, բարոյական իտէալ մը բանաձեւած ըլլալ, նորէն, մարդկային իմացականութիւնը պանծացնող հրահանգ մըն է:

Իտէալ մը. այսինքն բան մը որ չի կրնար իրականանալ, որ պէտք է իրականանայ, ըստ բացատրութեան, այսինքն բան մը՝ որ դադափարական ու բանաստեղծական անորոշութեամբ հմայք մը միայն ունի:

Վասն զի դործնական բարոյականի տեսակէտով, հաւատարիմ չուն մը յաճախ աւելի բարձր բարոյականի տէր է, քան ամենէն անկաշառ հոգիով մարդը, որ, մարդկութեան դիւրաբեկութիւն, քննական վայրկեանի մը մէջ կրնայ սայթաքիլ ու իյնալ:

✱

Բայց մտածո՞ւմը միայն: Որքա՛ն տղայամտութիւն է վերջնականութեան յաւակնութիւն մը ճանչնալ մեր խորհուրդներուն: Վասն զի ահաւաստիկ մարդուն եզրահանութիւնը կացուցանող լծորդ հանդամանք մը, իր

դղայնութիւնը (sensibilité) այն տարօրինակ ու  
բարդ էութիւնը, որմէ բղխող երեւոյթները կը խառ-  
նըւին, կը միաւորուին իմացական կարգին վերաբերող  
գործողութիւններու հետ: Հին իմաստասիրութեան  
բացատրութեամբ, գլուխին ու սրտին միաւորումը ո-  
րուն չքնաղ ծնունդներէն մէկն է Արուեստը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍ

( Ա Յ տ ի ս )

Ամաթէօս մը, որ տաղանդ ունի, միշտ աւելի մաքուր եւ աղնուական արուեստագէտ մըն է քան ամենէն մեծահամբաւ հեղինակը՝ որ հասարակ ժողովուրդէն բան մը կ'սպասէ իր եսին եւ իր քսակին գոհացումին համար:

\*

Գրականութիւնն այն ատեն արժանաւորագոյն ձեռքերու մէջ է երբ ամենէն առաջ գոհացում կուտայ ենթակայական մտաւորական պէտքի մը: Թերեւս բոլոր միւս պէտքերը ստորակարգ, պատահական կամ անպէտ ու անպիտան պէտքեր են:

\*

Տարօրինակ կերպով զօրաւոր յիշողութիւններ կան, մերթ ծովի պէս անսահման ու ահաւոր, ամէն բան կ'լլելու եւ իր ընդերքին մէջ պահելու ընդունակ: Հոն ոչ մէկ իր՝ մակերեւոյթին վրայ կը լողայ, քիչ յետոյ ոչ մէկ իր՝ մակերեւոյթին վրայ փոխուելու համար, (Սովորաւորապէս ամենքին վրայ փոխուելու համար, (Սովորական յիշողութիւններուն եղանակն է այս) այլ կը սուղուի դէպի ամենակուլ յատակը, անհամար գանձերով հարստացած: Յիշողութիւնն անշուշտ երկրորդական կարողութիւն մըն է: Կ'ըսուի թէ յիշողութեան զարգացումը տեղի կ'ունենայ ի մնաս իմացական ուրիշ յատկութիւններու: Կրնայ պատահիլ: Բայց ատիկա թերեւս պարագան է անոնց, որ արդէն տկար ունին

դանոնք, այդ խմացական կարողութիւնները: Յիշողութիւնը կը վնասէ այս վերջիններուն, երբ ասոնք հարկ եղած ինքնուրոյն ուժը չունին: Յիշողութիւնը հլու ծառայ մըն է՝ երբ ղորաւոր տէրեր ունի, անկարգ բռնապետ մը՝ երբ ինքզինքը անտէր կը գտնէ: Մեծ խմացականութիւններուն մէջ, յիշողութեան բարի դերը, իբր հաւատարիմ շտեմարան, հիմնական կարեւորութեամբ դեր մըն է: Որքա՞ն գեղեցիկ խմացականութիւններ, անժառանգ մնացած այդ վստահելի աւանդապահէն, չեն կրցած արժեցնել իրենց բոլոր նշանակութիւնը:

\*

Հոետորութիւնը պարապութիւն մը պճնազարդելու պերենեթելու արհեստն է: Արհեստ մը՝ փայտամարդէս եւ պուպրիկներ հագուեցնելու: Բառե՛ր, բառե՛ր, ինչպէս ըսած է Շէքսպիր Համլէթի բերնով, նորակերտ անհանձար բառեր, անդորձածական բառեր, օտարոտի բառեր. ծանրաբեռն պերճանքով բառեր, որք դատարկութիւն միայն կը պարունակեն: Ահաւասիկ հոետորութեան դրամազլուխը:

\*

Բառերն, ասլրելու համար, պէտք ունին զգացողութիւններու, զգացումներու եւ զաղափարներու մազնիսականութեան. այլապէս՝ ամենէն ճոխ բառերը՝ մեռելի մը վրայ ձգուած հարսանեկան զգեստներ են: Բառերն ընդունակ են անտարակոյս զաղափարներ զարթուցանելու, բայց իրենց այդ դերը հիմնապէս պայմանաւորուած է զգայուն եւ կանխատրամադիր լսելիքի մը պատրաստակամութեամբ: Բառերն ինքնուրոյն արժէք մը չունին հակառակ իրենց ճոխութեան ու փայլին: Այդ է պատճառը որ աղքատիկ բառամթերք մը կը բաւէ ժողովրդային այնքա՛ն հարուստ գրականութիւն մը

ճարտարապետելու: Երբ յիշողութիւնն անընդհատ հալածական է փայլուն բառերու կախարդանքէն, այլ եւս ոչինչ կայ ինքնաբուխ, բնական, թանձր եւ խորագոյեցիկ՝ բառին արտայայտութիւններուն մէջ: Թերեւս աւելի ճշդելով հոգեբանական գործողութեան նկարագիրը, փայլուն բառերն ու հոետորական հնարքները այն ատեն միայն առաւելապէս կը հալածեն իմացականութիւնը, երբ ոչինչ կայ խառնուածքին մէջ ինքնատիպ եւ ուժգին, գաղափարը, կրքի կամ զգացողութեան ձեւերուն ներքեւ:

\*

Շատեր մարդիկը կը կշռեն ու կը դատեն իրենց ստամոքսին ու ջիղերուն տրամադրութեանց համեմատ: Ասիկա՝ ուրիշը չհասկնալու մասին մարդոց ունեցած ինքնահաճութեան ու անբաւականութեան արդիւնքն է:

\*

Քննադատի դերն է ամենէն առաջ ճշդել արուեստագէտին անկեղծութեան աստիճանը ու սահմանել անոր տաղանդին անձնական նկարագիրը, որք անձեռնմխելի են եւ անկախ որ եւ է վարդապետական հարկադրութիւններէ:

\*

Ի՞նչ է հոետորութիւնը: Անիկա գրականութիւնն է՝ սորվուած գրադիտութեան դասազիրքերու մէջ: Եւ գրադիտութեան դասազիրք մը կը սորվեցնէ ունենալ ոճի այն բոլոր ցանկալի յատկութիւնները՝ զորս մենք մեր մտաւորական խառնուածքին հետ չենք միասին բերեր, այլ որոնց կը բաղձանք, այլ զորոնք ունենալ կ'ուզենք՝ հոետորութեան ուժով: Հոետորութեան ծաղիկները արհեստական ծաղիկներ են: Հեռուէն դիտուած՝ գրեթէ նշան մը չունին որ շփոթել տան զիրենք

բնական ծաղիկներուն հետ: Բայց պատրա՞նք, հոտ  
չունին: Բոլոր պատրանքները question d'optique չե՞ն  
միթէ, վերջին վերլուծումով:

✱

Գրական յատկութիւնները բնախօսական յատկու-  
թիւններու կը նմանին: (Թերեւս նոյն իսկ հիմնուած  
են բնախօսական յատկութիւններու վրայ): Բռնու-  
թեամբ, բաղձալով կամ աղօթելով չենք կրնար ունե-  
նալ զանոնք: Եւ երբ կը փորձենք այս մեթոտները՝ կը  
ծեքենայինք այն յատկութիւնները զորս ունենալ կ'ու-  
զէինք:

✱

Արդարեւ սիրոյ բանաստեղծութիւնը իր գոյութեան  
իրաւունքն ունի ամէն ժամանակներու դրականութեանց  
մէջ: Երբեք սպառած նիւթ մը չէ ան: Կ'սպասենք միայն  
որ բանաստեղծը չմաշած, նոր լար մը գտնէ, իր սրտին  
փոթորիկը երգելու համար: Միշտ հեշտալիբ հաճոյքով  
ու մերթ նոյն իսկ երախտագիտութեամբ սլտի լսէինք  
զինքն այն ատեն: Ասիկա այսպէս է հակառակ անոնց որ  
սիրային բանաստեղծութիւնը տղայական կը նկատեն:  
Այդ տրամադրութիւններով զինուած մարդոց համար  
բոլոր բանաստեղծութիւնները տղայական չե՞ն միթէ:  
Առանձնախառնութեան խնդիր: Չեմ ըսեր թէ բանաս-  
տեղծները քիչ դեր ունեցած են՝ բանաստեղծութիւնը  
սին արձագանգներով լեցուն հնչական պարապութիւն  
մը նկատել տալուն մէջ: Այնքա՞ն բազմաթիւ են գէշ  
բանաստեղծները: Բայց անկախօրէն յոռի բանաստեղծ-  
ներէն, կայ՝ բանաստեղծութիւնը: Խնդիրն այն է թէ  
բանաստեղծութիւնն ըմբռնելու համար քիչ մը բանաս-  
տեղծ ըլլալու է, եւ սէրը հասկնալու համար՝ սիրելու  
ընդունակ սիրտ մը ունենալու է: Տհաս ու յաւիտենա-

պէս այնպէս մնալու դատաւարտուած իմաստակներ  
կը ճանչնամ, որք իրենց իմացական սահմանափակ  
զգայնութիւնը առջ կը քշեն, իբր անսխալ փորձաքար,  
ամէն արժէքներու, բանաստեղծութիւնը ծաղրելով,  
օրինակի համար լուրջ մարդու, կամ գործնական մտքի  
արժանիք կ'երագեն սպահովել իրենք իրենց: Բայց  
պարզապէս խակ գտած են, այս անգամ սրտառուչ տգի-  
տութեամբ, այն երագողը՝ որուն իրենց դունչը չի հաս-  
նիր: Եւ սէրը, «գիտուն»ներուն, ծերացածներուն,  
գործնական եւ լուրջ մարդոց հետ գործ չունի շատ:  
Սէրը՝ սիրել կրցող սրտերունն է. սէրը՝ երիտասար-  
դութեան շնորհն է, սէրը՝ կեանքին ներքին նպատակն  
իսկ է, ուրեմն «երգեսցուք զսէր» ինչպէս կ'ըսէ Սո-  
ղոմոն:

\*

Ի՞նչ է ծաղրանկար մը.— ուսումնասիրութեան  
առարկայ տիպարին վրայ ամենէն ուշագրաւ եղանակով  
վիրաւորելի նկատուած կէտերուն՝ չափազանցուած,  
համեմատութենէ ինկած եւ հետեւապէս ծիծաղելի ըն-  
ծայուած ձեւով պատկերացումն է:

\*

Գրադէտներ կան որոնց տաղանդին անխափան տիե-  
զերականութիւնը, որոնց մտքին նուաճող զօրութիւնը  
ինքզինքնին հարկադիր կ'ընեն իրենց ժամանակին վը-  
րայ: Ասոնք անվիճելի են, եւ ասիկա անտեղիտալի  
բոնականութիւնն է հանճարին՝ որուն առջեւ մեր նը-  
լաստ զլուխները կը խոնարհեցնենք խանդաղատեցու-  
ցիչ հլութեամբ մը:

Ուրիշներ կան, հասարակ տաղանդները, բազմամ-  
բոխ արջառը միջակութիւններուն, գիւրին, բեղուն,  
ճկուն, այլ հետեւակ, այլ տժգոյն:

Այս վերջինները՝ ծեծուած ճամբաներու վրայ երթեւեկող ճարտար կառապաններ են: Իրենց հետ՝ շատ հանդիստ ենք ու ապահով: Գիտենք թէ ուր պիտի տանին զմեզ: Ատոր համար է որ հասարակաց ամբոխային վստահութիւնն ու հաւանութիւնը իրենց հետ է, հասարակաց կոյր վստահութիւնը եւ ծոյլ հաւանութիւնը, որ կը վախնայ խոտորնակ ճամբաներէն, որ անընդունակ է տոկալու անոնց յոգնեցուցիչ հաճոյքին:

Կան նաեւ տարականոն տաղանդները: Հանճարին տիեզերականութիւնը չունին անոնք: Բայց մեկուսի ու վեր են հասարակ միտքերու ռամիկ սովորականութենէն:

Արտուղի, կողմնակի, նորերեւոյթ ճիւղեր են անոնք, մերթ, բարեբաղդ պարագային, յոյժ շահեկան: Իրենց մերթ միակողմանիութիւնը, աւելի կամ նուազ անձուկ աւելի կամ նուազ աղանդամու անհատապաշտութիւնը՝ հաճելի չէ ամենուն, հաճելի չէ մանաւանդ «հասարակաց կարծիք»ին: Մանաւանդ թէ դայրոյթ ու հակակրօթիւն կը դրդուէ յաճախ: Սովորաբար չենք սիրեր այն մարդիկը՝ որք նմանութեան եզրերը կը շրջեն: Վասն զի անընդունակ ենք հասկնալու մենէ շատ տարբեր անհատականութիւնները: Եւ անհրաժեշտապէս կ'ուզենք որ մարդիկ իրարու նմանին: Հակառակը չենք կրնար ներել: Ասիկա հասարակաց մտքին տափալուծեան ու աղքատութեան զայրալիւ խոստովանութիւնն է: Տարտամօրէն ու խուլօրէն կ'զգանք թէ մեզի եւ ամենուն չնամանողներն՝ իրենց վրայ բան մը ունին՝ որ եթէ միշտ յայտնի դերազանցութիւն մը չէ, բայց չհշտօրէն ուշադրութիւն կը հրաւիրէ, մինչդեռ, սովորական դէմքերը, աւա՞ղ, իրարու հետ կը շփոթուին: Հետեւաբար, այդ դարտուղի տաղանդներուն մօտենա-

լու պատշաճադոյն ու լաւագոյն եղանակը, առանց որ  
եւ է կանխորոշութեան, հանդարտօրէն, ու մանաւանդ  
յօժար համակրութեամբ, հետաքրքրուիլն է անոնցմով :  
Համակրութիւնը լաւագոյն յայտնաւորիչն (révélateur)  
է այդ զգայուն տախտակներուն (plaque sensible) վրայ  
պահուրտած անտեսանելի պատկերներուն, որք շատ  
սնդամ հրաշալիքներ են :

\*

Ինքնատպութիւնը անգիտակցութեան կալուածին  
կը պատկանի : Զգտում մը դէպի զուտ ու բացարձակ  
գիտակցութիւն՝ կը վնասէ արուեստի դործին : Այդ  
ձգտումը այլ եւս յատկութիւն մը չէ, այլ հոգ մը եւ  
յաւակնութիւն մը :

\*

Աշխարհի մէջ ամէն բան կը փոխուի : Ատիկա հար-  
կաւորութիւն մըն է, որուն առջեւ գլուխ կը խոնար-  
հեցնենք : Բայց հասարակաց եզրերու ջնջման մէջ լե-  
զու մը ունի, ճաշակի տէր ու լուրջ մարդուն համար,  
տեսակ մը նուիրականութիւն, զոր չենք կրնար պղծել  
առանց մեծամտութեան կամ տգիտութեան : Լեզուա-  
կան ինքնատպութիւնը ընդհանրապէս ցուցասէր արտա-  
ուցութիւն մըն է : Դատական լեզու մը կարող է ինք-  
նատիպ մտածում մը լիովին արտայայտել : Անշուշտ  
կենդանի լեզուն չի սառիր վերջնական կաղապարումի  
մը մէջ : Սառումը նկարագիրն է մեռած լեզուներուն :  
Կենդանի լեզուն կը փոխուի, կը շրջուի, անշուշտ, քա-  
նի որ կ'ապրի՝ եւ այս երեւոյթը տեղի կ'ունենայ անըզ-  
գալի կերպով, բան մը՝ որ պէտք չէ շփոթուի լեզուա-  
կան շինծու, բռնաճիգ, անհանճար յանդգնութիւննե-  
րուն հետ :

Կար ժամանակ մը՝ ուր քննադատութիւնը դարձողացականի շարագրութիւններ սրբագրող դրապիտութեան վարժապետի աշխատութեան մը հետ կը շփոթուէր: Սխալներ մատնանշել, թերութիւններ շտկել, կանոններ առաջարկել, օրէնքներ սարտագիր ընել՝ դրական քննադատի ահարկու առաքինութիւններ էին: Քննադատին դերը, այս ուղղութեամբ, առաւելագէս՝ տապալուամի յոխորտ ու մեծամիտ դեր մըն էր: Իբր թէ պէտք էր որ անպատճառ սրբագրէին: Խիժեր ու բիժեր փնտռելու, անոնցմէ անպատճառ գտնելու, արատներ մատը փաթթելու անհրապոյր այդ աշխատութիւնը՝ այլ եւս կը մնայ պատուելիներու ցամաք ու այլամերժ սրտերուն տիւրը երջանկութիւնը շինելու կոչուած աշխատութիւն մը:

Գրական գործ մը, ինչպէս արուեստի գործ մը, աւարտած, վերջնականօրէն ծնունդ առած գործեր են, տրուած զգայնութեան մը անկախ ու անհատական օրէնքներուն համեմատ արտայայտուած: Քննադատութեան դերը՝ դանոնք հասկնալ ու բացատրել, եւ ի հարկին սիրել ու սիրցնել: Քննադատը գնահատիչ մըն է, եւ իր դերը կը սահմանափակուի գնահատութեան առարկային ներքնորոյն ու անկախ արժէքը սահմանելուն մէջ: Իր լաւագոյն յատկութիւնն ա՛յն կրնար ըլլալ որ, ինք աւելի՛ հասկնար, ինչ որ հասարակ սիրողները անբաւականօրէն պիտի հասկնային: Իր հոգին, իր միտքը, իրենց դուռները լայնօրէն կը բանան բոլոր այն արտայայտութիւններուն՝ որոնք իրեն կ'առաջարկուին իրմէն տարբեր՝ բայց իրեն չափ իրենց անհատական անկախութեան մէջ ինքնօրէն ու ազատ զգայ-

նութիւններու կողմէ : Այս սահմաններուն մէջ, ինչպէս  
ամենուրեք, բացարձակ դատաստաններ չկան, վասն զի  
չկան բացարձակ դատանիչեր : Իրարմէ տարբեր կեր-  
պով բաղադրուած, հետեւապէս՝ իրարմէ տարբեր կեր-  
պով աշխարհի իրականութենէն աղլուող անհատակա-  
նութիւններ միայն կան : Քննադատը պիտի աշխատի  
այս անգամ՝ հասկնալ ու հաստատել շահեկանութեան  
նկարագիրն ու աստիճանը այն երեւոյթներուն՝ զոր  
ուսումնասիրելու կոչուած է : Երբ բարեբաղդ հանդի-  
պումներ ունենայ, իր դերը խանդավառուիլ է ու խան-  
դավառել : Գանձեր գտնող երկրախոյզի մը ուրախու-  
թիւնը պիտի ըլլայ իրենը : Պիտի պատահի որ անպէտ  
բժժանքներ եւ անարժէք ուլունքներ պիտի հաստատէ :  
Աւա՛ղ, թանկագին քարերը հաղուադիւտ են : Բայց ա-  
տոր համար չպիտի բորբոքի, բայց չպիտի կատղի՝ թէ  
ասիկա ինչո՛ւ համար այսպէս է : Նոյն իսկ թոյլ չպիտի  
տայ իրեն ըսելու թէ ասիկա հարկ է սա՛պէս եղած ըլ-  
լալ : Այլ պիտի ջանայ ըսել՝ թէ ճշգիւ ասիկա այսպէս  
է, վասն զի դիտէ թէ ասիկա այսպէ՛ս միայն կրնար  
եղած ըլլալ, հակառակ մեր բարի բաղձանքներուն կամ  
բարկութիւններուն :

Քննադատը խորաններ կը բարձրացնէ, դափնիներ  
կը հիւսէ, բազիններ կը կանդնէ արժանի աստուածու-  
թիւններուն համար, որոնց բազմութիւնն ու այլազա-  
նութիւնը՝ պանթէոնին հմայքը բարձրացնելու միայն  
պիտի ծառայէր : Իր քրմապետի նուիրական դերին դի-  
տակցութեամբ, պաշտօն ունի ինք՝ հաւատարիմներ եւ  
հաւատացեալներ պատրաստելու իր աստուածներուն :

\*

Արուեստը դերագանց հմայքն է կարգ մը հոգիներ-  
րու համար : Սէրը, ամենազօր սէրը, երբ պատահի որ,

— եւ աւա՛ղ, ատիկա ամենօրեայ եղերական պատահում մըն է — այլի թողու զմեզ մեր ամենէն խանդավառ երազներուն հմայաթափութեան մէջ, կընանք արուստին վերադառնալ, եւ ան պիտի մխիթարէ զմեզ, պիտի սրտապնդէ զմեզ, անխար ու անյողդողդ հաւատքի մը զրահը պարզեւելով մեզի: Ու պիտի պատահի որ՝ սիրոյ կսկիծը՝ արուստի պատրուակ մը դառնայ, ու վերաւոր սիրտը զովանայ այդ պայծառ ակունքէն, ի՛նչ քաղցր հեգնութիւն:

Հոգիներ կան որ կ'ըսեն նորէն. (որքա՛ն եղբայրօրէն անոնցմէ եմ ես ինքս) «Այս տխուր ու թշուառ աշխարհին մէջ թերեւս չկայ աւելի թանկադին ու յաւիտենական բան՝ քան արտայայտութիւնը կատարեալ, մաքուր արուեստի մը: Բոլո՛ր յոյսերը, աշնահար ու դալկացած, կը տերեւաթափին, բոլոր երազները կը տփռունին ու կը ցնդին, բոլոր ճոխութիւնները, բոլոր բարիքները՝ անվստահելի ու դադադադադուն կայծկըլտումներ են, որ տարաժամ կը շիջանին: Ունայնութեան սառնաշունչ հովը՝ տիեզերական ու բացարձակ մըմունջ մը կը թուի, որ մեր ականջներուն մօտ կը հեծկտայ վերջին ու վճռական կործանումներու ճամբարտութիւնը: Բանաստեղծութի՛ւնն է որ անմահութեան դրոշմ մը ունի, եւ ան միայն, անընդմիջական թրթռումի մը մէջ, թերեւս մեր հոգին յաւիտենականութեան կը կապէ, զերեզմանափակ մահուան գերազոյն լուծեմէն անդին: Թերեւս արուեստը միայն կայ, որ պիտի կարենար բիւրեղացնել, որ պիտի կարենար յաւիտենացնել, փայլակնաշող յայտնատեսութեան մը անծանօթ այլուրին՝ որուն հայրենաբաղձութիւնը կը սզանք...»

Հոգիներ կան որ այսպէս կ'ըսեն: Ես ինքս եմ որ

այդպէս կ'ըսեմ: Բայց ի՞նչ ըսել կ'ուզեմ: Պարապու-  
թիւնը ուրիշ պարապութեամբ մը լեցնելու այս ջանքը  
եղերականօրէն հեղնական չէ՞:

\*

Իմացականութեան ոլորտները, արուեստին կա-  
յանները բարձր են եւ դժուարամերձ: Ասիկա՝ իրենց  
ստորոգելիքը, բնութիւնն իսկ է: Չէ կարելի զանոնք  
վար իջեցնել, առանց վնասելու իրենց: Ջրխոթան մը՝  
(albatros) նաևի մը տախտակամածին վրայ, աղտոտ  
նաւաստիներէ շրջապատուած, ի՞նչ թշուառութիւն —  
կը բացատրէր Պոտլէո: Արուեստը չի զիջանիր: Պէտք  
չունի ատոր: Չի կրնար արդէն: Չայն վայելելու հա-  
մար՝ մինչեւ իրեն բարձրանալու է: Դէպի վար քաշե-  
լով դայն՝ հմայաթափ կ'ընենք, ծաղրելի կը դարձնենք  
դայն: Անիկա հասարակ ժողովուրդին համար չէր՝ որ  
լիովին, ամբողջական ոչինչ կը հասկնայ: Բոլոր մեծ  
հանճարներու ժողովրդականութիւնը եթէ ժողովուր-  
դին ձեռքով շինուած է, ժողովրդային հասկացողու-  
թեամբ շինուած չէ: Փորձեցէք ձեր սրունքներուն ուժն  
ու տոկունութիւնը, հասնելու համար մինչեւ անոր:  
Բոլոր միւս ջանքերն օգաճախը ջրխոթանը վար առնե-  
լու, ոամկացնելու տգէտ կեղծարար կամ մարդահա-  
ճոյ եւ առհասարակ դարչելի միջոցներ են: Բնութեան  
կարգերուն մէջ՝ աստիճանաւորումներ, նուիրապետու-  
թիւններ կան: Վերստին, բնական կարգին մէջ, բոլոր  
արժանիքները՝ անհաւասարութեան, ապա եւ անար-  
դարութեան օրէնքով կը բացատրուին: Փարիսեցիներ-  
ըր եւ կեղծաւորները միայն պաշտօն ունին ընդհանուր  
հարթ հաւասարութեան մը անհրապոյր ցնորքը խաղ-  
ցնելու ոամիկ հասարակութեան դիւրախաբ աչքերուն  
առջեւ:

\*

Իմացականութիւնը առխարխափ կ'երթայ փնտուել  
ճշմարտութեան ցնորքը: Կը փնտուէ ու չի գտներ: Գի-  
տէ որ չախտի գտնէ, բայց չի կրնար չփնտուել զայն:  
Ճշմարտութեան փնտուտուքը մտքին սնանուամն է: Բայց  
ահաւոր իրողութիւն մը կայ աշխարհի մէջ: Մարդոց  
մեծագոյն մասը գտած է ճշմարտութիւնը, առանց նոյն  
իսկ զայն փնտուած ըլլալու: Յանուն ճշմարտութեան է  
որ զիրար կը խաչաձեւեն ամենէն մոլեգին դաշոյնները:

## ՄՈՒԽՐ ԵՒ ՄԱԽՐ

( Ա Ն Ս Ի Ա )

Ո՛րվ գլուղ, իմ ծննդավայրս ու իմ յամբ մահացումիս անսպասախանատու ջերմավայր... : Թանձր, դառնակակիծ, մտախորհ մեղամաղձութեան ղինովցնող բոյր մը կը բղխի քու ամէն մէկ անկիւնէդ. եւ անմխիթարելի տրամութիւնը իրիկուններուն՝ որոնց մէջ ամենօրեայ արեւներս կը մեռնին արիւնաթաթաւ հողեվարքներով, եւ յոգնատանջ երկարաձգումներ հեռաւոր հորիզոններուն վրայ մարող ճամբաներուն՝ որոնք ծայր, որոնք վերջակէտ չունին, եւ բնակութիւններու կողմ՝ իրենց յաւիտենական խաչելութեան մէջ ուժաթափ, հինուկ հողմաղացները, վերջապէս ամենէն անշան իրերը՝ որ զքեզ կը բաղկացնեն, կեանքի սեւ հողերուն սարսուռովը համակուած՝ կ'ապրին թէ չեն ապրիր, չգիտեմ :

\*

Երբեմն փնտռեցի թէ ինչո՞ւ կը զրէի: Ու գտայ որ, կրնայի արդահատիլ գրելու ունայնամտութեանս վրայ, եւ ուղեցի մերժել գրելու փառքն ալ, ուրիշներուն հետ: Ժխտումի չար ոգի մը կը գալարի շարունակ՝ հոգիիս մէջ: Բայց հարկադրուեցայ տակաւին հաստատել թէ՛ չէի կրնար ինէ հեռացնել զգալու եւ խորհելու իրողութիւնը, — պիտի ըսէի՝ զգալու եւ

խորհելու պարծանքը: Եւ կը ջանամ բանաձեւել. մտածումը՝ ապրող մտքին սնանումն է: Կ'ուզեմ ապրիլ, ուրեմն բռնադատուած եմ խորհիլ, եթէ չեմ իսկ գրեր: Ու փորձեցի:

Մտածումս շրջագիծ չունէր, երանգ չունէր, շիղ չունէր, թռիչք չունէր: Սորհելու համար գրելի՛ւ պէտք ունիմ ես: Կան՝ որ խորհելու համար կը խօսին: Չայնը, իր ելեւէջները մտածումը կ'ստորագծեն, անոր միանունքները կը զօրացնեն, թեւ կուտան անոր: Ինծի համար՝ խօսիլ չկայ: Այդ պերճանքը իմ լուսէր շըրթունքներուս համար չէ կարծես: Սորհելու համար ես պէտք ունամ գրելու: Գրել՝ մտածումս կերտել, զայն աշխատիլ, զայն յղկել, զայն կատարելագործել ըսել է: Գրել՝ չարչարուիլ բայց ապրիլ ըսել է ինծի համար: Թոյլատրէի՛ն ինծի այս տաժանելի հեշտանքը, — այս յաւակնութիւնը:

✱

Բայց քանի՛ կը գրեմ, այսինքն քանի՛ կը խորհիմ, անձնատուր կ'ըլլամ սա անագորոյն համոզման թէ մտածումներու աշխարհին մէջ ներելի չէ բերանը բանալ անո՛ր համար՝ որ չունի ըսելու չլուծած բան մը: Անկից դուրսն՝ աւա՛ղ, ունայնամտութիւն միայն կայ, եւ ես ինքզինքէս կը սարսափիմ յաճախ:

Կանգ կ'առնեմ սակայն: Չլսուած բա՞ն մը: Կրնա՞յ ըլլալ չլսուած բան մը: Կը տարակուսիմ: Թերեւս, մարդկային հանճարը ըսած էարդէն բոլոր կարելի ըսելիքները: Եւ եթէ ճշդեւ հարկ ըլլար «չլսուած»ին իմաստը թերեւս հարկ էր ըսել « ըսելու չլսուած եղանակով » մը:

Բայց ըսելու չլսուած եղանակ մը՝ զայն հետերնիս բերած կ'ըլլանք կամ ոչ: Առաջին պարագան բախ-

տաւորութեան պարագան է: Երկրորդը՝ հասարակաց ճակատադրական պարագան է: Դժբախտութեան յաճախողէպ պարագան:

Բայց. — վերստին բայց, եւ ա՛ն դիտէ մինչեւ ուր, մինչեւ երբ, — ո՞վ պիտի դատէր կամ ի՞նչպէս պէտք էր դատել ըստածներուն եղանակի նկարագիրը, թէ անոնք ըստած էին թէ չըստած: Որքա՛ն տարտամութիւն, որքա՛ն անստուգութիւն, այն սահմաններուն մէջ ալ, եւ ի՞նչ թշուառութիւն ամենուրեք:

\*

Ի՞նչ խոսվաբեր երկուութիւն է, զոր յաճախ կը հաստատեմ իմ մէջս, ամէն անգամ որ ինքզինքս կը դիտեմ, իբր թէ հորի մը մէջ, կամ լճակի մը, եւ կամ առուակի մը ջուրերուն խորը:

Կ'ուզեմ հեռանալ իմ նմաններէս, — մարդերէ՛ն: Կ'ատե՞մ զանոնք: Չեմ կրնար ըսել ատիկա: Ատելութիւնն անագնիւ է, ու պիտի վախնայի ես ինձմէ: Ուրեմն ինչո՞ւ փախչէի ես ինձմէ: Ուրեմն ինչո՞ւ փախչէի անոնցմէ, կը վախցնե՞ն անոնք զիս: Բայց այս երբեք չխոստովանուած հպարտութիւնը զոր կ'զգամ իմ մէջս՝ ինձի յաւէտ չպիտի թոյլ տար ամօթն ու այպանութիւնը, վատութիւնն ու վախկոտութիւնը:

Այն ատե՞ն: Ազնուատենչ դիւրագգածութիւն մը փրկել ամբոխային կոպիտ դիմաւորումներէ: Ահա՛ թէ ինչո՞ւ կը փախչիմ: Կը ջանամ հեռանալ հօտէն, վասն զի կը դտնեմ զայն՝ բուռն, կոյր, կոպիտ, անփափկանկատ, անաղնիւ, արձակունակ, տղեղ, տողորուած խոհարարական բնագղներու բոլոր տափակութիւններս: Բայց ա՛յս է ընդհանուր նկարագիրը խուժանին, հակառակ ռամկապաշտ մտքին շահանկատ կամ տղէտ չողորթութիւններուն: Կը փնտռեմ միայն ու կը յար-

դեմ ու կը պաշտեմ այն մեծերը, որոնք, անսպառ վա-  
ռարան իմացական ու բարոյական կեդրոնի մը, իրենց  
լուսաւոր էութենէն բղխող կայծերը կը ցրուեն, կը  
թափանցեն բուսակենցաղ հողիներուն մեծագանդուած  
ճախճախուտին մէջ, հոն արթնցնելու համար ինչ որ  
ունի հօտը ալնիւ՝ թագնորէն ու զօրութենականորէն  
(virtuellement) :

Ու կը սիրեմ մարդկութիւնը, իր առօրեայ եղերա-  
կան անդարմանելի թշուառութեան մէջ, բայց կ'զգամ  
թէ իժերու այս խուրձին գլխուն չի կոխուիր անսպա-  
տիժ: Կը ցաւիմ անոր մասին, բայց չեմ ուզեր մօտե-  
նալ անոր: Ո՛չ դայն իր սողոսկումներէն վեր առնելու  
հաւատքը ունիմ, ո՛չ մահացու կճուածին միամիտ ու  
անկարելի մեծութիւնը:

Ես ինքս ալ, ո՛րք զիտէ, մէկ վտանգաւոր անհատը  
չե՞մ միթէ գիտախօիւ դալարուն խուրձին: Ովե՛ր չէ  
թունաւորած իմ լեզուս: Ովե՛ր շնորհապարտ են ինծի,  
իմ ժպիտին հեղնամոլ վաղաքշանքներէն, իմ ասեղնե-  
րուս փայփայանքներէն: Ի՞նչ եմ ես ինքս: Իրաւա՞մբ  
աւելի բան մը, քան դետնաքարչ մէկ անհատը իժերու  
տրձակին: Ե՞րբ հոգիս կրցաւ հասնիլ մտածմանս աստ-  
ուածամերձ հորիզոնին բարձրութեան: Ե՞րբ դատաս-  
տանիս անկաշառ խտութիւնը անպարտութիւն կրցաւ  
վճռել իմ անդարմանելիօրէն մարդկային սայթաքում-  
ներուս համար: Ես իմ նմաններէս կ'ուզեմ հեռանալ,  
զլուելի՛ր գտնելով անոնց վռհմակը: Ովե՛ր արդեօք չեն  
ուզեր նաեւ հեռանալ ինէ: Բայց վերջապէս, կ'զգամ  
փոխադարձ բարիքը կարելի հեռաւորութիւններուն:  
Պիտի ըլլայ որ, ոչ իժերը կարենային խայթել զիս, ո՛չ  
ալ ինքնապաշտպանութեան լուծը հոգիս նսեմացնէր:  
Եւ նաեւ, թունաւոր ակումներս պիտի թափէին անդոր-

ծուլթենէ, եւ թոյնի գեղձերս պիտի թափէին առանձնուլթեան մէջ:

\*

Երազն աւելի գեղեցիկ է քան դործը: Երազը՝ լոյսն է, դործը՝ տկար ցոլքն անոր: Անօգուտ է երազներն ապրիլ ջանալ, կը ռամկանան անոնք, հմայաթափ, գեղակորոյս: Գաղափարը՝ դործին վճիտ ազունքն է: Անդունդ մը կայ երկուքին միջեւ: Երազ եւ գաղափար միշտ աւելի մաքուր են եւ ազնիւ: Անոնց յատկութիւնները յատկութիւններն են անտեսանելի ոգիին՝ որ անգենի ոլորտներու մէջ կը սաւառնի: Բոլոր տեսանելի մարմնաւորումները՝ մկրտումներ են վերամբարձ թըռիչներուն: Անոր համար՝ երազներս աւելի կը սիրեմ քան ծնունդներս:

\*

Տակաւին կը շարունակեմ բանաձեւել այս ցնորամտութիւնները: Հասկնալի՞ են անոնք այն մասնաւորուած ու պարագայական մղեալ իմաստով որով կը հասկնամ ես դանոնք այս վայրկեանիս, մայիսի առաջին առտուան մը պայծառութեան մէջ: Նոյն իսկ կըրնամ երաշխաւորել ինքզինքիս՝ թէ ուրիշ օր մը պիտի կարենամ հասկնալ դանոնք այն միւլենոյն երանգաւոր իմաստներով:

Պէտք է վերսկսիլ սակայն, եւ ահաւասիկ:

Մարդկութիւնը յիմարօրէն յուզող քառասային յորձանապտոյտին լուսանցքին վրայ առանձնացած, կ'ապրիմ ու չեմ ապրիր: Համարձակութիւնը չունիմ նեուելլու յորձանքին մէջ, վասն զի կ'զգամ թէ պիտի կորսնցնեմ գլուխս ու պիտի կորսնցնեմ գիտակցութիւնս: Այլ եւս եռուզեռէն տարուած, այլ եւս անպէս ծառի բունի մը պէս յորձանքէն քշուած, առանց խոր-

հելու, եւ առանց երազելու: Որքա՛ն կը սարսափիմ  
այլ եւս չկարենալ խորհելէն, այլ եւս չկարենալ երա-  
զելէն: Վասն զի հոն ուր ասլրելու շարժումը կը յորձ-  
նանայ, հոն ուր մարդը կարճատեւ կեանքի մը վախըս-  
տական երեւոյթին կը փարի բոլորանուէր, յաւիտենա-  
կանութեան ուխտաւորի մը յիմարօրէն անդիտակից  
միամտութեամբը, հոն այլ եւս մարդը կը գործէ, եւ  
գործէն համազբաւուած, եւ գործէն կլլուած, ժամա-  
նակ չունի, հառաչելու իր թշուառութիւններուն վրայ,  
ժամանակ չունի զանոնք սփոփելու խորհուրդին սպե-  
զանիով: — պիտի ըսէի, ժամանակ չունի ասլրելու:

Անոնք որ գործը երազէն կը նախընտրեն, իբր այն  
թէ առաջինը շօշափելի ու կշտացնող իրականութիւնն  
էր, մինչ վերջինը կը մնայ իրազանց անզոյ ստուեր  
մը, այդպիսիները զուրկ ըլլալու են աշխարհի իրակա-  
նութեան յարաբերականութեան զգացումէն:

Բայց որի՞նն է իրաւունքը: Որի՞նն է ճշմարտու-  
թիւնը: Երազողի՞նն թէ գործողին, — տաղնապահար՝  
պիտի հարցնէի, կեանքի խնդրուածը լուծելու աղաչա-  
ւոր յօժարութեամբ: Ու թերեւս ճշմարտութիւնը հոն  
է որ՝ թողուն երազողին երազել եւ գործողին գործել,  
քանի որ բոլոր ճամբաները այլ եւս օր մը՝ բան մը  
չըլլալուն միայն կ'առաջնորդեն:

\*

Երկար առեն պատրանքով օրօրուեցայ: Ինքզինքս,  
աշխարհի մէջ, իմ նմաններուս մէջ, շահեկան երեւոյթ  
մը կը հաւատայի: Անկից յետոյ, տարակուսեցայ,  
բայց դեռ կը յուսայի: Կ'սպասէի, եւ իբր թէ կը կար-  
ծէի թէ խոստմնալից յամեցումի մը վրայ էր միայն  
խնդիրը: Եւ պարբերաբար, իմ ենթադրատակցութեանս  
յատակին մէջ, ծովասուզակի խուզարկութիւններ փոր-

ձեցի: Յուզմունքէ դողահար, բուռներս լեցուն, դուրս  
կուգայի անդունդին խորութիւններէն: Բայց չգտա՛յ  
այն դանձերը՝ զորս գտնել ապահով էի նախ, եւ յե-  
տոյ՝ դեռ կը յուսայի գտնել: Փոխանակ մարդարիտ-  
ներու, փոխանակ ոսկիի կամ ադամանդի, ժժմակնե-  
րու, աւազի հատիկներու եւ խիճերու սնոտիք մը լոյս  
աշխարհ կը բերէի:

Անոնց վրայ կը նայիմ դեռ, այդ ոչինչ հարստու-  
թիւններու՝ որ ձեռքերէս կը թափին, եւ կը հարցնեմ  
ինքնիրենս. ժժմակնե՞ր են ասոնք թէ մարդարիտի հա-  
տիկներ, ու վերստին, տեսողական պատրանքի մը  
կասկածանքը կը նեղէ զիս:

\*

Անհամար թերութիւններու, իմ ցաւալի անբաւ-  
կանութիւններու սայրասուր վիշտը կը տառապեցնէ  
զիս անդու: Իմ անդարմանելի մարդկայնութիւնս՝  
իմ անյուսութիւնս է: Սարսափելի անկեղծութեամբ մը՝  
ինքզինքս կը ճանչնամ, իմ անպէտ ոչնչութիւնս, եւ  
անմխիթար կը մտմտամ:

Բայց ոչ ոք իմ երեսիս պիտի յանդգնի պոռալ այս  
դառնահամ ճշմարտութիւնը: Իմ ներսս ծնունդ առած՝  
հանդուրժելի է ան: Համակրելի է անոր անտեղիտալի  
լուծը: Դուրսէն եկած՝ հողիս չի տոկար այդ նախա-  
տինքին. հպարտութիւնս կը մերժէ զայն, ճշմարտու-  
թի՛ւնը, եւ կ'ընդվզի յօխորտանքով: Ներքին ու ինք-  
նարուխ ճշմարտութիւններս միայն ուրեմն հեշտիւ ըն-  
դունելի են ինձ համար, որքա՛ն ալ անազորոյն ըլլան  
անոնք: Եւ ասիկա՝ թերեւս՝ որովհետեւ՝ ունայնասի-  
րութեան փաղաքջանք մը կը մեղմէ անոնց դառնու-  
թիւնը, երբ մենք մեր վրայ կը խօսինք, եւ ասիկա՝

մանաւանդ որովհետեւ, ես իմ մէջս կը տեսնեմ մարդն իսկ, յաւիտենական մարդը: Վասն զի ես այնքա՛ն ինքզինքս եմ որքան ուրիշներն եմ՝ ճշմարտութեան այս ցուրտ հանգրուաններուն մէջ:

Ո՛չ մտքի պէշանք մըն է, ո՛չ իմացականութեան ցուցապաշտ դարդամոլութիւն (dandysme), ո՛չ իսկ հեշտամոլ գեղասէրի գոռոզ հեղնասիրութիւն, երբ վերստին՝ վերջին երազներուն եւ վերջին պատրանքներուն ալ հմայքները կը ցնդին, ու ոչնչապաշտ հողիս՝ կործանումներու անբախտ սիրահար՝ աւերակներու վերեւ կը սաւառնի ժպտելու համար անոնց անդարմանելի տրտմութեան վրայ:

Սրտիս ամենախորին անկեղծութիւնն է որ կը խօսի ինծի ու դեռ անոր յաւակնոտ արձագանքն է այս սղորմելի դրիչս, որ ուղղադիժ տողերու վրայ գեանաքարչ՝ օձապոտոյտ սողոսկում մը կը փորձէ վերստին:

Ըսե՛լ կ'ուզեմ որ, իմացականութեանս զատաստանին առջեւ օր մը աշխարհը կործանեցի՝ իր բոլոր տղայական կուռքերով: Իբր թէ մեծ վստահութեամբ մը ըրի այդ բանը, ամենամեծ անվախութեամբ մը նոյն իսկ թերեւս, առանց հաշուելու որ այդ խիզախումը կը թուլցնէր իմ մէջս կեանքին բոլոր քաղցր կապերը: Եւ այսպէս, հաստատած կ'ըլլայի թէ՛՝ պատրանքներու ունայն ու ողորմելի աստուածաշտութեան մը միայն կրնային յանգիլ աշխարհի մէջ մարդկութեան ինքզինքը արտայայտելու համար ի դորձ դրած բոլոր սոսորադասական ջանքերը:

Եւ ահաւաստիկ համայնական աւերակներուն վերեւ պահ մը հողիս յուսահատ սաւառնում մը եղաւ: Նոյն իսկ խարխուլ թառ մը չգտայ, անոր ազնիւ այլ տրտում յոգնութիւնը հանդուցանելու համար: Բայց որովհետեւ

կ'երեւի թէ պիտի ապրէի դեռ, հանգչելու խորշ մը ջանացի գտնել: Ու կարելի եղաւ որ կործանումներու այս դժբախտ աշխարհը տեսնէի՝ դեղեցկութեան տակաւին մխիթարար տեսակէտէ մը: Այդ թշուառութիւնը, այդ սնոտիքը, այդ ոչնչութիւնը՝ աղուոր էր տակաւին:

Եւ մխիթարար ուրախութեան մը մէջ դողացի տղու մը պէս՝ որ ապակեայ անարժէք ուլունքներ գտած ըլլար: Անոր համար կարելի եղաւ որ սիրեմ Արուեստը, պատրանքներուն ամենէն վեհը, եւ ինքզինքս դնեմ իր սպասարկութեան, դիւրարեկ դրիչով մը տակաւին կապեր հաստատելու համար կեանքին հետ:

Ի՞նչ գրեցի, ի՞նչ իմաստով ծառայեցի նուիրական դիցուհիին: Դառն տարակոյսներ ունիմ միայն այդ մասին: Ու գիտեմ թէ, պատրանահար, երազներու մէջ միայն ապրեցայ, ինչպէս խիստ շատեր:

Այսօր՝ իրա՞ւ է արդեօք որ երազին սիրականքն ալ չունիմ: Իսկ, ի՞նչ ընելու են անոնք՝ որոնց խորտակուած է պատրանքին զրահը: Սուտ կամ սխալ հնհնուք: Զի ահաւասիկ, կը սիրեմ թաղծալիւր աչունը՝ երբ տերեւները կը գունատին ու կը թափին, կը սիրեմ դիւղիս թանձրօրէն ոսկեզօծ վերջալոյսները՝ երբ անգորր մթնշաղին մէջէն՝ յոգնած՝ հողագործներու յողնաբեկ ստուերներ կը վերադառնան դէպի դիւղ. կը սիրեմ ծովը իր յողողող դեղեցկութիւններուն անըմբռնելի այլազանութեան մէջ, կը սիրեմ հինաւուրց ծառերն ու նորատի ծաղիկները, կը սիրեմ ոսկեզօծ միջատներն եւ օդերու թազաւորութեան երջանիկ բանկիչները, եւ կը սիրեմ այն հողիները՝ որ ծնունդ տուին ինձի, եւ կը սիրեմ զանոնք՝ որ հոգի են իմ հողիէս, ու կը սիրեմ նաեւ այն մէկ կամ երկու բարեկամները՝ որոնք կը սիրեն զիս . . . :

Այդքա՛ն բազմաթիւ կապեր, այդքա՛ն բազմաթիւ պատրանքներ: Կ'ապրիմ ուրեմն կեանքը, ու բաց կը թողում հոգևոյս բոլոր խորտակուած պատուհանները՝ այն բոլոր ազնիւ գինովութիւններուն՝ որոնց պիտի կրնայի ընել հեղնաժպիտ այլ սրտաղին հիւրընկալութիւն մը, այն բոլոր անյաղթելի գեղեցկութիւններուն՝ որոնց անսահման քաղցրութիւնը պիտի մոռցնել տար ինծի երբեմն՝ թէ կ'ապրի՞մ արդեօք: Մտքով ապրելէ այնքա՛ն դառնացած՝ կ'ուզէի՞ որ, եթէ հնար էր, սիրտս ապրէր տակաւին այդ քանի մը ազնիւ սէրերով եւ մոռացումի՛ ներկրթութեան անձնատուր՝ հոգիս հասնէր վերջապէս իմաստութեան՝ որ անէութիւնն է:

\*

Նոյեմբեր մէկ: Այս առտու պարտէզ կ'իջնեմ: Անսահման կապարագոյն վաթկայ մը, միապաղա՛ղ, — երկինքին կապտադեղ բեհեզային ուրախութիւնը կը խափանէ խոնաւ մթնշաղի մը գորշ տարտամութեան մէջ ինքնամփոփուած բոլոր իրերը: Կարելի չէ որոշել՝ առտո՞ւ է արդեօք թէ իրիկուն. այնքան անստուգութիւն կայ այն թաղծարեկ եւ պատիր նշուլումին մէջ՝ որ կարծես թէ կը վարանի աշխարհը տեսանելի դարձնելու մեր աչքերուն: Աւերանքի եւ անհուն վշտահարութեան հրաշալի պատկեր մըն է պարտէզը: Տերեւթափ ծառերը, մսկոտ խպնահար՝ քրջադեաց մերկութեան մը առաջին անակնկալին մէջ՝ կարծես թէ՛ լոին կը մտածեն ճակատադրական աղէտներու վրայ՝ որ չպիտի ուշանային: Սարփինային նիհար ու օճազալար բազուկներուն վրայ՝ քանի մը խունկի գոյնով տերեւներ կը դողդղան տակաւին: Վարդենիները բոլորովին մերկ՝ փուշերու խուրճեր են այլ եւս: Թշուառութեան հրապոյրը կը սաւառնի: Թղենիին տակ կը կայ-

նիմ վայրկեան մը : Աշնահար լայն տերեւ մը , դաստակէն կտրուած ձեռքի մը պէս վար կ'իյնայ դանդաղ ու դժկամակ . անկումին մէջ՝ եղերական ու ցաւազին բան մը կայ որ կը տանջէ զիս : Իբր թէ հոգիս թառած ըլլար այդ անկենդան տերեւին վրայ . այնքա՛ն ինծի կը թուի թէ անոր հետ կը փոթի եւ անոր հետ վար կը թափի նաեւ հոգիս : Ի՞նչ թաքուն առնչութիւններ կան երկուքին միջեւ :

Կը մօտենամ մեղուանոցին : Ճերմակ փեթակներուն շարանը յուսահատօրէն ամայի է եւ անկենդան : Ո՛չ իսկ միակ ոսկեգօծ թաղանդաթեւ մը՝ որ իր երանաւէտ եւ արբշիւ թռիչքով մ'թնոլորտին մեռելութիւնը կենդանացնէր : Planchette de vol երուն վրայ՝ քանի մը գործաւորուհիներու դալարատանջ մեռած դիակները միայն :

Մտահոգ կը պտտիմ պարտէզին մէջ : Ձոր տերեւներու խառով մը պատուած է հողը , եւ մեռած տերեւները կը հեծեծեն քայլափոխերու տակ :

Որքա՛ն հրապուրիչ եւ տրտում գեղեցկութեամբ մը գեղեցիկ է աշունը : Ու կը համրեմ իմ աշուններս : Արդէն իսկ բազմաթիւ ըլլալ սկսած են անոնք , եւ յիշատակներով են կենդանի : Ու կը գտնեմ որ՝ երբ պէտք ըլլայ իմ անցեալիս համարատուութիւնն ընել , ամայի է ան անապատի մը նման , ուր քանի մը մանկական ժպիտներ միայն կը ծաղկին : Եւ ցանցառագոյն յիշատակներու աւերները աշնանային թախծալիւր վայրանկարներով միայն շրջանակուած են :

Աշնան մէջ ծնած եմ : Սէրը հոգիի մը երկրորդ ծնունդն է : Աշնան մէջ սիրած եմ թերեւ : Աշուններու ոսկեղէն արշալոյսներուն եւ արիւնաթաթաւ վերջալոյսներուն մէջ ամենէն աւելի ապրած եմ բնութեան

գեղեցկութիւնները : Ու կ'ուզէի նոյեմբերի խաղաղ լուրիկուան մը ոսկեղօծ ու տրտում քաղցրութեամբ փառքին մէջ մեռնիլ :



Ու մատծումներս , աշնան տերեւներու նման կը թափին՝ վասն զի կեանքի հասունութեան բեռով են ծանրաբեռնուած : Մտածումները կը թափին՝ գուցէ իմաստութեամբ ծանրաբեռն : Տրտմութիւն եւ մահ կայ տերեւներուն մէջ որ կը թափին : Դառնութիւն եւ մահ կայ չափազանց հասունցած այս իմաստութեան մէջ : Իմացականութեան թոյնը գտայ ես : Իմացականութեան թոյնը կ'ըսեմ : Ա'ն է որ կ'սպաննէ , յամբօրէն , հեշտական երազի մը անազորոյն արբեցութեան մէջ երջանկացնելով հոգին :

Բայց այս առտու , ինչպէս միշտ գեղեցիկ է աշունը , եւ որքա՛ն սրտադին ու կարօտաւէտ յարում կայ իմ մէջն իր թաղծաւեր գեղեցկութեան համար : Ծառերուն կմախքներուն հետ՝ բարեկամօրէն՝ հոգիովս կը խօսակցիմ : Աշնանային հովը կը զարնուի անոնց ճիւղերուն , անոնց մէջ հծծիւններ մրմունջներ թեթեւ սոյլեր կենդանացնելով : Եւ անոնց անուշ այդ պատասխանները՝ ապրեցնող յուզումով մը կը լեցնեն իմ հոգիիս կամաւոր միայնութիւնը : Մեռած տերեւներուն մտերմութեան մէջ կ'ապրիմ դեռ գեղեցկութեան ու դինովութեան այն տարտամ երազները՝ որոնք իմ հոգիիս սողոսկումներուն թեւեր կուտան տակաւին : Ու դիւթական վայրկեանի մը մէջ կը վերապրիմ , այսպէս , տողանցումը , վերերեւումը այն քաղցր պատկերներուն , հմայիչ տեսիլքներուն , եւ սիրելի անըջական դիմաստուերներուն՝ որոնց հետ գեղեցկութեան յու-

դումներ, սիրոյ եւ արցունքի տրտում երանութիւններ  
ապրած ըլլալու է իմ հոգիս :

Ու կը զգամ թէ տղու խօսքեր կ'ընեմ : Միամիտ,  
անիմաստ խօսքեր : Ի՞նչ կը խորհին ուրիշներ հոգիի մը  
այս կացութեան մասին : Ս'հ, որքա՞ն պիտի ուզէի  
չխորհիլ թէ ուրիշներ ինչ կրնային խորհիլ իմ մասիս :  
Ուրիշներ իրաւունք ունի՞ն դատաստան ընելու հոգիի  
մը ներքին թաղաւորութեան անկախ շարժումներուն  
վրայ : Որքան քիչ «ուրիշ» ըլլալ ուզած եմ ես, իմ մե-  
նասէր ուղեւորի ճամբորդութեանս այս ընթացքին :  
Որքա՞ն արդարութեամբ ջանացած եմ որ ուրիշներն եր-  
թան ըլլալ ինչ որ կ'ուզեն կամ կրնան ըլլալ : Ինչո՞ւ  
ղերար անհանգիստ կ'ընեն : Ես կ'ուզէի ոչ ոքի հանգիս-  
տը ոչ մէկ բանով խանդարել : Բայց եթէ հակառակ  
ամէն բանի ուրիշները անկարող են անհանգիստ չըլ-  
լալ ինձմով, եթէ իմ դոյութիւնս կրնայ որ եւ է կեր-  
պով տանջել իրենց ամբոխացեալ հետաքրքրութիւնն  
ու զգացումները, այդ պարագային ալ, անոնց խեղ-  
ճուկ բամբասանքներուն պիտի ջանամ ընդդիմահանել  
իմ սրտազին ներողամտութիւնս, որուն խառնուած ըլ-  
լար քիչ մը անուշ ժպիտ եւ քիչ մը արգահատանք : Ես  
եւ անոնք : Տակաւին ու միշտ, անկարող եմ լուծել,  
մթին խնդրուածը : Կարելի չէ որ ինքզինքս մոռնամ  
անոնց համար : Ինքզինքը մոռնալ՝ պիտի նշանակէր  
ամէն բան մոռնալ : Ինքզինքը մոռնալ պիտի նշանակէր  
որդեգրուիլ մեծ ու բացարձակ մոռացումին, եւ այնու-  
հետեւ ա՛լ ոչինչ կայ : Պիտի յիշեմ զանոնք, եւ անոնք՝  
իմ հոգիիս թատերաբեմին վրայէն անցնելով պիտի  
խաղան գոյութեան կատակերգութիւնը : Վասն զի՝  
տիեզերքը իմ մէջէս կը պրիսմակուի : Տիեզերքը ինձ-  
մով միայն գոյութիւն ունի : Եւ եթէ ինձմէ դուրս աչ-

խարհը ունի առարկայական անկախ դոյութիւն մը, ի՞նչ նշանակութիւն եւ ինչ շահեկանութիւն կրնար ունենալ անիկա առանց ինծի: Ի՞նչ բանի օգտակար էր իմ քառասային ու անկերպարան՝ անսկէտ իրականութիւնը: Մնացեալը ստութիւն եւ կեղծիք է, կամ ցաւալի պատրանք: Շատ աւելի եսականութիւն գտած եմ հոգիներուն մէջ անոնց՝ որ անեսականութեան պաշտամունքը կը տարփողեն: Որքա՞ն մանաւանդ իրենց եսին իսկ փառաբանութիւնն է «ուրիշ»ներու այդ փառաբանութիւնը: Գիտնան թէ չգիտնան՝ ինչ որ կ'ընեն, խնդիր չէ: Չէ՞ որ բոլոր հոգիները՝ կոչուած են անցաւոր դեր մը խաղալու այս աշխարհին վրայ, այնուհետեւ՝ ա՛լ ոչինչ: Թողէք որ ընեն ինչ որ կրնան: Եւ ասիկա մեծ շնորհ մը չէր:

\*

Բայց ըսէ՛ ինծի, հոգի՛ս, դուն քեզի ըսէ՛, հոգի՛ս, անկե՞ղծ ես այ՛, բոլոր արտայայտումներուդ մէջ, ուր կը փորձես ինքզինքդ ըլլալ, իբր թէ գեղեցկութիւնն ապրելու եւ գեղեցկութիւնն ստեղծելու համար: Կրնա՞ս վստահիլ թէ, քու բոլոր շարժումներուդ մէջ ցուցասիրութեան երանգ մը չկայ, որ դքեզ ծաղրելի պիտի դարձնէր նոյն իսկ քու նկատողութեանդ հանդէպ, լուսաւոր ինքնադիտակցութեան վայրկեանի մը մէջ:

Ի զո՞ւր այս կնճիռը կը փորձեմ լուծել: Անյաղթելի հետաքրքրութիւն մը եւ խորին կասկած մը կը տանջեն զիս: Կը թուի թէ բնա՛ւ չեմ ճանչնար ինքզինքս եւ, դիջումով մը, որ չեմ գիտեր ինչո՛ւ դոյութիւն ունենար մէջս, ատոր մասին թերեւս պիտի հարցուփորձեմ այն հոգին՝ զոր պիտի ճանչնամ զիս ամենէն աւելի

խորապէս ճանչցած ու հասկցած: Ի՞նչ սրտառուչ ու պարզամիտ ունայնասիրութիւն:

✱

Նոյեմբերի տխուր օրուան մը բոլոր պարունակութեան հաշուեյարդարութիւնն է այս: Որքա՞ն հակասութիւններ ըլլալու են հոն: Բայց ես համոզուած եմ թէ, այդ պայմանին տակ միայն կեանքը հնարաւոր է: Աչքերնիս դոցելու ենք հակասութիւններուն, երբ կուզենք ապրիլ: Այս բանը կ'ընենք արդէն երբ կ'ապրինք: Վասն զի չպիտի ուշանանք հասնելու օր մը այն սահմաններուն՝ ուր այլ եւս ոչ մէկ ընդդիմակութիւն, ոչ մէկ հակասութիւն կայ, ուր ոչ լոյս կայ ոչ գիշեր, ուր տիեզերքը բացարձակ տրամաբանութեան մը կտնոններուն համեմատ կը լուծուի իր բոլոր հարցերով ու բոլոր հոգերով:

Մինչեւ այդ սեւ ու վերջնական վայրկեանը, կ'զգամ թէ՛ հոգիիս մէջ մէկը կայ՝ որ անդադար կը մեռնի, ուրիշ մը կայ՝ որ յաւիտեան կ'ուզէ ապրիլ. հոգիիս մէջ մէկը կայ որ կուլայ, տակաւին ուրիշ մը կայ՝ որ կը ժպտի, եւ անոնք բոլորը զատ զատ էակներ են, իմ մէջս միաւորուած, եւ այդ հակասութիւններուն բազադրութիւնն իսկ է իմ հոգիս:

Վերջին պահուն որքան հեղնաժպիտ քաղցրութիւն կայ իմ մէջս: Կ'զգամ թէ ան ինձմէ աւելի հզօր է եւ ես պատրաստ եմ գլուխ ծռել իր օրէնքին վճռականութեան առջեւ:

Ու կը գտնեմ որ՝ աշնան գեղեցկութիւնն ապրիլ ջանալը մաքուր մարզանք մըն է, որ կ'ընայ հոգին ամրացնել: Եւ այս քաղցր օրուան յիշատակը բիւրեղի մը մէջ խտացնելու աշխատութիւնը ազնիւ է ու պատուական:

## Թ Ա Փ Ա Ռ ՈՒ Մ Ն Ե Ր

Ձմեռ է, սարերու խստամբեր ու գաւառին լռին երկայն Ձմեռը, յաւիտենականութեան մը չափ երկա՛յն :

Մահուան Ձմեռուան ձիւնը կը ցանուի ցաւոտ հոգիիս խորը, գրեիչը մատներուս մէջ կը դողայ, մեւանը սառեր է . . . :

Պատուհանիս պղտոր ապակիին ետեւ, վիրաւոր դալկահար ծաղկի մը կը նմանիմ, Գարնան հոտաւէտ կանոյտ օրերուն կրակի կարօտովն ու կարմիր արշալոյսներուն աւլւնոտ յիշողութիւններովը էրած մրկած : Իրիկունը տխուր է կարի եւ գալարուն ձանձրոյթը հեռաւոր սպիտակ հորիզոնին վրայէն՝ թունաւոր օձի սողոսկումներով կ'երկարի ու կը սպրդի հոգիիս մէջ : Եւ անսահման մաքուր ճերմակութիւնը ձիւնին, որ կը թափթփի, ցրուուն ու մեղկ դանդաղութեամբ, անըսկիզբ ու անվերջ անընդմիջական միօրինակութեամբ, ներսս կը բանայ մեւամաղձութեան խորհրդածու ձմեռը, սրտիս խորը լուծիւնը կը պատճառաւորէ, — Մօռիս Մէթէռլինք բանաստեղծին միսթիքական մտերիմ լուծիւնը, կէս լուսաւորութիւններով ու յատակի թանձրօրէն ստուերոտ նշոյլներով սսկեղօծուած :

Այլ եթէ ձիւնը կը տեղայ դուրսը, այլ եթէ անձողոպրելի Ձմեռուան կործանումներուն սպառնալիքը խարխուլ պատուհանը կը բռնաբարէ, եւ ցուրտ քամին՝ մահուան ու ոչնչութեան անկարեկիր երզը կը հաչէ, հէգ աննշան բանաստեղծին վճիտ միամիտ հոգին՝ սեւ կասկածներու սարսափին ենթարկելով, — այլ անոր

սրտին մէջ՝ սիրոյ վերջին ծաղիկը դեռ կեանքով կը բարախէ, ու ծխանին տակ մխացող խարոյկներուն մէջ՝ դեռ կեանքի կայծ մը կը փայլի, լուսթեան ու հսկումի անձնատուր տղին հոգիին մէջ՝ բոցի պատառիկ մը կը պլպլայ, — բանաստեղծին օճախը դեռ կը մխայ... :

Ձիւներուն գոցած սպիտակ արահետներուն մէջ՝ քայլերս մոլորեցան: Անսահման ճերմակութիւնը՝ կը խեղդէ հոգիս: Մոլորումի սարսուռը՝ սիրտս կը սառեցնէ, ու ոտքերս քար կը կտրին: Քայլերուս կշռութիւնը՝ սայթաքումներ ու դանդաչումներ կ'աւրչակեն, եւ հոգիիս խորը անբացատրելի քունի մը, — ո՛հ չըլլա՛յ անզարթոյց քունին, — տարօրինակ հեշտութիւնը կ'զգամ:

— Բարի ազատարար, բռնէ՛ ձեռքէս, գուցէ ինամ, գուցէ սառուցիկ ճերմակը վերջին անկողինս, ցրտին ձիւնը՝ հանգստի վերջին բարձիկս ու վերջին երազիս յաւիտենական վերմակն ու կափարիչն ըլլայ... :

Չմեռ է, դուրսը ցուրտ է, դուրսը ձիւն կայ, դուրսը սառոյց կայ: Մահուան սեւ սպանալիքը կայ դուրսը, ու մխացող խարոյկին վերջին կայծերուն առջեւ, հոգիին մէջ զգալով դեռ կեանքի բոցէ լեզուակի մը դալարումը, փետուրը սառնահար մատներուն մէջ, աննշան քերթողը կը խոկայ: Ներեցէ՛ք իրեն մտացիր երազողի այն շուարուն թափառումները, ձիւնասպիտակ արահետներէն, ինկած, սփիւռ ճերմակ երազներուն վրայէն... :

Իրիկունը կը ծանրանայ տակաւ, ձիւնը կը տեղայ դեռ, ու, պղտոր պատուհանին ետեւ, նայուածքս կը նուաղի: Խորունկ լուսթեան երկա՛յն սեւեռուն վայրկեան մըն ալ, եւ ա՛հ ա գիշեր է:

Պատուհանիս ապակիին ետեւ կծկտած դեռ, էտկար

Բօյական մահադուշակ ազոաւի մը թունաւոր կտուցը կ'զգամ սրտիս մէջ: Մխիթարութիւն մը միայն ունիմ — Զէ՞ մի որ ծխանիս վերեւ կապոյտ ծուխի ջերմ պարոյր մը կը ծփայ դեռ, այս ձիւն ձմառուկին: Հոգիիս խորը՝ Սպասման անձկութիւնը՝ կեանք կուտայ ինծի նորէն, — սպասումը՝ քաղցր վայելքին, սպասումը՝ հանդիսաւոր սօսին: Զիւնեղէն ճամբաներուն մէջ, կոխկուտած սպիտակ երազներուս վրայ, ու Մահուան անդունդին եզերքը, ան է, սպասման ոգին է, որ սառած դողդողադին թոքերս կը բռնէ, ու կ'առաջնորդէ դիս դէպի շուշանաթոյր հորիզոնը, — Երազին սեմին վրայ, — որ միշտ կը լայննայ, որ կը լայննայ յաւիտեան, անսպառելի, անվերջանալի ճերմակ վերջալոյսի մը տեսլական ճաճանչումներուն մէջ:

Ու յանկարծ «տա՛նկ, տա՛նկ» հսկայ ժամացոյցն է որ կը զարնէ դուրսը, ձիւնի յորձանքներուն խորէն, խուլ ու խորունկ: Մտածումներու պարը պտուտք կուտայ եւ կը տարտղնի, իբրեւ թէ, քամիի հոսանք մը ցրուէր դանոնք ցայդաթիթեռներու հոյլի մը նման: Ա՛խ, ո՞ւր էր թէ սփոփարար հառաչանքով մը կարենայի հովին տալ նաեւ բոլոր հոգերը ու բոլոր ցաւերը՝ որ իմ ներսս կը բնակին ...:

Ճրագը կը վառի, խարոյկէն աւելի՛ ուժգնորէն կ'արծարծի, բոցագոյն փայլուն բակ մը կը դձագրուի ճարճատուն խանձողներուն շուրջը եւ Մուսաներու մանկլաւիկը հոգիին խորը քաղցր տաքութիւններ կը զգայ: Ակնարկը ա՛լ ետ առնելու է պատուհանէն, վարագոյրը քաշելու է, ու խարոյկին բոցերուն պէտք է դարձնել՝ խանդավառութեան վարդագոյն վայրկեանի մը մէջ՝ կեանքով ու սիրով շողացող աչքերը:

— Մ'միկ, պատմէ՛ ինծի մէկը այն միամիտ հո-

տաւէտ հէքեաթներէն, որոնց մէջ աղջիկները անկեղծ  
աղուորութիւնը ունին, ուր սէրը դառնութիւն չունի,  
եւ ուր վարդը փուշ չունի: Մա'միկ, պատմէ՛ ինծի ա-  
նոնցմէ հատիկ մը:

Ճրագիւղին տակ մամիկս բուրդ կը մանէ, — իր  
ճակատագրին, իր ցաւերուն, ու իր կեանքին ցաւագին  
անվերջանալի թելը, պիտի ըսէր էմիլ Վէռհարն բա-  
նաստեղծը: Ճրագին անարիւն բոցեղէն լեզուն՝ կը  
սլլալա՛յ կը սլլալա՛յ, ու սենեկին վարագոյրներուն վը-  
րայ՝ մեր երկուքին ստուերները, մեր երկուքին ստուե-  
րանկարները, — ուրիշ մը պիտի ըսէր մեր երկուքին  
ծաղրանկարները, — կը պարեն: Բայց մթնոլորտը մա-  
քուր է, շունչը տաք եւ հոգիները՝ ճրագին բոցէ լեզ-  
ուակին պէս կեանքոտ ու պլպլուն: Հոս՝ խարոյկին առ-  
կայծումները եւ շունչերուն տաքութիւնը բաւական ե-  
ղած են խրճիթին օդը տաքցնելու համար: Եւ բանաս-  
տեղծը չի նախանձիր ձեր սալօններուն արուեստական  
ախտաբոյր տաքութեան:

Մամիկս կը պատմէ, եւ դիւթական հէքեաթը հո-  
գիս կը բուրումնաւէտէ: Երագանքի վարդալից նրբու-  
ղիներու մէջէն կը քալեմ պահ մը:

Կեանքին մէջ՝ դմայլելի կրկներեւոյթներ կան:  
Դիւթական հատուածակողմ մը ունիմ աչքերուս վրայ:  
Ի՛նչ նոր են, ի՛նչ թարմ ու ի՛նչ մաքուր՝ դաշտանկար-  
ներն ու հեռանկարները:

Մամիկիս հէքեաթը սիոփանքի անուշ մրափ մը  
ծանրացուց հոգիիս վրայ: Հէքեաթները մարդը կը  
մխիթարեն երբեմն:

Բազմոցին վրայ թոյլօրէն ընկողմանած, սիկարը՝  
ցաւերուս նման շրթունքներուս վրայ մխալով, հանիիս  
տալով ուշադրութիւնս բոլոր, զինքը այնքա՛ն մօտ գշա-

ցած էի իմ դեռատի սրտիս ու հոգիիս :

Հէքեաթը վերջացաւ ու լռութիւն մը ծանրացաւ, անհնարին ծանրութեամբ լռութիւն մը :

Ու յանկարծ, մտածման ի՞նչ խաղ էր որ խորխորատ մը բացաւ իմ ու ծերունի հանիւս միջեւ :

Սեւ լաջակին ծայրերը գլխին վրայ ամփոփած, մեղրամոմի մաքրութեամբ հիւծուած դէմքը՝ հանդարտ խղճմտանքի մը արտայայտութեան մէջ կաղապարուած, ութսուն ձմեռներու ձիւնը գլխին, Վալատօն նկարչին «ծեր»երուն չափ համակրելի ու սիրուն, հանիս դեռ կը շարունակէ մանեւ, միշտ մանեւ, յաւէտ մանեւ, իր ճակատադրին, իր բախտին, իր ցաւերուն յաւիտենական թելը, պարտասուծի թելը, համակերպութեան անգութ թելը : Անհուն յոգնութիւն մը կայ ոսկրուտ մատներուն վրայ՝ որոնք տարապայման նիհարութեան մը մէջ կը հալին, ու սիրտհատուկ է այն խանդաղատալից խնամքը՝ զոր կը դնէ հանիս՝ իր տառապանքին ու համակերպութեան թելը չփրցնելու մէջ, — այնքա՛ն վախկոտ զգուշութեամբ կը մանէ :

Մինչդեռ իր թուր, թելը խղելու փորձութեան մէջ կը տառապի, ու ինքզինքը կ'ուտէ անազորոյն սանձահարումներու տակ : Ո՞վ քանդեր է իր մէջ աշխարհի իմաստութեան սկզբունքը . ո՞վ սորվեցուցեր է իրեն արգելուած պտուղին կործանարար յետսապահանջութիւնը :

Պոտլէռեան դեւ մը կայ հոգիիս մէջ, որ կը փորձէ զիս ամէն վայրկեան : Տատանում մը կայ գլխիս մէջ՝ որ զիս անդունդին վրայ ճնճղուկի փեթուտած փետուրներու նման կը խաղցնէ :

Ընկճուած կիսամեռ հանիէն՝ մինչեւ ամբարիշտ ու սատանայ թուր ճամբան երկայն է, ճամբան յաւիտենական է :

Ու հիմա կը մեղքնամ հանիւս՝ որ միօրեայ բոյսի մը նման ապրած է ու կը խամբի: Իր մէկ դարը՝ իմ քառօրդ դարիս տասանորդական գիտակցութիւնն ու արժէքը չի կրնար հակակշռել:

Ու հիմա, կը սիրեմ իմ դեւս, որ պիտի օր մը վերջնականապէս հրապուրէ զիս, կը սիրեմ իմ ցաւերս, ապրող ու սիրող մարդու ցաւերս, կը սիրեմ իմ խրոխտեսս, — ճնշուած՝ այլ հպարտ մարդու հաս:

Ու բռնահար միայնութեանս մէջ, խիզախ մտաւորականի լլկանքներու մէջ, գեղացիի վայրագ բնազդներու ու բռնն կիրքերու սանձակոծումին տակ, եթէ չըլլայ կեանքս տարածուն դործունէութեան մը բեղմնաւոր ու առատ կեանքը, պիտի ընեմ զայն ներգործական խորհրդածու լութեան սեւ կեանքը:

Դուրսը հօլը կը փչէ ուժգին, ձիւնը կը տեղայ անդադար: Երկինքին բոլոր սպիտակ երազները, խըլեակները շքեղ կառուցումին, վար կը թափին, բանաստեղծին գլխին վրայ, բանաստեղծին ոտքերուն տակ:


Ուժգին լարումներուն՝ ջղաթափութիւնը յաջորդեր է: Մոլորագին թափառկոտութիւններէն՝ յոգնած է մուսաններուն մատաղատի մանկլաւիկը:

Ու մարած սիկարը, — մարած արդեօք ցաւերն ալ, — չրթունքներուն, իր ուխտին երագին մէջ, չըջուեր պառկեր է ու կը քնանայ:

Իր դարթնումը՝ շքեղ արշալոյսի մը բոցավառութիւններուն պիտի սպասէ: Մի՛ դպչիք իրեն, մեղք է, թո՛ղ քնանայ կազդուրումի անուշ քունը, ու հանին, հակելով ձմեռնային չարագոյժ գիշերուան մէջ, իր ցաւերուն ու իր համակերպութեան անվերջանալի թեղթող մանէ...:

1 Յունուար 1902 «Արեւելեան Մամուլ», էջ 77-81

Imp. Arax - 46, rue Richer, Paris.



Հ Ա Շ Ո Ի Ե Կ Շ Ի Ռ

Մուտք

1 Յունուար 1935 -- 31 Հոկտեմբեր 1936

Ելք

Սնտուկը պատրաստ 1 Յունիլ . 1935ին	392.95	Եր . Օտեանի հատորին մնաց	2095
Նուիրատուութիւն	627	Ա . Յարութիւնեանի տպգր .	2400
Հին հաշիւներէ գանձուած	1052.15	Առաքման ծախս	4495
Գիրքերու վաճառումէն գոյացած	4204.55	Դրոշմ . երբ-եւեկ, հեռաձայն	955.15
Բաժանորդներէ	250	Ծանուցումի (գիրք տրուած)	307.80
		Գրեցական պիտոյք	420
		Քլիշէ, վիմ . տոմս եւ գանազան	38.50
		Սնտուկը պատրաստ 31 Հոկ . 1936ին	95.90
			214.30
	6526.65		6526.65

Հաշուեցնել՝ Վ . ԹԱԳԻՈՐԵԱՆ

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՍՄՆԵՐ

ԾԱՆՈԹ .-- Մեր Հաշուեցնելներն են եղեր 1929-1930ին յորաց . Մ . Տէրպէտերեան, 1930-1934ին Պ . Ռ . Բեդրերեան (այժմ բացակայ Փարիզէն), 1934-1936ին Պ . Վ . Թագուրեան

[ 12-504 ]

A  $\frac{\pi}{53744}$

« ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ »

Մատենաշարէն լոյս տեսած են

Թիւ		Տարեթիւ	Ֆրանք
1.	Ռուբէն Զարդարեան	(1930)	20
2.	Մելիֆոն Կիւրնեան	(1931)	20
3.	Գեղամ Տէր Կարապետեան	(1911)	30
4.	Գեղամ Բարսեղեան	(1931)	20
5.	Արփիար Արփիարեան	(1931)	20
6.	Գրիգոր Զօհրապ	(1932)	20
7.	Տիգրան Զէօկիւրեան	(1933)	20
8.	Օհան Կարօ	(1933)	20
9.	Երուանդ Օտեան	(1935)	20
10.	Արտաշէս Յարութիւնեան	(1937)	20

Մեր կեդրոնական հասցէն է .-

M. BARSAMIAN  
121, Rue Marcadet, Paris

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220053744